



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱՆԵՆՑ ԳՐԱՏԱՆ

2007

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Բ. ՏԱՐԻ (ԻԻՋԻՆ)

ԲԱԶՄԱԹԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՈՒ ՔԱՐՏԷՍՈՎ

ՊԱՏՐԱՍԵՑ

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ծ. ԱՐՁՈՒՄԱՆ

1910

9(47.925)
Բ-31

6325

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏԱՐ 19 AUG 2011

9(47-925)
Բ-31 ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐԳ 24 JAN 2006

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՏՄԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
№ 47

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

1004
1697
1697
X


Բ. ՏԱՐԻ (ՄԻՋԻՆ)

ԲԱԶՄԱԹԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՈՒ ԲԱՐՏԷՍՈՎ



ՊԱՏՐԱՍԵՑ

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՅ
1910

Դասագրքիս Բ. տարուան (միջին) պատրաստութեան
 ժամանակ նոյնութեամբ հետեւած եմ Ա. տարուան դա-
 սաւանդութեանս եղանակին, որ մեծապէս գնահատուե-
 ցաւ մեր ուսուցիչներէն :

Այս Բ. տարուան՝ նախորդին վրայ ունեցած տարբե-
 րութիւնն այն է, որ դէպքերն աւելի ընդլայնուած են
 հոս, և իսկական պատմութիւնը զատուած՝ աւանդակա-
 նէն : Ճիշտ ասոր համար ալ դասագիրքս բաժնուած եմ
 երկու գլխաւոր մասերու . — Ա. Առանդակիս շրջան, և
 Բ. Պատմական շրջան : Առաջին շրջանին մէջ դրած եմ
 այն ամէնը՝ որ մասամբ մեր երանելի մատենագիրներէն
 ոմանց երեւակայութեան ծնունդ են, և մասամբ զուտ
 ազգային աւանդութիւններ . իսկ երկրորդ շրջանին մէջ
 դրած եմ ինչ որ ստոյգ է և վաւերական պատմագիրնե-
 րու կողմէ գրի առնուած :

Գուցէ ոմանք դիտողութիւն ընեն ներկայ դասա-
 գրքիս մէջ բոլոր ճշմարտութիւններն համարձակ կերպով
 ըսելուս, և պատմական յեղաթիւրումներն անվերապահ
 կերպով մատնանիշ ընելուս . բայց այնպիսիները պէտք են
 գիտնալ որ մեր չունեցածով պարծենալն ազգասիրու-
 թիւն չէ, և թէ մանաւանդ մեծ անխղճութիւն է տը-
 ղոց միտքը չարչարել այնպիսի առասպելական դէպքերով
 ու հէքեաթներով՝ որոնք ոչ միայն պատմական արժէք
 մը չունին, այլ և չեն դիմանար քննադատութեան առջեւ :

Հիմակուրնէ կ'ազդարարեմ որ այս մասին աւելի ա-

նորք պիտի գտնուիմ դասագրքիս Գ. (Բարձրագոյն) տարուան մէջ :

Այլևս ժամանակ է մեր վրայէն թոթուելու մուկուանդութեան լուծը, և կեղծ ազգասիրութիւնը փոխարինելու՝ գիտակից ու ճշմարիտ հայրենասիրութեամբ :

* *

Երկու խօսք ալ պէտք կ'ըզամ ըսել դասագրքիս մէջ տեղ տեղ գործածած քննական դրութեանս մասին :

Այս դրութիւնը գործածելուս գլխաւոր պատճառն այն է որ Տոճկաստանի մէջ գոյութիւն չունի ըսելու չափ հազուադիւր են այն ուսուցիչները՝ որոնք հետեւած ըլլան ժամանակէ մը ի վեր անգլի ունեցած պատմական հետազօտութիւններու ու քննական վէճերու . հետեւաբար այն պարագային որ ներկայ դասագրքիս մէջ մասնանկ չընէի մեր պատմութեան մէջ մտած սխալներն ու պատմական շփոթութիւնները, մեր ուսուցիչներն իրենց հին ծանօթութեանց վրայ հիմնուելով «սխալ» պիտի համարէին գրածներս, պղտորելով աշակերտին միտքը : Միւս կողմէ՝ ծնողք և կամ աշակերտք ձեռք անցունելով ուրիշ՝ հին կամ նոր՝ հեղինակներու կողմէ գրուած Ազգային պատմութեան դասագրքեր, և իմքնիս մէջ տեսնելով ահագին տարբերութիւն մը, պիտի վարանէին ընդունելու այն բոլոր ճշմարտութիւնները որոնք հիմնուած են պատմական փաստերու վրայ :

Ահա այս պատճառով է որ կարեւոր համարեցի գլխաւոր շեղումներու առջեւ դնել նաև փաստերը :

Պարիս, 30 Մարտ 1910

Կ. Յ. Բ.

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(ՄԻՋԻՆ)

Ա.

Ա.Ի.Ա.Ն.Դ.Ա.Կ.Ա.Ն ՇՐՋԱՆ

Ա. ԴԱՍ. — ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

1. Մեր ազգին պատմութիւնն իրարու մէջ ձուլուած երկու գլխաւոր մասերէ կը բաղկանայ, որոնց մին կը ներկայացնէ Հայոց Առանդակական շրջանը, իսկ միւսը՝ Պատմական շրջանը :

2. Առանդակական կը կոչուի այն շրջանը, որուն մէջ պատմուած դէպքերն իրական չեն, այլ մեր նախնիքներէն աւանդաբար մեզ հասած վէպեր են. իսկ Պատմական կը կոչուի այն շրջանը, որուն մէջ ամէն եղելութիւն ստոյգ և փաստերու վրայ հաստատուած կը ներկայանայ մեր առջեւ :

Պսևսած. — ՀԱՅԿԱԶՍԱՆՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս ամէն ին ազգի՝ Հայոց նախնական պատմութիւնն ալ մթութեան մէջ կորսուած է, և մեր մէջ Հայկազանց Հարստութիւնն անունով ծանօթ չըջանը, որ կը սկսի Հայկէ և կը վերջանայ Վահէով, ամբողջովին խախտու հիմերու վրայ հաստատուած է:



ՈՐԻՈՆ = ՀԱՅԿ

Երբնորու մէջ անձնուորելով միացուցած է՝ Հայկական ուղղամտութեան, աստուածային երկիւղածութեան, առկուն բնաւորութեան ու ազատութեան գաղափարները: Ուստի պէտք է որ մենք ալ գլխաւոր գծերով ուսումնասիրենք մեր ազգային նոյն իսկ աւանդական պատմութիւնը, որպէս զի ազնուացնենք մեր սիրտն ու զգացումները:

Հայկ նահապետը՝ որմէ իբր թէ սերած ենք մենք և որուն անունով Հայ կոչուած, դիցաբանական անձնաւորութիւն մըն է, և ինն Յոյներուն ծանօթ Ուրիոն համաստեղութեան մարմնացումը:

Այսպէս դիցաբանական ծագում ունին նաև Յոյները ու Հռոմայեցիները:

Բայց դիցաբանական ըլլալով հանդերձ, ազգային աւանդութիւնը Հայկի և անոր նման ուրիշ նահապետներու կամ թագաւորներու մէջ անձնուորելով միացուցած է՝ Հայկական ուղղամտութեան, աստուածային երկիւղածութեան, առկուն բնաւորութեան ու ազատութեան գաղափարները:

Հայկազանց Հարստութեան գլխաւոր պատմիչն եղած է Մովսէս Խորենացի, որ՝ վերջին քննութիւններու համեմատ՝ ապրած է եօթներորդ դարուն վերջերը, և իր գիրքը գրած է իբր թէ Սահակ Բագրատունի իշխանին խնդրանքին վրայ, մեծ մասամբ քաղելով Մար Իբաս Կասինաց անուն Գաղղէացիի մը պատմական տւարքումներէն, ինչպէս ինք կըսէ, թէևս ոմանք Մար Իբասի նոյն իսկ գոյութիւնը տարակոյսի տակ կը դնեն, ըսելով թէ Մովսէս Խորենացի և Մար Իբաս միեւնոյն անձերն են:

Հարցարան. — Մեր ազգին պատմութիւնը քանի՞ մասերէ կը բաղկանայ: Որո՞նք են անոնք: — 2. Ո՞րն է Աւանդական շրջանը. ո՞րն է Պատմականը: = Մեր ազգին սկզբնաւորութիւնն ի՞նչպէս է: Ո՞վ է Մովսէս Խորենացին:

Բ. ԴԱՍ. — Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

3. Հայաստան կը կոչուի այն երկիրը՝ որուն մէջ ծնած և ապրած են մեր նախնիքները, և որ երկար ժամանակ իր առանձին իշխանութիւնն ունեցած է, բայց հիմայ բաժնուած է պարսկական, ռուսական և տաճկական պետութիւններու միջև:

4. Հայաստանի ընդհանուր տարածութիւնն եղած է՝ Մեծ ու Փոքր Հայքը միասին առնելով՝ 150,000 քառակուսի մղոն. իսկ բնակիչներուն թիւը հասած է մինչև 30 միլիոնի, սակայն՝ դժբախտ պարագաներու բերումով՝ զուտ Հայոց թիւն այսօր հազիւ թէ երեք միլիոն կը հաշուուի:

Պատմած. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի ամենէն ընդարձակ ժամանակուան սահմանն էր. — հիւսիսէն՝ Պոնտոս, Վրաստան և Աղուանից երկիրը, արևելքէն՝ Կասպից ծով և Պարսկաստան, հարաւէն՝ Ասորիստան և Միջագետք (Ռուբինեանց հարբատութեան ժամանակ՝ Միջերկրական ծով), իսկ արևմուտքէն՝ Ալլևս գետ: Այս սահմաններն այսպէս չեն մնացած միշտ, այլ արտաքին յարձակումներու նտեւանքով մեծամեծ փոփոխութիւններ կրած են:

Հայաստան իր ստորջնութիւնով չորս գլխաւոր մասերու կը բաժնուի. 1. Մեծ Հայք, 2. Փոքր Հայք, 3. Կիլիկիա և 4. Հայոց Միջագետք. սակայն իսկապէս Հայաստան կոչուած երկիրն էր՝ Մեծ Հայք, որ կը բաժնուէր տանընթաց նահանգներու. — 1. Բարձր Հայք, 2. Չորրորդ Հայք, 3. Աղձնիք, 4. Տուրուբերան, 5. Մոկք, 6. Կորձէք, 7. Պարսկահայք, 8. Վասպուրական, 9. Սիւնիք, 10. Արցախ, 11. Փայտակարան, 12. Ուտի, 13. Գուգարք, 14. Տայք և 15. Այրարատ:

Հայաստանի գլխաւոր լեռներն են. — Այրարատեան նահանգին մէջ՝ Արարատ կամ Մալիս, որ Հայոց ամենէն բարձր լեռն է. Արագած, Մասիսի համեմատութեամբ երկրորդական լեռ մըն է: Տուրուբերան և Չորրորդ Հայք նահանգներուն մէջ կը տարածուի Տարրախ լեռնաշղթան: Մեծ Հայոց հիւսիսային սահմանին վրայ՝ Կովխստեան լեռները, որոնք Սև ծովէն մինչև Կասպից ծով կերկարին: Իսկ Պարսկաստան լեռները Տայոց նահանգէն կը սկսին և կը տարածուին մինչև Փոքր Հայք:

Նշանաւոր գետերն են. — Արաքս կամ Երաւիս, որ Հայաստանի ամենէն գլխաւոր նահանգներէն կուգայ

կանցնի: Հայոց հնագոյն քաղաքներն ու յիշատակարանները այս նուիրական գետին ափերուն վրայ շինուած են: Կուր, որուն հետ Փայտակարան նահանգին մէջ կը միանայ Արաքս, և Կասպից ծով կը թափի: Ճորոխ, որ Բարձր Հայոց լեռներէն կը բղխի և կը թափի Սև ծով. նոյնպէս Բարձր Հայոց լեռներէն կը բղխի Եփրատ, որուն մէկ ճիւղն ալ կուգայ Այրարատեան նահանգէն. իսկ Իրաք Արապիի մէջ Եփրատին կը միանայ Տիգրիս, որ կուգայ Վասպուրական նահանգէն:

Հայաստանի մէջ կրեք մեծ լիճ կայ, մեր պատմիչներու կողմէ «ծով» կոչուած, այսինքն՝ Վանայ կամ Բզղունեաց ծով, Գեղաւնայ ծով, և Կապուսան ծով կամ Ուրմիայի լիճ:

Մշակութեան կողմէ Հայաստան խիստ բարեբեր եղած է միշտ: Կը գտնուին տեսակ տեսակ կենդանիներ ևս: Իսկ հանքերէն ծանօթ են՝ կապար, պղինձ, երկաթ, արծաթ, ոսկի, հանքածուխ, նաւթ, ևն.:

Հարցարան.—3. Մեր նախնիքներու բնակած երկիրն ի՞նչ կը կոչուի: Որո՞նց բաժին ինկած է:—4. Ի՞նչ էին Հայաստանի տարածու թիւնն ու բնակիչներուն թիւը:—Ի՞նչ գիտենք Հայաստանի աշխարհագրութեան մասին:

Գ. ԴԱՍ. — ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

5. Աւանդութեան նայելով՝ մեր ազգին նախահայրն եղած է Հայկ, որ Բարեբունի աշտարակաշինութենէն ետք Բէլ անունով բռնակալի մը չհնազանդելու համար եկած հաստատուած է Տուրուբերանի մէջ և հոն բնակութեան համար Հայկաշէն անունով գիւղ մը հիմնած:

6. Առանց հնազանդութիւն յայտնելու Հայկի հեռանալը՝ Բէլի ծանր եկած է. ուստի Բէլ բազ-



ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

մաթիւ զօրքերով Հայկի ետեւէն գալցած ու ա-
նոր հետ պատերազմի բռնուած է, բայց Հայկ
նետի մը հարուածով գետին փռած է զայն :

Պատմած. — ՀԱՅԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երբ Բարեւրնի աշտարակաշինութիւնն անյաջող կեր-
պով վերջացաւ, բռնակալութիւնով այն կողմերու տէր
դարձած Բէլ անուշով ցեղապետ մը ուղեց որ Հայոց
ցեղապետն ալ՝ Հայկ՝ իրեն հնազանդի. բայց Հայկ և իր
մարդիկը գերութեան մէջ ապրիլ չուզելով՝ դէպի հիւ-
սիս դադիցցին, և հասան ետքէն Տուրուբերան կոչուած
նահանգը. հոն իրենց բնակութեան համար գիւղ մը հիւ-
նցին, և անունը դրին Հայկաշէն. իսկ շրջակայ բնակիչ-
ներն ալ Հայկ իրեն հնազանդեցնելով՝ գաւառին անունը
դրաւ Հայք:

Բէլ այս ամէնն իմանալով զայրացաւ. բայց իր որ-
դիներէն մէկը զրկեց Հայկի քով, և ջանաց համոզել
զայն որպէս զի երթայ հնազանդի իրեն, և խաղաղ
կերպով ապրին միասին: Հայկ խիստ և մերժողական պա-
տասխան տալով ետ ճամբեց միջնորդը: Հայկի այս ըն-
թացքը Բէլի ջղերուն դպաւ, և զայն պատժելու համար
մեծամեծ պատրաստութիւններով ճամբայ ելաւ հասաւ
Վանայ ծովին մօտերը: Հայկ Բէլի մօտենալն իմանալով,
ինք ալ իր մարդիկը ժողվեց, և գնաց Բէլի դէմ: Պա-
տերազմն սկսաւ: Բէլ նեղը մնալով՝ պատերազմի դաշտէն
փախչիլ կ'ուզէր, բայց Հայկ վազեց հասաւ ետեւէն, լա-
րեց իր աղեղը, և նետն այնպիսի ուժով նետեց, որ Բէլի
կուրծքին զրահները ծակելով միւս կողմէն դուրս հանեց,
գետին գլորելով ամբարտաւան բռնակալը:

Պատերազմէն ետք Հայկ այն տեղը քաղաք մը շի-
նեց, որուն անունը դրաւ Հայք, իսկ գաւառը կոչուեցաւ
Հայոց ձոր. Բէլի մեռած տեղն ալ Գերեզմանք անուանեց:
Հայկ երկար տարիներ ապրելէ վերջ երբ անկողին

ինկաւ, ժողովուրդին կառավարութիւնն իր Արմենակ
դաւկին յանձնելով խաղաղութեամբ հողին աւանդեց:

Հարցարան.—5. Ո՞վ եղած է մեր ազգին նախահայրը: — 6.
Ինչո՞ւ պատերազմած է Բէլի հետ:—Ի՞նչ են այս պատերազմին
մանրամասնութիւնները:

Դ. ԴԱՍ. — Ա. ԲԱՄ

7. Հայկ նահապետի սերունդէն Արամ անու-
նով մէկն իր ցոյց տուած քաջութիւններով ան-
ուանի եղած էր թէ՛ Հայ և թէ՛ դրացի ցեղե-
րուն մէջ. ուստի ամէնուն հաւանութիւնով իրենց
վրայ իշխան և ցեղապետ կարգուեցաւ:

8. Որովհետեւ երկրին ընակիչները շատ կը
նեղուէին օտարներու յարձակումներէն, Արամ իր
մարդիկը ժողկելով արշաւեց անոնց վրայ, յաղ-
թեց ամէնուն, և իր երկրին սահմանները մինչեւ
կապադովկիայի կեսարիա քաղաքն ընդարձակեց:

Պատմած. — Ա. ԲԱՄԻ ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարայ Նիւքար իշխանն երկու տարիէ ի վեր գրա-
ւած էր Հայոց երկրին մէկ մասը, և Հայ հողատէրերէն
անիրաւ կերպով հարկ կը ստանար: Արամ՝ իշխանու-
թեան գլուխ անցնելուն՝ առաջին գործն եղաւ իր հայրե-
նակիցներն ազատել Նիւքարի բռնակալութենէն. ուստի
50,000 հողիով քալեց անոր վրայ, գերի բռնեց զայն,

և Արմաւիր տանելով՝ աշտարակին ծայրը դամեղ տուաւ
ճակատէն. անկէ գրաւած երկիրն ալ յանձնեց Սիւնեաց
ցեղին: Յետոյ իր բանակն ուղղեց Հայաստանի հարաւ-



Ա Բ Ա Մ

ւային սահմանները գրաւեց Ասորեստանի Բարչամ իշխա-
նին դէմ, որ Արամի գորքերէն մինչև Կորդուաց լեռնե-

րէն անդին հալածուելով, Հայ զինուորի մը կողմէ սպաննուեցաւ, որով Հայերը տիրեցին Ասորեստանի մէկ մասին, զոր Արամ յանձնեց կազմուի ցեղին :

Այս երկու գլխաւոր թշնամիներէն Հայաստանը մաքրելէ ետք, Արամ՝ սիրտ առած՝ այս անգամ ուշադրութիւնն իր երկրին արեւմտեան սահմաններուն վրայ դարձուց: Հոն Պոնտոսէ մինչև Միջերկրական ծով տարածուող հողերուն վրայ բռնի կերպով տիրացած Պայտակի իշխանին հետ պատերազմի բռնուեցաւ, և զայն հալածեց փախուց Միջերկրականի կղզիներէն մէկը, անոր երկրին տիրեց, և հոն Մշակ անուանով մէկը կառավարիչ դրաւ, սպսպրելով որ բոլորն ալ հայերէն խօսին: Մշակ ամուր քաղաք մը շինեց հոն և անունը դրաւ Մշակի, բայց ժողովուրդը Յոյն ըլլալուն՝ չէր կրնար «Մշակ» արտասանել, այլ կ'ըտէր Մազակ (=Մաժաֆ), որ ետքէն կոչուեցաւ Կեսարիա. իսկ աւելի նոր ժամանակները՝ Գայսէրի:

Արամի գործած քաջութիւններուն համար օտարները մեր ազգը կոչած են «Արամեան» կամ Արմեկի, և կամ Էրմեկի, ինչպէս որ հայ աւանդութիւնը կ'ըսէ:

Հարցարան.—7. Ո՞վ էր Արամ:—8. Ի՞նչ գործեր տեսաւ:— Որո՞նք են Արամի յաղթութիւնները: Օտարները ի՞նչ անուն կուտան մեզ:

րազմի կ'երթար: Պարոյր՝ Ասորեստանի պետութիւնը կործանելով՝ հայկական բոլորովին անկախ իշխանութիւն մը կազմելու փափաքով՝ զնաց միացաւ Կիաքսարի հետ, անկէ նախապէս խօսք առնելով որ յաղթութենէ ետք Հայոց թագաւոր պսակուի: Այս առաջարկը սիրով ընդունուեցաւ Կիաքսարէն: Ասոնց կը միանար նաև Բաբելացւոց Նաբուպոլտասար իշխանը: Պատերազմին արդիւնքն այն եղաւ որ Ասորեստանի մայրաքաղաքը կործանեցաւ և պետութիւնը ջնջուեցաւ. Պարոյր ալ Կիաքսարի կողմէ արքայական թագ ընդունելով՝ Քրիստոսէ առաջ 608 թուականին Հայոց թագաւոր պսակուեցաւ: Ասիկա եղաւ, ըստ աւանդութեան, Հայոց առաջին թագաւորը:

Ասկէ ետք Հայաստան դաշնակից եղաւ Մարոց և Բարելացւոց, մինչև Տիգրան Երուանդեանի ժամանակ:

Հարցարան. — 11. Արայի մեռնելէն ետք ի՞նչ եղաւ Հայաստանի վիճակը: — 12. Պարոյր ի՞նչ գործեր տեսաւ: — Հայոց առաջին թագաւորն ո՞վ եղաւ, և ի՞նչպէս ծնուք բերուեցաւ թագաւորութիւնը: Որո՞նց հետ դաշնակից մ'նսցին Հայերը:

Է. ԴԱՍ. — ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

13. Պարոյրէ ետք իրարու յաջորդեցին մի քանի աննշան թագաւորներ, որոնց վերջինն եղաւ Երուանդ. արդ՝ Տիգրան այս Երուանդին տղան էր, որ մեծ անուն հանեց և ամէն կողմէ պատիւ դտաւ:

14. Տիգրան ամենէն առաջ Հայաստանի թըլ-

նամինիրուն դէմ դնելու համար հայկական բանակը կազմակերպեց, յետոյ ոչ միայն երկրին շէննարուն ու հարստանարուն ուժ տուաւ, այլ և Հայաստանի սահմաններն ընդարձակեց և փոքր Ասիայի Յոյներէն մէկ մասին վրայ տիրեց:

Պատկած. — ՏԻԳՐԱՆ՝ ԱԺԴԱՆԱԿԻ ԴԷՄ

Աղգային աւանդութեան նայելով՝ Մարտի Աժդահակ թագաւորը շատ կը նախանձէր Տիգրանի ու Պարսից թագաւոր Կիւրոսի միջեւ հաստատուած բարեկամութեան վրայ, մանաւանդ սաստիկ կը վախնար Կիւրոսէ, կասկածելով որ անիկա օր մը Տիգրանի օգնութեամբ կու գայ իր երկիրը կը գրաւէ: Աժդահակ Տիգրանի վրայ սոսկալի երազ մըն ալ տեսնելով՝ բոլորովին վախի մէջ ինկաւ: Ուստի՝ Կիւրոսն ու Տիգրանն իրարմէ բաժնելու համար՝ Տիգրանը մէջտեղէն վերցնելու սև խորհուրդը յղացաւ, և անոր հասնելու նպատակով ամուսնացաւ Տիգրանի քրոջը՝ Տիգրանուհիին հետ: Ամուսնութենէ ետք Աժդահակ իր նպատակն յայանց Տիգրանուհիին, և սպառնալիքներով խօսք տուաւ անկէ, որ Տիգրանուհի ինքն իսկ կատարէ այս ոճիրը: Բայց Տիգրանուհի գաղտնի կերպով ամէն բան իմաց տուաւ իր եղբօր: Աժդահակ իր ծրագրին յաջողութեան վրայ վստահ՝ Տիգրանին մարդ ղրկեց և տեղ մը ժամադրութիւն տուաւ: Բայց Տիգրան ասոր գաղտնիքը զիանալուն՝ բազմաթիւ զօրքերով Աժդահակի բանակին վրայ քալեց, և՛ յարմար մէկ վայրկենին՝ իր ձեռքովն իսկ զարկաւ սպաննեց թշուառականը: Օտար պատմիչներն Աժդահակի մասին բոլորովին

Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ



Թ. ԴԱՍ. — ՀԱՅԿԱԶԱՆՅ ԱՆԿՈՒՄԸ

17. Աւանդութեան նայելով՝ Վահագնի յաջորդեցին իրարու ետեւէ և որդիէ որդի մի քանի աննշան թագաւորներ, որոնք սակայն աւելի շահագններ էին քան թէ իսկական թագաւորներ, վասն զի Կիւրոսի յաղթութեամբ՝ Հայաստան պարսկական նահանգ դարձած էր:

18. Իսկ Աղեքսանդր Մակեդոնացիի արշաւանքին հետեւանքով երբ Պարսկաստանի թագաւորութիւնը վերցաւ (Քրիստոսէ առաջ 330 թրււին), Հայաստան ալ Աղեքսանդրի իշխանութեան տակ անցնելով՝ նախ մակեդոնական և յետոյ Սելեւկեան կուսակալներու կողմէ կառավարուեցաւ, մինչեւ որ Հայոց Արտաշիսեան Հարսուրիւնն հաստատուեցաւ:

Պատկած. — ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Անգամ մը որ Հայերը Կիւրոսի յաղթութեամբ Պարսկական իշխանութեան տակ մտած էին, ինչպէս Տիգրանի

բաժնին մէջ տեսանք, հաղիւ թէ կրնային անմիջապէս շարժիլ և անկախութեան դիմելու փորձեր ընել: Տարիներ յետոյ միայն կատարուեցան այդ փորձերը, բայց անյաջող անցան, և իրրև փորձ մնացին. ուստի Հայերը՝ վերջնականապէս ընկճուելով Դարեհէն՝ Պարսից իշխանութեան տակ մնացին, մինչև որ Աղեքսանդր Մեծ իր աճազին բանակով Ասիայի մեծագոյն մասը՝ գրաւեց և տիրեց պարսկական ծովածաւալ պետութեան, որով Հայաստան ալ անցաւ մակեդոնական իշխանութեան տակ (330 Ք. Ա.): Բայց Աղեքսանդրի մեռնելէն էտք երբ իր ընդարձակ պետութիւնը բաժնուեցաւ, Սելեկեաններու բաժին ինկաւ Հայաստան:

Եւ սակայն կերեւայ թէ Հայերն երկար ժամանակ չմնացին Սելեկեաններու իշխանութեան տակ. վասն զի օտար պատմիչներէ Դիոդորոս Սիկիլիացի՝ Արդուատ անունով Հայոց թագաւոր մը կը յիշէ, որ սպրած է Սելեկոս Նիկատորի ժամանակ (312—280 Ք. Ա.). նոյնպէս Քրիստոսէ առաջ 230ին սպրած՝ Առշաւ անունով Ծոփաց մէկ հայ թագաւորին դրամները կան մէջտեղ: Ասոնք կը հաստատեն, թէ Հայերը՝ Սելեկեաններու լուծէն դէթ մասնակի կերպով ազատուելով՝ առ նուազն կիսանկախ թագաւորութիւն մը հաստատած էին: Իսկ Սելեկեաններու Անտիոքոս Գ. թագաւորն երբ Հռոմայեցիներէ պարտութիւն կրեց, Մեծ Հայոց Արտաշէս իշխանը Հռոմայեցիներու հետ դաշինք դրաւ, և ինքզինքն անկախ թագաւոր հռչակեց, որով հաստատուեցաւ Արտաշեսեան հարստութիւնը (190 Ք. Ա.):

Հարցարան. — 17. Որո՞նք յաջորդեցին Վահագնի: — 18. Յորո՞նց ազդեցութեան տակ անցաւ Հայաստան: = Ի՞նչպէս հաստատուեցաւ Արտաշեսեան հարստութիւնը:

ցարձակ կերպով կըսենք թէ այստեղ յիշուած Արտաշէս Ա. թագաւորը՝ մեր պատմութեան մէջ ծանօթ «Արտաշէս Աշխարհակալ» կամ «Արտաշէս Ա.» թագաւորին հետ միևնոյն անձնաւորութիւնն է. իսկ Արտաւազդի վերայ պատմուածներն աւելուած են մեր պատմահայր Մ. Խորենացիի կողմէ յիշուած Արտաշէս Բ. ի զաւկին՝ Արտաւազդի վրայ պատմուած զրոյցներէն: Այս չփոթութիւնն անկէ՛ յառաջ եկած է, որ Արտաքսիաս-Արտաշէսի ու իր զաւկին՝ Արտաւազդի գործերը վերագրուած են թէ՛ Արտաշէս Ա. անունով ծանօթ երևակայական «Արտաշէս Աշխարհակալ» ի և թէ՛ զոյութիւն չունեցող Արտաշէս Բ. ի ու զաւկին՝ Արտաւազդի, որոնք այս դասին մէջ յիշուած Արտաքսիասին ու Արտաւազդին հետ միևնոյն անձերն են:

Հարցարան. — 19. Ո՞ր է Արտաշէս Աշխարհակալ: — 20. Ո՞ր յաջորդեց Արտաշէսի: = Կրնո՞ք պատմել Արտաշէսի գործերը: Արտաշէսի եւ Արտաւազդի շուրջ պատմական ի՞նչ շփոթութիւններ կան:

ԺԱ. ԴԱՍ. — ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

21. Արտաքսիասի սերնդէն Տիգրան Գրիստոսէ առաջ 94 թուին արքայական գահը բարձրանալով՝ դրացի երկիրները նուաճեց, և Հայաստանի սահմանները մեծապէս ընդարձակելով՝ «Արքայից Արքայ» տիտղոսն առաւ:

22. Պոնտոսի Միհրդատ Մեծ թագաւորը, Տիգրանի համբաւը լսելով, Հռոմայացիներու դէմ

կռուելու համար իրեն օգնութեան կանչեց Տիգրանը, և իր Կլէոպատրա աղջիկն անոր կնութեան տալով՝ իրեն ազգական և միանգամայն դաշնակից ըրաւ զայն:



ՏԻԳՐԱՆ ՄԵՄ-ի դրամը

Պատկեր — Տ Ի Գ Ր Ա Ն Ա .

Տիգրան Մեծ՝ Արշակունեաց ցեղէ նկատուած է մեր պատմիչներէն, և ընդունուած՝ իրրև «երկրորդ» Տիգրան, Ափղանակի դէմ պատերազմող աւանդական Տիգրան Երուսաղեմանն ընդունելով «Տիգրան Ա.»: Բայց Տիգրան մեծ կը պատկանի Արտաշեսեան հարստութեան, սերած ըլլալով Արտաքսիասի ցեղէն: Ասկէ զատ՝ Տիգրանի ժամանակ Հայ-Արշակունեաց հարստութիւնն հաստատուած չէր դեռ:

Տիգրան Մեծ, ըլլալով պատմական շրջանի անձնաւորութիւն, աւելի բանական է Տիգրան Ա. կոչել զայն, առանց նկատողութեան առնելու միւս՝ աւանդական շըր-

ջանի Տիգրանը, որ իսկական թագաւոր չէր այլ նահապետ կամ ցեղապետ: Մեր պատմիչները Տիգրան Մեծի գործերն ու քաջութիւնները գովաբանող ազգային երգերը՝ սխալմամբ Տիգրան Երուսաղեմանի վերագրած են, անուններու նայութենէն շփոթելով:

Տիգրան Մեծ նախ Ծոփաց թագաւոր Արտամէսը գահընկէց ըրաւ և Ծոփքը Մեծ Հայոց հետ միացուց. յետոյ՝ Հայաստանի վրայ արշաւող Յոյներու կամ աւելի ճիշտը՝ Հռոմայեցիներու լաւ դաս մը տալով, զանոնք դուրս քշեց իր երկրէն: Ասոնց վրայ՝ Տիգրանի անունը սկսաւ աճ ու սարսափ ձգել ո՛չ միայն դրացի ազգերու, այլ և հեռաւոր երկիրներու մէջ:

Պոնտոսի Միհրդատ Եւպատոր կամ Միհրդատ Մեծ թագաւորը շատոնց միտքը դրած էր յարձակիլ Հռոմայեցիներու վրայ, բայց իր առանձին ուժին վրայ չէր կրնար վստահիլ. ուստի՝ երբ Տիգրանի համբաւն իմացաւ, այնպիսի զօրաւոր թագաւորի մը աջակցութիւնը վայելելու համար իր Կլէոպատրա աղջիկն անոր կնութեան տուաւ: Եւ իսկապէս ալ Միհրդատ Տիգրանի օգնութեան շնորհիւ մէկ կողմէ իր երկրին սահմաններն ընդարձակեց, և միւս կողմէ Հռոմայեցիներու դէմ պատերազմ հրատարակեց: Բայց մի քանի կարիւր յաղթութիւններէ ետք Միհրդատ Հռոմայեցիներէն հալածուելով փախաւ ապրտտանեցաւ Հայաստան, իր փեսին քով: Ասոր վրայ Հռոմայեցիները դիմեցին Տիգրանի, առաջարկելով իրենց յանձնել Միհրդատը: Եւ որովհետեւ Տիգրան իրիստ կերպով մերժեց այս դիմումը, Հռոմայեցիք Լուկուլլոս զօրավարին առաջնորդութեամբ Հայոց վրայ պատերազմի եկան, Հայաստանի բազմաթիւ քաղաքներն ու աւանները գրաւելէ ետք՝ Մեծն Տիգրանի չինած ճոխ ու փառաւոր քաղաքը՝ Տիգրանակերտը՝ պաշարեցին, և ներսի բնակիչներուն

մատնութեամբ առին զայն, բայց չկրցան յաղթել Տիգրանի, որ Միհրդատի և ուրիշ զաշնակիցներու օգնութեամբ՝ գրաւուած երկիրները նորէն ևս առաւ :

Տիգրանի և Հռոմայեցիներու միջև ևս կատարուած այս պատերազմն եօթը տարի տևեց :

Հարցարան. — 21. Ո՞վ էր Տիգրան և ի՞նչ ըրաւ : — 22. Որի՞ հետ զաշնակցեցաւ : = Ի՞նչ անճշտութիւններ կան Տիգրանի մասին: Ինչ՞ո՞ւ պատերազմեցաւ Հռոմայեցիներու հետ :

ԺԲ. ԴԱՍ. — ՏԻԳՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

23. Տիգրան Մեծի Ժամանակ Հայաստան իր զօրութեան գազաթնակէտն հասած էր, և երկրին ընդարձակութիւնը տարածուած էր Կասպից ծովէն մինչև Միջերկրական ծով. իսկ զօրքերու թիւը կը հասնէր կէս միլիոնի: Օտար պատմիչներու համեմատ՝ Հայոց ամենէն մեծ թագաւորն եղած է Տիգրան:

24. Տիգրան իր անունը փառաւորերու համար Հայաստանի Աղձնիք նահանգին մէջ մեծ և հարուստ քաղաք մը հիմնեց, որուն անունը դրաւ՝ Տիգրանակերտ: Ասոր մէջ բնակեցուց Հռոմայեցուց երկրէն դրաւած տասներկու քաղաքներու յոյն բնակիչները, որպէս զի արեւմտեան քաղաքակրթութիւնը տարածէ իր երկրին մէջ: Նոյնպէս իրեն հպատակեցուցած միւս երկիրներէն ալ բազ-

մաթիւ բնակիչներ գաղթեցուց Հայաստանի զանազան կողմերը:



ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Պատմած. — ՏԻԳՐԱՆԻ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԵՐԸ

Տիգրան իր մանկութեան ժամանակ գերի և պատանդ տարուած էր Պարթևներու քով. իսկ երբ խնայանա եղաւ, Հայաստանէն եօթանասուներեք տարով Պարսից կամ Պարթևներու, աղտոտ արձակուեցաւ և

գնաց տիրացաւ իրեն ժառանգ մնացած Հայոց թագաւորութեան. բայց ետքէն ոչ միայն տուած հովիւաներն ետ առաւ, այլ նաև Պարթեւաստանի մեծ մասն աւերեց և բնակիչներն իրեն հնազանդեցուց. այսպէս՝ Ատորպատականի, Մարաստանի, Աբխազների ու Կորդուաց տիրապետեց, և յետոյ զէնքերն Ատորուց երկիրը դարձրնելով՝ Սելեւկեան թագաւորութիւնն ու Փիւնիկէն նուաճեց: Այս յաղթութիւններէն ետք Սելեւկացիք իրենց թագաւոր հռչակեցին Տիգրանը, որուն անունով ու պատկերով դրամներ տպուեցան Անտիոքի մէջ, և Արտաշատէն ու Տիգրանակերտէն յետոյ՝ իրեն երրորդ մայրաքաղաք ընտրեց Անտիոքը: Տիգրան տաննոււթ տարի խաղաղութեամբ թագաւորեց Սելեւկեաններու վրայ, մինչև որ Հռոմայեցիք եկան տիրեցին Սելեւկիայի:

Տիգրանի մեծութիւնը ցոյց տալու համար՝ օտար պատմիչներէն Պլուտարքոս կ'ըսէ թէ Տիգրան երբ կառքով և կամ ձիով պտոյտի կ'ելլէր, իր երկու կողմերէն քալելով իրեն կը հետեւէին գերի բռնուած թագաւորներ. իսկ երբ դահի վրայ կը բազմէր, գերի թագաւորներն իր առջեւ բարեւ բռնած կը կենային: Ասիկա խղճի դէմ և հակամարդկային ընթացք մըն է թէև, բայց այն աստիճան մեծապաղթ թագաւորներու յատուկ սովորութեան կը հետեւէր Տիգրան, որով այս տեսակ բարբարոսութիւններ գործողներուն առաջինը չէր:

Տիգրանի նշանաւոր գործերէն յիշենք նաև իր անունը կրող Տիգրանակերտ քաղաքին շինութիւնը, որուն բարգաւաճման և արեւմտեան քաղաքակրթութեան Հայաստանի մէջ տարածման համար՝ Հռոմայեցիներէն գրաւած տասներկու քաղաքներու յոյն բնակիչներն հոն տեղափոխեց:

Հարցարան. — 23. Ի՞նչ վիճակի մէջ էր Հայաստան Տիգրան Մեծի ժամանակ. — 24. Ո՞ր քաղաքը ձիմեց Տիգրան եւ ի՞նչ ժողովուրդ բնակեցուց հոն: — Ի՞նչ են Տիգրանի միւս գործերը:

ԺԳ. ԴԱՍ. — ԱՐՏԱՒԱՋԻ Բ.

25. Տիգրանի ծերութեան ժամանակ իր Արտաւազդ որդին իրեն օգնական և երկու տարիալ դահակից եղած էր արդէն. իսկ երբ Տիգրան մեռաւ, Արտաւազդ Բ. բոլորովին իր ձեռքին մէջ առաւ երկրին իշխանութիւնը, որ Հռոմայեցիներու և Պարթեւներու սպառնալիքներուն տակ՝ ալիքներէ քշուած նաւի մը պէս մէյ մը մէկ կողմ ու մէյ մը միւս կողմ կը դառնար:

26. Բայց Արտաւազդի երկդիմի քաղաքակա՛նութեան երեսէն երկիրը տուժեց, և ինք՝ Արտաւազդ՝ հռոմայեցի զօրավար Անտոնիոսի ծուղակն իյնալով գերի բռնուեցաւ (Քրիստոսէ 36 տարի առաջ) և շղթայի զարնուելով ընծայ տարուեցաւ Եգիպտոսի Կլէոպատրա թագուհիին: Այս նշանաւոր դէպքէն քիչ ետք Արտաշեսեան հարստութիւնն ալ վերջ գտաւ:

Պատմած. — ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Տիգրան Մեծի փառաւոր յաղթութիւնները տեւական չեղան դժբախտաբար:

Նախ՝ իր երկու որդիներն իրարու ետեւէ սպստամբեցան իրմէ. յետոյ՝ հաւատարիմ կարծուած երրորդը՝ Տիգրան Փոքր, որ Պարթեւաց թագաւորին ազջիկն առած էր, հայկական դահին տիրանալու համար Պարթեւաստան ապաստանելով՝ իր հօր դէմ գրգռեց Պար-

Թեւեւերը, որոնք նոյն դաւաճանին օգնութեամբ Հայաստան արշաւելով Հայոց մայրաքաղաք Արտաշատը պաշարեցին: Եւ որովհետեւ Պարթեւաց թագաւորը պաշարման շարունակութիւնը յանձնած էր դաւաճանին հսկողութեան, և ինք զօրքերուն մէկ մասն առնելով հեռացած էր անկէ, Տիգրան դրսէն յարձակեցաւ պաշարողներու վրայ, և բոլորն ալ ցիրուցան ըրաւ: Դաւաճանը Ժամանակ չունեցաւ Պարթեւաստան փախչելու, այլ Պոնտոս ապաւինելով այս անգամ ալ Հռոմայեցիները դժբաղբեց քալել իր հօր դէմ, և զանոնք առաջնորդեց Արտաշատ: Տիգրան՝ նեղը մնացած՝ ելաւ զնայ Հռոմայեցի զօրավար Պոմպէոսի քով, որուն սիրան առնելով հաշտութեան ու բարեկամական դաշինք կնքեց հետը: Դաւաճան որդին՝ հակառակ Պոմպէոսի՝ կ'ուզէր հայ գանձերը ձեռք բերել. և երբ Պոմպէոսի դէմ ըմբոստ վարմունքի մէջ գտնուեցաւ, հռոմայեցի զօրավարը շրջթայի զարկաւ զայն, և նոյն իսկ աներոջը՝ Պարթեւաց թագաւորին միջամտութիւնն անզօր գտնուեցաւ զինք փրկելու:

Տիգրանի մահով (56 թ. Բրիտոսէ առաջ) արքայական դահը բարձրացաւ իր Արտաւազդ որդին, որ արդէն երկու տարիէ ի վեր գահակից էր իր հօր: Պարթեւներն այս փոփոխութենէն օգուտ քաղելով՝ Արտաւազդի վրայ քալեցին, և ստիպեցին զայն՝ Հռոմայեցիներու դէմ միանալ իրենց հետ: Հաշտութիւնն աւելի ամուր հիմերու վրայ դնելու համար՝ Պարթեւաց թագաւորն Արտաւազդի քոյրը հարս առաւ իր տղուն: Բայց Արտաւազդ հռոմայեցի նոր զօրավար Անտոնիոսի յառաջանալն իմանալով՝ անոր հետ միացաւ, և երբ տեսաւ որ Հռոմայեցիք պարտուեցան, Արտաւազդ իր մորթն ազատելու համար Հայաստան փախաւ:

Հայոց թագաւորին այս վատութիւնը շատ սուղի նստաւ մեզի. վասնզի Անտոնիոս Արտաւազդն իր ծուղակին մէջ ձգելով՝ արծաթէ շղթայի զարկաւ և Եգիպտոսի Կլէոպատրա թագուհիին նուէր ըրաւ. Հայաստանն ալ գրաւեց և իր կողմէ թագաւոր մը նշանակեց:

Բնական է թէ Արտաւազդի որդին՝ Արտաշէս Բ. և անկէ ետք Տիգրան Բ., Տիգրան Գ. ու Արտաւազդ Գ. մեծ ջանքեր թափեցին Տիգրան Մեծի ինքնակալ կայսրութիւնը վերահաստատելու, բայց ոչ միայն չկրցան այս մեծ գաղտփարն իրականացնել, այլ Արտաշիսեան հարբստութիւնն ալ վրայ տուին, և Հայոց թագաւորութիւնն անցաւ օտարներու ձեռք:

Հարցարան.—25. Ո՞վ յաջորդեց Տիգրանի: — 26. Խնչ եղաւ Արտաւազդի վախճանը:—Խնչ փորձանքներ եկան Տիգրանի զլխուն: Խնչպէս վերջ գտաւ Արտաշիսեան հարստութիւնը:

ԺԳ. ԴԱՍ. — ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

27. Մեր Արշակունեաց հարստութեան սկզբնաւորութեան մասին ազգային աւանդութիւնն իրականէն բոլորովին տարբեր պատմութիւն կ'ընէ, ըսելով որ Պարթեւներու Արշակ մեծ թագաւորն Հայաստանը թշնամիներու ձեռքէն ազատելով՝ իր Վաղարշակ եղբայրն Հայոց վրայ թագաւոր դրաւ (150 ֆ. Ա.), և այս նոր թագաւորութիւնը՝ Արշակի անունով՝ Արշակունեաց հարստութիւն կոչուեցաւ:

28. Բայց իրական պատմութեան նայելով՝ մեր Արչակունեաց հարստութիւնն հաստատուած է ո՛չ թէ Պարթեւներու Արչակ մեծ թագաւորին, այլ Վաղարշ թագաւորին օգնութեամբ, որ Հայաստանը գրաւելով, Քրիստոսէ ետք 58 թուին իր Տրգատ եղբայրն Հայոց վրայ թագաւոր դրաւ:

Պատկեր. — ՀԱՅ-ԱՐՇԱԿՈՒՆԻՒԲ

Արտաշեսեան հարստութեան անկումէն ետք՝ Հայաստան երբեմն Հռոմայեցիներու և երբեմն Պարթեւներու կողմէ դրուած թագաւորներով կառավարուեցաւ, նայելով զօրեղ կողմին տիրապետութեան. բայց վերջնական յաղթութիւնը տարին Պարթեւները, և ամբողջ Հայաստան իրենց իշխանութեան տակ անցաւ:

Պարթեւաց Վաղարշ թագաւորն՝ Հայաստանի տիրանալէ ետք՝ իր Տրգատ կամ Տիրիթ եղբայրն Հայոց վրայ թագաւոր դրաւ, որով պատճառ եղաւ հայկական նոր հարստութեան մը հաստատման: Եւ որովհետեւ Պարթեւներն իրենց հիմնադրին՝ Արչակի՝ անուշով կը կոչուէին նաև («Արչակո՛ւնիք»), այս նոր հարստութիւնն ալ կոչուեցաւ՝ Հայ-Արչակունիք:

Մեր պատմիչներն Արչակունեաց հարստութեան նաստատման մասին բոլորովին տարբեր պատմութիւններ կ'ընեն: Այս դէպքին մէջ իրօք Վաղարշ(ակ) մը կայ, բայց ո՛չ թէ Հայ-Արչակունեաց հարստութեան առաջին թագաւոր ճանչցուած անձնաւորութիւնն է, այլ՝ ինչպէս տեսանք՝ բուն իսկ Արչակունի կամ Պարթեւ թագաւորը, որ՝ նոյն իսկ անվաւեր պատմութեան համաձայն՝ իր եղբայրն Հայոց վրայ թագաւոր դրած է:—

ձեռքով ընդունեցաւ քրիստոնէութիւնը (298), որ այն օրէն սկսած՝ Հայոց պաշտօնական կրօնքն եղաւ:

Տրգատի իբր թէ՛ Հռոմի մէջ անցուցած կեանքն ու կատարած գերմարդկային քաջութիւնները բոլորովին անհիմն են. շատ շատ՝ անանց պատմական մասը կարելի է վերագրել Տրգատ Ա. ի:

Հարցարան. — 29. Որոնքու՞ հալածանքի ենթարկուեցան Հայերը: Ո՞վ էր Տրգատ եւ ի՞նչ ըրաւ: — 30. Ի՞նչ միջոցով թագաւորեց Տրգատ: = Սասանեաններն ինչը՞ր ըրին Հայաստանի մէջ: Հայերն ե՞րբ ընդունեցան քրիստոնէութիւնը, եւ ի՞նչ կերպով:

ԼԶ. ԴԱՍ. — Խ Ո Ս Ր Ո Վ Բ.

31. Տրգատի մեռնելէն ետք Հայոց վրայ թագաւոր նստաւ իր որդին Խոսրով (331 - 339): Ասոր ժամանակ Հայաստանի վրայ յարձակեցան հիւսիսային ազգերը, որոնք մեծ վնասներ տուին երկրին. բայց ետքէն՝ Հայոց կողմէ հալածուեցան և պատերազմի դաշտին վրայ բազմաթիւ դիակներ ձգելով փախան հեռացան:

32. Այս պատերազմէն ետք Խոսրով երբ շինութիւններով զբաղած էր, Պարսից Շապուհ թագաւորն՝ Հռոմայեցիներու տկարանալը տեսնելով՝ Հայաստանի վրայ քալեց, և Խոսրովի հետ պատերազմի բռնուեցաւ:

Այս երկու պատերազմներու մէջ ալ ամենէն

աւելի իրենց քաջութիւններով նշանաւոր հանդիսացան Հայոց Սպարապետը Վաչէ Մամիկոնեան ու Վահան Ամատունի զօրավարը:

Պատմած. — ՄԱԶԻՌՈՒԹՔ ՈՒ ՊԱՐՍԻԿԻ
ՀԱՅՍՍԱՆԻ Մէջ

Երբ Տրդատի որդին և յաջորդը՝ Խոսրով Բ. արքայական գահը բարձրացաւ, մի քանի տարի ետք Հայաստանի նիւսիսային կողմի ազգերը՝ Մազքթայ Սանեան թագաւորին առաջնորդութեամբ՝ Հայոց վրայ յարձակեցան, պատճառ բռնելով թէ Հայերը զիրենք քրիստոնեայ պիտի ընեն և իրենց աւարառութեան ու յափըշտակութեան նին սովորութիւններէն պիտի զրկին: Այս յարձակման ժամանակ քանդեցին աւերեցին իրենց անցած գիւղերն ու քաղաքները, գրաւեցին Գանձակը, և Մազքթայ թագաւորն ու զօրքերը մտան հաստատուեցան Վաղարշապատի մէջ: Հայոց թագաւորն ու ծերունի Վրթանէս Հայրապետը՝ նեղը մնացած՝ փախան ապաստանեցան Դարոյնքի (=Պայէզլիս) բերդին մէջ: Բայց այս միջոցին Հայոց Վաչէ Մամիկոնեան սպարապետը Հռոմայեցւոց երկրէն դանձալով՝ իր բոլոր զօրքերը ժողվեց, յարձակեցաւ թշնամիներու վրայ, և մեծ ջարդ տալով անոնց՝ բոլորն ալ դուրս քշեց երկրէն:

Խոսրովի թագաւորութեան վերջին տարիներուն մէջ Հռոմայեցիներու հզօր կոչսրը՝ Կոստանդիանոս՝ մեռաւ, և թագաւորութիւնը բաժնուեցաւ իր երեք որդիներուն միջեւ (337): Կոստանդիանոսի մեռնելովը՝ խռովութիւններն սկսան երկրին մէջ և տարածուեցան ամէն տեղ: Խռովութեան լուրերը վերջապէս հասան մինչև Պարսից Շապուհ Բ. թագաւորը (309—379), որ առիթէն օգ-

տուելով՝ հռոմէական երկիրներու և Հայաստանի վրայ քաշեց: Այս պայմաններու մէջ Հռոմները բոլորովին մէկ կողմ ձգած էին Հայոց պաշտպանութիւնը: Իսկ Հայերը՝ Վաչէ սպարապետին, Վահան Ամատունի զօրավարին և ուրիշ նախարարներու առաջնորդութեամբ՝ խիստ կերպով պաշտպանեցին իրենց իրաւունքները և ետ մղեցին Պարսիկները: Բայց Պարսիկները նորէն յարձակեցան Հայոց վրայ: Այս վերջին պատերազմի միջոցին երկու կողմէ ալ բազմաթիւ մեռնողներ եղան, որոնց մէջ նաև հայ նախարարներէ ոմանք ու Վաչէ սպարապետը:

Պատերազմէն քիչ ետք Խոսրով թագաւորն ու Վըրթանէս Հայրապետն ալ մեռնելով, Խոսրովի մարմինը տարին ամիոփեցին իր հայրենի դամբարանին մէջ՝ Անի ամրոցը (=Կամովս), իսկ Վրթանէսինը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի քով, Թորդան աւանը:

Հարցարան.—31. Ո՞վ յաջորդեց Տրդատի: Ատը ժամանակ որո՞նք յարձակեցան Հայաստանի վրայ:—32. Ասկէ գատ որո՞նց հետ պատերազմեցան Հայերը: Այս երկու պատերազմներու մէջ որո՞նք եղան ամէնէն նշանաւոր անձերը:—Մագրուծներու հետ ի՞նչպէս պատերազմեցան Հայերը: Պարսիկներն ինչո՞ւ Հայաստանի վրայ քայեցին նորէն, եւ ի՞նչպէս վերջացաւ պատերազմը: Ո՞ւր թաղուեցան Հայոց թագաւորն ու Հայրապետը:

ԺԷ. ԴԱՍ. — Տ Ի Ր Ա Ն

33. Խորովի ժամանակուան ներքին միաբանութիւնը՝ իր Տիրան զաւկին թագաւորութեան ժամանակ (340-350) քայքայուեցաւ. վասն զի Տիրան իր անմիտ ընթացքով թէ՛ եկեղեցական դասն և թէ՛ նախարարները վշտացնելով հեռացուցած էր իրմէ: Ասիկա շատ սուղի նստաւ իրեն:

34. Տիրան, ամէն կողմէ անօգնական մնալով, դաւով մը գերի բռնուեցաւ Պարսիկներէ, որոնք Տիրանի աչքերը փորեցին և իր ընտանիքով միասին բանտարկեցին, մինչեւ որ Հռոմայեցիներու միջամտութեան հետեւանքով բոլոր բանտարկեալներն ազատ արձակուեցան, և Տիրանի Արշակ որդին Հայոց վրայ թագաւոր դրուեցաւ:

Պատմած. — Տ Ի Ր Ա Ն Ի Ա Ն Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Տիրանի թագաւորութեան ժամանակ կաթողիկոսական աթոռը բարձրացաւ Յուսիկ, որ ակամայ կերպով ամուսնացած էր Տիրանի աղջկան հետ, չկրնալով մերժել իր բարերար թագաւորին աւաջարկը: Բայց որովհետեւ Յուսիկ Աստուծոյ հաճելի ըլլալու համար կուսակրօնութիւնը կը նախընտրէր, բաժնուեցաւ կնոջմէն, որ քիչ ժամանակէն մեռաւ: Ասոր վրայ թագաւորին և կաթողիկոսին միջեւ ցրտութիւն ինկաւ, և անհաճոյ վէճեր տեղի ունեցան: Օր մըն ալ երբ Տիրան իր աւագանիով եկեղե-

ցիէն ներս կը մտնէր, կաթողիկոսը չախեց դայն, որուն վրայ թագաւորը՝ զայրացած՝ մեռնելու աստիճան ծեծել տուաւ կաթողիկոսը: Տիրանի այս աններելի արարքը շատ դէշ տպաւորութիւն ըրաւ ամէնուն վրայ, և բոլորն ալ սկսան մեղադրել թագաւորը: — Ուրիշ դէպք մը՝ աւելի՛ զգուեցուց աւագանին ու ժողովուրդը, և նախարարները բաժնուեցան թագաւորէն: Տիրանի ներքինապետը պալատին մէջ ամենէն ազդեցիկ մարդն էր, և իր չար խորհուրդներով կը թունաւորէր բնականէն արդէն գէշ թագաւորը: Այսպէս՝ իր ներքինապետին դրրդումով՝ Տիրան ամբողջ ցեղով կոտորել տուաւ Արծրունեաց ու Ռշտունեաց նախարարութիւնները և ուրիշներ: Ասոր վրայ տէրութեան գլխաւոր աջակից Մամիկոնեանները Տիրանէն հեռացան և քաշուեցան իրենց հայրենի նահանգը՝ Տայք (= Թորթում և Բիսիլիմ):

Տիրանի այս անհեռատես ընթացքը շատ սուղի նստաւ իրեն:

Որովհետեւ Հռոմայեցիներու դէմ պատերազմ հրատարակած էին Պարսիկները, ասոնք ուղեցին նախ Տիրանը չէզոքացնել. ուստի՝ վարպետութեամբ մը Հայերն իրենց կողմը գրաւեցին և հաշտուեցան Տիրանի հետ: Բայց Տիրանի սենեկապետ Փրսակ Սիւնի իշխանը՝ թագաւորէն վրէժ լուծելու համար՝ Պարսիկներու քով ամբաստանեց դայն, իբր թէ Հռոմներու օգնութեամբ Սասանեան պետութիւնը կործանելով՝ անոր տեղ նորէն իր (Պահլաւունի) ցեղը կ'ուզէ դնել: Ասոր վրայ Պարսիկները խաբէութիւնով իրենց քով հրաւիրեցին Տիրանը, և երկու աչքերը փորելով՝ իր ընտանիքով միասին բանտարկեցին: Այսպէսով իր արժանի պատիժը կրեց Տիրան:

Հարցարան. — 33. Տիրանի ժամանակ ի՞նչ եղաւ: — 34. Ի՞նչ պատահեցաւ Տիրանի: — Տիրան ինչո՞ւ վշտացուց իր մարդիկները: Ի՞նչ եղաւ Տիրանի վախճանը:

ԺԸ. ԴԱՍ. — ԱՐՇԱԿ (Ա.)


35. Արշակ իր անսիրտ և անբարոյական ընթացքով Հայոց ամենէն վատ թագաւորն եղաւ, այնպէս որ ժամանակին կաթողիկոսը՝ Մեծն Ներսէս՝ ստիպուեցաւ անիծել զայն: Հայ նախարարներն ալ՝ Արշակէն զզուած՝ կաթողիկոսին կողմը բռնեցին: Արշակ ստիպուեցաւ ներողութիւն խնդրել կաթողիկոսէն, և ամէնուն հետ հաշտուիլ:

36. Այս միջոցին Հռոմայեցիք սկսան նորէն յարձակիլ Պարսկաստանի վրայ. բայց այս արշաւանքը շատ ձախող հետեւանք ունեցաւ, և Յովիանոս կայսրն 363 թուին ստիպուեցաւ խայտառակ դաշինք մը կնքել Պարսից հետ, որով Հռոմայեցիք յանձն կ'առնէին ոչ միայն հրաժարիլ իրենց զրաւած երկիրներէն, այլ և իրենց կուսակից Հայոց թագաւորը չպաշտպանել և նոյն իսկ Պարսիկներու ձեռք յանձնել զայն:

Պատեւած. — ԱՐՇԱԿԻ ՉԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տիրանի բանտարկութեան ժամանակ Հայ նախարարները Հռոմայեցիներու կոստանդիտս կայսրին պատգամաւորութիւն մը զրկելով՝ իրենց հնազանդութիւնը յայտնեցին, և խնդրեցին որ կայսրը պաշտպանէ զիրենք: Արդ՝ կոստանդիտսի միջամտութեամբ Շապուհ սպասարձակեց Հայոց թագաւորն ու միւս բոլոր բանտարկեալները, և Տիրանի կուրուքեան պատճառով Հայոց վրայ թագաւոր դրուեցաւ Տիրանի որդին՝ Արշակ (351—368):

Արշակ երբ դաճը բարձրացաւ, աստձին դործն եղաւ սիրաշահիլ իր հօր ժամանակ գժտուած նախարարները, — մասնաւորապէս Մամիկոնեանները: Բայց նախարարներու մասին Արշակի ցոյց տուած սէրը շատ վաղանցուկ եղաւ,



ՄԵՍՆՆԵՐՍԷՍ

և ոչ միայն անոնց հետ զէշ կերպով վարուիլ սկսաւ, այլ և բոլոր ժողովրդէն սիրուած Մեծն Ներսէս կաթողիկոսին հետ աւրուեցաւ: Նախարարներն սկսան ասկէ ալ բամբուել. բայց Արշակ՝ փոխանակ անոնց սիրտը շահելու՝ Այրարատի կողովիտ գաւառին մէջ՝ Առշակաբաւն

անունով քաղաք մը շինեց, որուն մէջ լեցուց երկրին բոլոր աւազակները, մարդասպաններն ու սրիկաները. սասնկով աւելի զայրացուց նախարարներն ու կաթողիկոսը, որուն հայրական խրատներուն ականջ չկատելէ զատ՝ կը ծաղրէր զայն: Ասոր վրայ Ներսէս անիծեց թագաւորը, և Արշակունի մէջ տարափոխիկ հիւանդութիւն մը իյնալով՝ երևք օրուան մէջ քաղաքին գրեթէ բոլոր բնակիչները կոտորուեցան: Արշակ ասիկա աստուածային պատուհաս համարելով՝ Ներսէսի ոտքերն ինկաւ, աղաչեց անոր որ ներէ իրեն, խոստանալով այլևս մտիկ ընել զայն: Բայց դարձեալ գրգռեց Արշակ: Ահա թէ ինչպէս:

Արշակի Գնէլ եղբորորդին թագաւորին առջև ամբաստանուած էր իր անձնական թշնամիներէն, այնպէս որ Արշակ Գնէլը ձուղակը ձգելով՝ զուր տեղն սպաննել տուաւ, հակառակ Ներսէսի բարեխօսութեան և աղաչանքին: Ուստի Ներսէս՝ վշտացած՝ կաթողիկոսութենէ հրաժարեցաւ, այլևս չուղելով տեսնել այնպիսի վատ թագաւորի մը երեսը: Ներսէսի հեռանալէն ետք Արշակ աւելի համարձակ կերպով շարունակեց իր չարութիւնները, սպաննել տալով նախարարներէն շատերը:

Արշակի միակ և գովութեան արժանի գործը այն է որ Հայաստանը երկար ժամանակ և մեծ ճիգերով պաշտպանեց օտարներու դէմ, չնայելով որ նախարարներէ լքուած՝ ստիպուած էր առանձինն վարել բանակը:

Հարցարան. — 35. Ի՞նչպէս մարդ էր Արշակ եւ ի՞նչ եղաւ: — 36. Հռոմայեցիք ի՞նչ ընծացք բռնեցին: = Ի՞նչ միջոցներով Թագաւորեց Արշակ: Իր առաջին գործն ի՞նչ եղաւ: Ի՞նչ չարութիւններ գործեց Արշակ: Գովութեան արժանի ի՞նչ գործ տեսաւ:

ԺԲ. ԴԱՍ. — ԱՐՇԱԿԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

37. Որովհետեւ Արշակի գործած չարիքներէն հայ նախարարները՝ սաստիկ նեղացած՝ հեռացած էին անկէ, Յովիանոսի այն ամօթալի դաշինքէն ետք Պարսիկները դաւով ձեռք անցուցին Արշակը, և շղթայի զարնելով Անյուշ բերդը նետեցին բանտարկեցին զայն:

38. Արշակ բանտին մէջ իմանալով որ իրմէ վշտացած և Պարսից կողմ անցած նախարարները — զլիսաւորապէս Մեհրուժան Արծրունի ու վահան Մամիկոնեան — վրէժ լուծելու համար կառայնորդեն Պարսից և քարուքանդ կընեն Հայաստանը, և մանաւանդ օրէ օր իրեն անտանելի դարձած ըլլալով բանտային խիստ կեանքը, անձնասպան եղաւ:

Պատմած. — ԱՐՇԱԿԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

Պարսիկները կ'ուզէին ամբողջութեամբ կլլել Հայաստանը, և ասոր համար միշտ հակառակ էին օտար՝ «եւրոպական» միջամտութեան, որպէս զի Հայերը զրկուելով պաշտպանէ՝ կարելի ըլլար դիւրին կերպով ձուլել զանոնք իրենց հետ: Արդ՝ Հռոմայեցւոց Յուլիանոս կայսրին Պարսից կողմէ յաղթուելուն և սպաննուելուն հետեւանքով՝ Շապուհ առիթէն օգտուեցաւ, և նորապսակ Յուլիանոս կայսրին հետ այնպիսի դաշինք մը կնքեց, որ այդ դաշինքին զօրութեամբ Հռոմայեցիք ձեռք կը քաշէին Հայաստանի մէջ իրենց գրաւած երկիրներէն և միանգամայն կը խոստանային այլևս չպաշտպանել Հայերը,

պայմանով սակայն որ Հայոց թագաւորութիւնը չպիտի քնջուի (363 թ.) : Այս ամօթալի դաշնագրութեան իբր հետեւանք՝ Արշակ խարբախութեամբ գերի բռնուեցաւ Պարսիկներէ և իբրև կալանաւոր Անյուշ բերդը (այժմ՝ Կիլիկիոս) նստուեցաւ . Հայոց Վասակ սպարապետը մորթաւերթ եղաւ սպաննուեցաւ . իսկ Հայաստան՝ նստուեցաւ դաշնագրութեան՝ գրաւուեցաւ և պարսկական նահանգ դարձաւ : Եւ որպէս զի Հայերն Արշակի ընտանիքին դրդուեալ չկարենան ապառաժիլ և ուրիշ թագաւոր մը դնել, Ծապուհ հրաման ըրաւ՝ Արշակի բոլոր ընտանիքը փոխադրել Պարսկաստան : Բայց Ծապուհի զրկած մարդիկն երբ Հայաստան ոտք դրին, Հայոց նա միանալով՝ գահաժառանգ Պապ իշխանը Հռոմայեցիներու քով փախուցին : Ծապուհ ասոր վրէժը լուծելու համար ուրացող հայ նախարարներու — զլխաւորաբար Վահան Մամիկոնեանի ու մանաւանդ Մենրուժան Արծրունիի — առաջնորդութեամբ աւերակ դարձուց Հայաստանը : Վահանի դաւաճանութիւններուն վերջ դրաւ իր նորազատ որդին՝ Սամուէլ, որ Հայաստանի սիրոյն՝ զարկաւ սատկեցուց Վահանը, մաքրելով Մամիկոնեան տան վրայ ձգուած արատը :

Այս միջոցին շատոնց մեռած էր Յովիանոս, և Արեւելքի մէջ անոր յաջորդած՝ էր Վաղէս (364—378), որ Յովիանոսի կողմէ Պարսից հետ կնքուած ամօթալի դաշինքին քաղաքական մեծ սխալ մը ըլլալն զգացած էր . ուստի՝ զայն դարմանելու համար՝ Պապը Հայոց թագաւոր անուանելով հռոմէական զօրքերու առաջնորդութեամբ Հայաստան զրկեց :

Արշակ բանտի չարչարանքներուն ու կրած զրկանքներուն չզիմանալով՝ անձնասպան եղաւ :

Հարցարան.—37. Արշակին ի՞նչ պատահեցաւ:—38. Բանտին մէջ ի՞նչ ըրաւ Արշակ:—Ի՞նչ էր Պարսից միտքը, եւ ի՞նչ ըրին ի՞նչ եղաւ Արշակ:

Ի. ԴԱՍ. — Պ Ա Պ

39. Արշակի փախստական որդին՝ Պապ՝ Հռոմայեցիներու օգնութեամբ Հայոց գահը բարձրացաւ (369-374). իսկ Արշակի պատճառով կաթողիկոսութենէ հրաժարած Ներսէս հայրապետը՝ Պապի խնդրանքին վրայ նորէն իր աթոռը դարձաւ : Սպարապետութեան պաշտօնն ալ յանձնուեցաւ Վասակի զաւկին՝ Մուշեղի :

40. Այսպէս կազմուած նոր զօրութեամբ՝ Հայերն յարձակեցան Պարսից վրայ, և ահագին կոտորած տալով անոնց՝ վաճառեցին Հայաստանէ : Բայց Պապի գոռոզ վարմունքին պատճառով՝ խռովութիւնները նորէն սկսան, և Պապ՝ Հռոմայեցիներու կողմէ լարուած ծուղակի մը մէջ իյնալով, անոնց կողմէ սպաննուեցաւ :

Պատմած. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հռոմայեցիք իրենց անհեռատեսութեան երեսն՝ Արեւելքի մէջ անդունդէ անդունդ գլորեցան, և իրենց ազդեցութիւնը բոլորովին կորսնցուցին :

Հռոմայեցիներու ձեռքով Հայոց թագաւորին սպաննուելը՝ այս ձախաւեր անհեռատեսութեան մէկ նմոյշն էր :

Պարսիկներն երբ իմացան թէ Պապ սպաննուած է, Հռոմայեցուց կայսրին պատգամաւորութիւն մը զրկելով առաջարկեցին Հայոց թագաւորութիւնը քնջել և իրենց մէջ բաժնել Հայաստանը, քանի որ, ըսին, Հայոց երեսն

է որ այս երկու հզօր պետութիւններու միջև անպակաս եղած է գոտութիւնը: Բայց որովհետեւ Հռոմայեցիք կուղէին առանձինն կուլ տալ Հայաստանը, Վաղէս կայսրը մերժողական պատասխան տուաւ: Շապուհ կրկնեց իր առաջարկը, իսկ Վաղէս յատուկ պատգամաւորութեան միջոցով սպառնաց զէնքի դիմել, եթէ Շապուհ համարձակի դրժել 363ին Յովիանոսի հետ կնքուած համաձայնութիւնը, որով Շապուհ յանձն կառնէր Հայոց թագաւորութեան ձեռք չդնել: Եւ սակայն Վաղէսի պատգամաւորները կայսրին հաճութիւնը չառած՝ կը համաձայնին Պարսից հետ, և Հայաստանը բաժնելու որոշումը կուտան, իրքը մաս մը իրենց՝ Հռոմայեցւոց՝ առնելով, և մեծագոյն մասը ձգելով Պարսից: Եւ երբ պատգամաւորներն ետ կը դառնան, Շապուհ կը փութայ կայսրին ներկայացնել Հռոմայեցւոց ինկած բաժինը. բայց կայսրը կը բարկանայ, և պատերազմի պատրաստութիւն կը տեսնէ: Շապուհ իմանալով ասիկա, Վաղէսի գալէն առաջ զօրք կը զրկէ Հայաստան և իր բաժինը կը գրաւէ: Վաղէսի պատրաստութիւնն ապարդիւն կը մնայ, վասն զի նոյն միջոցին Հռոմայեցիք ստիպուած էին պատերազմիլ Գոթացիներու դէմ, որոնք ողջ ողջ կ'այրենն արդէն վերաւոր կայսրը (378):

Այս առնանքը Պարսկաստանի մէջ Շապուհ Բ. ալ կը մեռնի, և իրեն կը յաջորդէ եղբայրը՝ Արտաշիր. բայց հինգ տարի չանցած՝ վար կ'առնուի, և տեղը կը դրուի Շապուհ Բ. ի որդին՝ Շապուհ Գ., որ Վաղէսի յաջորդ Թէոդոս Մեծի հետ խաղաղութեան դաշն կը կընքէ: Ասոր հետեւանքով՝ երկու հզօր պետութիւններն Հայաստանի մասին համաձայնութեան կուգան, և իրենց մէջ կը բաժնեն Հայաստանը (387):

Հարցարան.—39. Ո՞վ յաջորդեց Արշակի: Ուրիշ ի՞նչ փոփոխութիւններ եղան Հայաստանի մէջ:—40. Ի՞նչ ըրին Հայր: Ի՞նչ պատահեցաւ Պապի:—Հայաստան ի՞նչպէս եւ որո՞նց մէջ բաժնուեցաւ:

ԻԱ. ԴԱՍ. — ՎԵՐՋ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ

41. Պապի սպաննումէն բաւական տարի ետք Հայաստան Պարսից և Հռոմայեցւոց մէջ բաժնուեալով՝ Պարսից բաժնին մէջ և իրենց (Պարսից) գերիշխանութեան տակ թագաւոր նստաւ Խոսրով անունով մէկը, իսկ Հռոմայեցւոց բաժնին մէջ՝ Պապի Արշակ որդին:

42. Բայց Արշակի մեռնելէն ետքը Հռոմայեցիք բոլորովին ջնջեցին իրենց բաժնին Հայոց թագաւորութիւնը, մինչդեռ Պարսիկները ժամանակ մըն ալ շարունակեցին Խոսրովի յաջորդներու ձեռքով կառավարել Հայերը, մինչեւ որ 428 թուին անոնք ալ վերջ տուին Հայոց անուանական թագաւորութեան:

Պատեաճ. — ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Պապի սպաննուելուն վրայ Հայերը սաստիկ զայրացած էին Հռոմայեցիներու դէմ, բայց փոխանակ Պարսից կողմը բռնելու՝ «երկու չարեաց փոքրագոյնը» ընտրելով համակերպեցան Հռոմայեցիներու կողմէ դրուած նոր թագաւորին, որուն անունն էր Վարազդատ, Արշակունեաց

տոհմէ : Բայց Վարազդատ՝ Հայոց սիրելի Մուշեղ Մամիկոնեան սպարապետն սպաննել տալուն համար՝ ամէնուն աչքէն ինկաւ, և Մամիկոնեաններու հետ պատերազմի բռնուեցաւ : Վարազդատ յաղթուելով՝ Հռոմայեցոց երկիրը փախաւ . ուստի՝ Հայոց կառավարութեան խնամակալ կարգուեցաւ Մանուէլ Մամիկոնեան քաջ նախարարը (378—385), որ Հռոմայեցիներու վրէժխնդրութեան դէմ դնելու համար հաշտուեցաւ Պարսից հետ :

Այս հաշտութիւնը Մենրուստանի գործին չեկաւ, և իր լարած մեքենայութիւններուն շնորհիւ միութիւնը քանդուելով՝ Հայերն ու Պարսիկներն իրարու հետ պատերազմի բռնուեցան : Վերջին պատերազմին մէջ դաւաճան Մենրուստանը Մանուէլի նիզակակից Բարիկ Սիւնի իշխանէն զարնուելով սատկեցաւ, որմէ ետք թշնամութիւնները դադրեցան, և Պապի Արշակ որդին Հայոց թագաւոր պսակուեցաւ, իրեն երկրորդ ունենալով իր եղբայրը՝ Վաղարշակ :

Այս դէպքէն քիչ ժամանակ ետք Մանուէլի մահը վրայ հասաւ, և հայ նախարարներն Արշակի դէմ լարուելով՝ Պարսից թագաւորին դիմեցին, խնդրելով որ իրենց ուրիշ թագաւոր մը տայ : Ուստի Շապուհ Գ. Արշակունի ցեղէ Սոսրով անունով մէկը Հայոց վրայ թագաւոր դրաւ : Արշակ՝ ասիկա տեսնելով՝ Հռոմներու քով փախաւ : Եւ անա Հռոմայեցոց ու Պարսից մէջ նոր պատերազմ բացուեցաւ . բայց երկու հակառակորդներն իրարու հետ դեռ չզարնուած՝ հաշտութիւն գոյացուցին, և, — ինչպէս նախորդ պատմածին մէջ տեսանք, — Հայաստանի բաժանման ծրագիրն իրականացուցին : Անկէ ետք Արշակ Հռոմայեցոց գերիշխանութեան տակ անուանապէս թագաւորեց Յունահայաստանի մէջ, իսկ Սոսրով՝ միեւնոյն պայմաններու տակ՝ Հայաստանի Պարսից բաժ-

նին մէջ : Եւ երբ Արշակ մեռաւ, Հռոմները բոլորովին ջնջեցին Հայոց թագաւորութիւնը, մինչդեռ Պարսից բաժնին մէջ Սոսրովի յաջորդեցին Վուամշապուհ, Շապուհ պարսիկ և վերջապէս Արտաշիր, զոր անդգամ նախարարներն իրենց անձնական շահերուն համար Պարսից ձեռք մատնելով՝ առանց խղճի խայթի՝ Հայոց թագաւորութեան վերնալն առաջարկեցին, ինչ որ կատարուեցաւ դժբախտաբար :

Այսպէսով Հայ-Արշակունեաց հարստութիւնն ալ վերջ գտաւ, 428 թուին :

Հարցարան.—41. Պապի սպաննումէն ետք ի՞նչ փոփոխութիւններ մտան Հայաստանի մէջ:—42. Ի՞նչպէս վերջ գտաւ Հայոց թագաւորութիւնը:—Հայ-Արշակունեաց հարստութեան անկումին պարագաները կրնա՞ք պատմել քիչ մը աւելի մանրամասնութեամբ:

ԻԲ. ԴԱՍ. — Ս. ՍՍ.ՀԱԿ ՈՒ Ս. ՄԵՍՐՈՐ

43. Այն միջոցին որ մէկ կողմէ Հռոմները, և միւս կողմէ Պարսիկները զանազան միջոցներով կուզէին իրենց հետ ձուլել և կուլ տալ Հայերը, Ս. Սահակ ու Ս. Մեսրոբ՝ Վուամշապուհ թագաւորին օգնութեամբ ասոր դէմ անխորտակելի թումբ մը կանգնեցին. և եթէ այս սուրբերը չկրցան Հայոց թագաւորութեան կործանման առաջին առնել, բայց գոնէ հայերէն յատուկ տառերու գիւտով Հայոց ազգայնութեան պահպանումին պատճառ դարձան :

44. Ս. Սահակ ու Ս. Մեսրոբ իրենց այս գիւտով հայ կեանքին մէջ մեծ դարագլուխ մը բացին. և եթէ Հայոց ազգն իր գոյութիւնը մինչեւ հիմայ պահպանած է, այն երկու սուրբերուն կը պարտինք. ուստի՛ պէտք է որ մենք ալ հաւատարիմ մնանք մեր լեզուին, մեր ազգին ու մեր եկեղեցիին:

Պատմած. — ՀԱՅ ԳՐԵՐՈՒ ԴԻԻՏԸ

Վառձապուհի թագաւորութեան ժամանակ Հայոց կաթողիկոսն էր Ս. Սահակ: Ասիկա իր գործակիցներէն Ս. Մեսրոբի կամ Մաշթոցի հետ գիշեր ցերեկ կը մտածէր հայերէն գրեր հնարելու վրայ, քանի որ մինչեւ այն ատեն հայերէնի յատուկ կատարեալ գիր չունենալուս պատճառով կա՛մ յունարէն կը գրէինք, կա՛մ ասորերէն և կամ պարսկերէն. այսպէսով հայերէն լեզուն, որ թէև շատ դարերէ ի վեր գոյութիւն ունէր, բայց եկեղեցական և պաշտօնական շրջանակներէ դուրս վտարուած էր, և միայն հասարակ ժողովուրդն էր անոր հաւատարիմ պահպանը:

Այս վիճակը Հայոց Ազգային գոյութեան վտանգ կըրպառնար, մանաւանդ որ մէկ կողմէ Հռոմիներն ու միւս կողմէ Պարսիկները Հայերն իրենց մէջ ձուլելու նպատակով ամէն միջոց կը գործածէին:

Վերջապէս Ս. Մեսրոբ Վառձապուհի հրամանով երկար ճամբորդութիւններ կատարելէ և զանազան ազգերու գրեր ուսումնասիրելէ ետք՝ Հայերէն գրերն հնարեց:

Պարսկական Հայաստանը: Այս կուսակալները կը կոչուէին՝ Մարգարաններ:

46. Իսկ երբ Հայաստան Արաբներու տիրապետութեան տակ անցաւ, այս անգամ ալ անոնց կողմէ դրուած կուսակալներու ձեռքով կառավարուել սկսաւ: Այս արար կուսակալները կը կոչուէին Ամիրաներ կամ Ռոսիկաններ:

Պատմած. — ԿՐԹՆԱԿԱՆ ՀԱՆՄԱՆՔ

Այն օրէն երբ Հայոց թագաւորութիւնը ջնջուեցաւ և Հայաստան պարսիկ և նոյն իսկ հայ մարդպաններու ձեռքով կառավարուել սկսաւ, Հայերը մինչև Յազկերտ Բ. ի թագաւորութեան ժամանակ (439—457) քիչ մը հանգըստացան. վասն զի Պարսիկներն Հայոց ներքին գործերուն չէին խառնուեր, այլ մի միայն Հայաստանի վերին հսկողութիւնն իրենց վրայ առած էին: Բայց Յազկերտի երեւումով՝ խաղաղութիւնը վրդովուեցաւ և հալածանքներն սկսան:

Յազկերտ իր նախորդներուն նման կը մտածէր թէ Հայերը քրիստոնէայ մնալով երբևք չպիտի հպատակին Պարսից, այլ առիթը ներկայանալուն՝ պիտի միանան իրենց հաւատակից Հռոմիներուն. ուստի Գենչապուհ անունով մէկը զրկեց Հայաստան, վարպետութեամբ որսալու համար հայ նախարարները, որոնցմէ մէկ քանին ճիշտ է որ ինկան Գենչապուհի ծուղակը. իսկ անոնք որ Յազկերտի առաջարկներուն բռուն կերպով հակառակեցան, թագաւորին քով կանչուեցան և հոն՝ սպառնալիքներու տակ՝ գոնէ երեսանց կրակապաշտութիւնն ընդունելով Հայաստան դարձան: Այս ուրացող նախարարներուն կ'ըն-

կերանային նաև Պարսիկ մոգեր, Հայաստանի մէջ ատրուշաններ կանգնելու եւ կրակապաշտութիւնն արձակ համարձակ տարածելու համար. բայց երկար ճամբորդութենէ ետք երբ Հայաստան մտան, ժողովուրդը հայհուշներով և անարգանքներով ընդունեց զանոնք: Նախարարներու այս ուրացութեան վրայ ամէն մէկ տունէն լաց ու կոծ կը լսուէր, ամէն տեղ անէծք կը կարգացուէր անոնց հասցէին: Հայոց սպարապետը՝ Վարդան Մամիկոնեան՝ եղած չարիքները տեսնելով, իր Հմայեակ եղբօր հետ և բոլոր ընտանիքով ճամբայ ելաւ դէպի Հոռոմոց երկիրը. բայց Հայոց մարզպան Վասակ Սիւնեցի իշխանը, նոյնպէս նաև հայ տանուտէրներն ու եկեղեցական դասը, լսելով Վարդանի գաղթը, յատուկ պատգամաւորութիւն մը ղրկեցին եւ ետ դարձուցին զայն, երգմամբ խոստանալով դարմանել եղած չարիքը: Ուստի՝ բոլորովին դադանի կերպով սկսան պատրաստուել միահամուռ ապստամբութեան, որուն թէեւ օգնել խոստացած էր նաև Հոռոմներու Թէոդոս Բ. կայսրը, բայց իր մահը վրայ հասնելով (450) Հայերը՝ զրկուեցան այս կարեւոր օգնութենէն:

Հարցարան. — 45. Ի՞նչ են Մարզպանները: — 46. Ի՞նչ են Ուստիկանները: — Հայոց դէմ կրօնական հալածանքն ե՞րբ եւ որմէ ձեռնով սկսաւ:

ԻԴ. ԴԱՍ. — ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

47. Վարդան Մամիկոնեան Ս. Սահակ հայրապետի թուռն էր և Հայոց սպարապետ, որ Պարսից Յազկերտ Բ. թագաւորին սպառնալիքներուն ու բռնութիւններուն տակ երեսանց քրիստոնէութիւնն ուրացած բայց ներսէն թուռդ կերպով հայ քրիստոնեայ մնացած նախարարներէն մէկն էր:

48. Այս քաջը վաթսուն հազար հօգիի զլուխ անցնելով՝ մեր ազգին ու կրօնքին փրկութեան համար պատերազմեցաւ կրակապաշտ Պարսիկներու դէմ, և անոնց մեծ կոտորած տալէ ետք՝ հազար երեսունըվեց կտրիճներով նահատակուեցաւ:

Պատմած. — ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թէոդոս Բ. ի մահուան լուրը մեծ ցաւ պատճառեց Հայերուն. և սակայն՝ առանց ժամանակ կորսնցնելու՝ նոր պատգամաւորութիւն մը ղրկեցին նորապսակ կայսր Մարկիանոսին, յիշեցնելով իր նախորդին խոստումը: Պատասխանը մերժողական եղաւ: Ուստի՝ հայ յեղափոխականներն իրենց գլխուն ճարը նայեցան. և այլևս առանց դրսէն օգնութիւն սպասելու, իրենց ուժերուն ապաւինած, ապստամբութեան դրօշը պարզեցին (451): Վասակ իշխանն ու յետադիմական նախարարներէ ոմանք՝ հակառակ որ երդումը րբա՞ծ էին՝ այս ապստամբութեան

դէմ կեցան, և ամէն միջոցներով աշխատեցան ժողովուրդը դրդուել յեղափոխականներու դէմ, ստեղծելով



ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ

հակայեղափոխական հոսանք մը, և մասամբ յաջողեցան: Այս վիճակին մէջ անձնուրաց կուռողներու շարքն ստիպ-

ուած էր միաժամանակ կռիւ մղել թէ՛ ներքին՝ հակայեղափոխական տարրերու դէմ, և թէ՛ հայ ազգին ու կրօնքին թշնամի Սասանեաններու դէմ:

Ուժերը բաժնուած էին:

Եւ եղաւ ինչ որ կապատուէր. — Վասպուրական նահանգի Շաւարշան կամ Արտաղ գաւառին մէջ, Տղմուտ գետին քով, Աւարայր գիւղին մօտերը՝ հայ և պարսիկ իրարու զարնուեցան. պատերազմն սկսած էր, որ սակայն Հայոց համար շատ ձախող վախճան ունեցաւ. վասն զի հայ բանակին մէջ առնուած հակայեղափոխական զինուորները՝ պատերազմի դաշտէն վատաբար փախան, ջլատելով Վարդանի ուժերը. և Վարդան՝ թշնամիին սաստիկ ջարդ մը տալէ ետք՝ քաջաբար նահատակուեցաւ իր հաւատարիմ ընկերներով. իսկ միւս կողմէ՝ դասալիք զինուորներն իրենց արժանի պատիժը գտան, կա՛մ մորթուելով Պարսիկներէ և կամ ոտնակոխ ըլլալով անոնց փիղերէն:

Այս պատերազմին մէջ հայ բանակին զինուորներուն ամբողջական թիւն էր՝ հակայեղափոխականներն ալ միասին հաշուելով՝ վաթսուն հազար. իսկ նահատակներու թիւն հասաւ՝ հազար երեսունըվեցի:

Նարցարան. — 47. Ո՞վ էր Վարդան Մամիկոնեան: — 48. Ի՞նչ ըրաւ Վարդան: = Վարդանանց պատերազմն ի՞նչպէս կատարուեցաւ:

ԻԵ. ԴԱՍ. — ԱՏՐՈՐՄԻՉԴ ՄԱՐԶՊԱՆ ԵՒ
ՀՄԱՅՆԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

49. Պատերազմին լմննալէն ետք Յաղկերտ
Հայոց վրայ մարզպան դրաւ Ատրորմիդդ անունով
մէկը և Հայերը հանդարտեցնելու համար ստիպու-
եցաւ այլևս վերջ տալ կրօնական հալածանքներու,
հրամայելով բանալ բոլոր եկեղեցիներն և ազատ
կերպով պաշտել քրիստոնէութիւնը:

50. Այս միջոցին վարդանի եղբայրը՝ Հմայեակ՝
Տայոց լեռներն ապաստանած էր, և փախստական
նախարարները, պաշտօնեաներն ու ժողովուրդը
հոն հաւաքուելով պատրաստութիւն կը տեսնէին:
Ասոնք Որջնահաղ (այժմ՝ Օշնախ) գիւղին մէջ կա-
տաղի կռիւ միեցին Պարսից դէմ. այնտեղ նահա-
տակ ինկաւ Հմայեակ:

Պատմած.—ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԵՏԵՒԱՆԻԲԸ

Ինչպէս ուս կառավարութիւնը մի քանի տարի
առաջ Հայոց եկեղեցական կալուածները բռնութեամբ
գրաւելէ ետք՝ հայ ժողովուրդին արդար զայրոյթին
պոռթկումը տեսնելով ստիպուեցաւ ետ տալ բոլորն ալ,
այսպէս ալ Յաղկերտ բուն դիմադրութեան առջեւ տեղի
տուաւ, և իր նոր մարզպան Ատրորմիդդ իշխանին հրա-
ման ըրաւ անուշութեամբ վարուիլ Հայոց հետ, քրիս-
տոնէութեան դէմ եղած հալածանքը դադրեցնել, բանալ

բոլոր գոցուած եկեղեցիները, և պատասխանատուութեան
չենթարկել պարսիկ մոգերը սպաննողներն ու միւս քա-
ղաքական յանցաւորները:

Բայց խորամանկ Պարսիկը մէկ կողմէ հաշտութեան
ձեռք կ'երկնցնէր Հայոց, իսկ միւս կողմէ վարպետու-
թիւնով իր ճիրաններուն մէջ կ'անցընէր յեղափո-
խութեան գլխաւոր վարիչներէն ողջ մնացածները, այ-
սինքն՝ Յովսէփ կաթողիկոսը, Ոչտունեայ Սահակ եպիս-
կոպոսը, Ղեւոնդ երէցը, և ուրիշ քահանաներ ու սար-
կաւազներ, ու մի քանի նախարարներ, որոնք Վասակի
հետ միասին դատուելու համար Յաղկերտի առջեւ հան-
ուեցան: Վասակ — իրրեւ պատճառ այս բոլոր չարիք-
ներուն — պատուէն զրկուեցաւ, — թերեւս ձեւակեր-
պութեան համար, — և պալատին մէջ վար դրուեցաւ.
Իսկ միւսները՝ ամբողջութեամբ աքսորուեցան:

Վասակ՝ իր ըրած դաւաճանութեան համար զղջալով՝
իր վերջին օրերն ապաշխարութեամբ անցուց:

Գալով աքսորականներու, անոնցմէ եկեղեցական
դասը՝ Յաղկերտի կատղած մէկ միջոցին՝ մահուան դա-
տապարտուեցաւ և նահատակուելով մարտիրոսացաւ (455).
Իսկ աշխարհականները՝ Յաղկերտի սատկելէն ետք աղտոտ
արձակուեցան և իրենց ընտանիքներով դարձան Հայաս-
տան (465):

Հարցարան. — 49. Պատերազմէն ետք ի՞նչ եղաւ եւ ի՞նչ
կարգադրութիւններ ըրաւ Յաղկերտ: — 50. Ո՞վ էր Հմայեակ եւ
փախստականներու հետ ի՞նչ կ'ընէր: Ի՞նչ եղաւ Հմայեակ: —
Վարդանանց պատերազմին հետեւանքն ի՞նչ եղաւ: Ի՞նչ եղան
ապստամբներն ու Վասակ:

ԻԶ. ԴԱՍ. — ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

51. Տայոյ մէջ նահատակուող Հմայեակ Մա-
միկոնեանին մեծ տղան էր Վահան, որ պղտիկ
հասակին մէջ իր եղբայրներուն հետ գերի բռնը-
ուելով տարուած էր Պարսկաստան, և յետոյ
Վրաց Աշուշայ Բդեշխին բարեխօսութեամբ ազա-
տած և Վրաստան անցնելով՝ իբրև բարի քրիս-
տոնեայ մեծցած էր:

52. Վահան՝ երկրորդ ապստամբութեան գը-
լուխ անցնելով՝ անդադար պատերազմեցաւ
Պարսից դէմ, մինչև որ Պարսիկներն ինքնաբերա-
բար ստիպուեցան հաշտուիլ Հայոց հետ և դա-
շինք դնել այլ ևս չհալածելու Հայերը, խոստանա-
լով նաև գոհացում տալ ապստամբներու բոլոր
պահանջներուն (485):

Պատմած. — ԵՐԿՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Հայերն՝ ազատութեան սէրէն վառուած բռնկած՝
կրակապաշտ Պարսից լուծը թօթափելու համար իրենց
աչքերը նորէն դարձուցին դէպի Արևմուտք, քրիստոնե-
այ պետութենէ մը օգնութիւն սպասելու ակնկալու-
թեամբ: Զո՛ւր անդը պատգամաւոր զրկեցին Հռոմներու
Լեոն Ա. կայսրին (457—474), որ չոր խոստումներով
խաբեց Հայերը: Ուստի՝ այս անգամ ալ առանց դրսի
օգնութեան՝ տարիներով պատրաստութիւն տեսան Հայք:
Սակայն այս պատրաստութիւնը մասնուեցաւ, և Ատր-

ԻԷ. ԴԱՍ. — ՎԱՀԱՆԻ ՅԱԶՈՐԳՆԵՐԸ

53. Վահան երկար տարիներ Հայաստանը կա-
ռավարելէ ետք խաղաղութեամբ մեռաւ, և իբրև
մարդպան իրեն յաջորդեց իր Վարդ եղբայրը.
բայց հազիւ թէ երեք տարի անցաւ՝ Վարդ պաշ-
տօնանկ եղաւ, և տեղը դրուեցաւ Պարսիկ մը,
թէեւ ասիկա ալ իր պաշտօնին վրայ երկար չմնաց,
ու Մժէժ Գնունի իշխանին յանձնուեցաւ մարդ-
պանութիւնը. և այսպէս երկար ժամանակ իրա-
րու ետեւէ հայ կամ պարսիկ մարդպաններու
ձեռքով կառավարուեցաւ Հայաստան:

54. Բայց 628ին Հռոմայ Հերակլ կայսրը Պար-
սիկները նուաճելով՝ Հայաստան ալ Հռոմներու
գերիշխանութեան տակ անցաւ և անոնց կողմէ
դրուած հայ կուսակալներու կամ Կիրապաղաս-
նետու ձեռքով կառավարուիլ սկսաւ (629), մին-
չև որ Արաբները չորս զօրաւոր յարձակումէ ետք
Հայաստանի տիրեցին (652):

Պատմած. — ԱՐՍԲԱՅԻԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Սասանեան պետութեան վերջին տարիներուն՝ Հռ-
ոմները Պարսից դէմ մղուած պատերազմին մէջ յաղ-
թող հանդիսացան, և Հայաստան՝ իր հին (հռոմէապարս-
կական) սահմանները պահելով հանդերձ՝ գերիշխանու-
թիւնը Հռոմներու ձեռք անցաւ և իրենց կողմէ դրուած
հայ կուսակալներու կողմէ կառավարուիլ սկսաւ: Այս
կուսակալները կը կոչուէին Կիրապաղաս:

Այս միջոցին Հայաստանի հարաւային սահմաններուն վրայ երեւցաւ արիւնարբու նոր ազգ մը, որ 636 թուին իր առաջին մուտքն ըրաւ Հայաստան, այրելով, մոխիր դարձնելով բազմաթիւ գիւղեր ու քաղաքներ, ամբողջ կարմիր ներկելով կանանչ դաշտերն ու ձորեր, իրեն և իր կրօնքին հպատակեցնելու համար ամբողջ ժողովուրդը: Այս ազգն էր արաբական ազգը:

Արաբացիք իրենց առաջին արշաւանքին արդիւնքէն գինովցած, սկսան անդադար կերպով աւերել Հայոց երկիրը, յարձակիլ պարսկական ու հուսթական կոիւնրէ յոգնած՝ ուժասպառ խեղճ ժողովրդին վրայ: Տարիներ տեւող արշաւանքներէ ու աւերումներէ ետք՝ վերջապէս Արաբացիք տէր դարձան Հայաստանի (652), և իրենց կողմէ Արդււայ կամ Ապուուլահ անունով ոստիկան (= Կուսակալ) մը դրին Հայոց վրայ:

Հայերն արաբական տիրապետութեան տակ խաղաղութեան երես երրեք չտեսան: Իրենց բաժինն էր աքսոր, բանտ, գլխատում և խմբական կոտորում: Արաբներն իրենց բարբարոսութիւնն այնչափ յառաջ տարին որ Արդււայի յաջորդող ոստիկանը՝ Կաշմ՝ հայ իշխանները խաբէութեամբ Նախիջևեանի եկեղեցին հաւաքեց և զայն կրակի տալով ողջ ողջ այրեց բոլորը: (Ասիկա մեզ կը յիշեցնէ մեր օրերը կատարուած նմանօրինակ բարբարոսութիւն մը. — Համիտեան կոտորածէ փախչելով եգեսիայի եկեղեցին ապաստանած Հայերն ամբողջութեամբ այրեցան, խուժանին կողմէ կրակի տրուելով նոյն եկեղեցին:)

Հայաստանի վերջին արաբ ոստիկանն եղաւ Ապու-սէթ, որ Սասունցիներէն սպաննուեցաւ: Ամիրապետն ասոր վրէժը լուծելու համար Բուխա անունով անգուլթ զօրավար մը զրկեց Հայաստան, և հրաման ըրաւ հայ

իշխանները բռնելով իրեն զրկել, երիտասարդները բռնի կերպով մահմտականացնել, իսկ մնացածները ջարդել: Բուխա իր պետին հրամանները կէտ առ կէտ կատարեց: Երբ իշխանները շղթայակապ ամիրապետին առջև հանուեցան, իրենց առաջարկ եղաւ մահմտականութիւնն ընդունիլ. անոնք որ ընդունեցան՝ ազատ արձակուեցան, իսկ միւսները նահատակուեցան: Իրենց հաւատքին հաւատարիմ մնացող խումբին մէջ կը գտնուէր նաև Հայոց սպարապետը՝ Սմբատ, որ բանտի մէջ մեռաւ, և այս պատճառով կոչուեցաւ՝ խոստովանող:

Հարցարան. — 53. Որո՞նք յաջորդեցին Վահանի: — 54. Ի՞նչպէս Հռոմներու ձեռք անցաւ Հայոց գերիշխանութիւնը, եւ մինչեւ ո՞ր ժամանակ տեսց: = Արաբներն ի՞նչպէս զրաւեցին Հայաստանը եւ ի՞նչ անգթութիւններ գործեցին հոն:

ԻԸ. ԴԱՍ. — ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆ

55. Սմբատ Խոստովանողի Աշոտ անունով տղան Արաբներու սիրցնելով ինքզինքը, ամիրապետի կողմէն նախ «իշխանաց իշխան» տիտղոսն ստացաւ (859) և յետոյ թագաւորական թագ ու զգեստներ ընդունելով՝ «Հայոց թագաւոր» կոչուեցաւ (885), պայմանաւ որ Հայերը միշտ հաւատարիմ և հարկատու մնան Արաբներու: Ասանկով հաստատուեցաւ Բագրատունեաց հարստութիւնը:

56. Հայաստանի մէջ կատարուած այս զար-

մանալի փոփոխութիւնը Հոռոմներու նախանձը շարժեց, և որպէս զի իրենք (Հոռոմներն) ալ Հայոց սիրտը գրաւեն և անոնց բարեկամութիւնը շահին, կայսրն իր կողմէ արքայական թագ ու թանկագին նուէրներ զրկեց մեր Աշոտ Ա. թագաւորին:

Պատմած.— ԱՐԾՐՈՒՆԵՍՅ ԹՄԳԱԻՈՐՈՒԹԻԻՆԸ

Աշոտ Ա. Բիւզանդիոն (=Կ. Պոլիս) երթալէ և Յոյներու կամ Հոռոմներու կայսրին այցելութիւն սալէ ետք երբ Հայաստան դարձաւ, դեռ իր մայրաքաղաքը Հնաստ ձամբան հիւանդանալով մեռաւ (889), որուն վրայ Աշոտի եղբոր՝ Աբասի և մեծ դաւկին Սմբատի միջեւ դահակութեան իրաւունքի մասին թշնամութիւններ ու կռիւներ եղան թէև, բայց վերջապէս Սմբատ իր հօր յաջորդելով Հայոց թագաւոր պսակուեցաւ (892—913):

Սմբատ Ա. ի թագաւորութեան ժամանակ Ատրպատականի մէջ նստող Ափշին անուն օստիկանը քանի՛ քանի անգամներ Հայոց վրայ յարձակելով մեծամեծ վնասներ պատճառեց, և երբ ան ստակեցաւ՝ տեղն անցաւ իր Յուսուփ կամ Եուսուֆ կղբայրը, որ Ափշինէն աւելի արիւնարբու մէկն եղաւ և աւելի մեծ անգթութիւններ գործեց Հայաստանի մէջ:

Սակայն Հայաստանի վրայ եկած աղէտներուն ամենէն սոսկալին և ամենէն վնասակարը՝ ներքին թշնամիներու կողմէ պետութեան դէմ եղած հարուածներն էին: Այսպէս՝ Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանը, որ Սմբատ Ա. ի քեռորդին էր, թագաւորէն ուզեց որ Նախիջեւան քաղաքն իրեն տայ. բայց որովհետև Սմբատ անկէ առաջ Սիւնեաց իշխանին նուիրած էր զայն, Գա-

ղամբնց Ս. Գրիգոր եկեղեցին, Ս. Փրկիչ եկեղեցին, Առաքելոց եկեղեցին, Միջնաբերդին սրահներն ու եկեղեցիները, «Բագրատունեաց պալատ» կոչուած մեծ և ամուր շէնքը, «Նախչի» անունով ձանօթ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, Բեխենց վանքը, Բաղնիքը, Ղրղ-Ղալա և իր եկեղեցիները: Գաղաքին քովէն ողբալով կանցնի Ախուրեանի գետը (= Արփա-չայ), որուն վրայ ձգուած է երկյարկանի կամուրջ մը. այժմ կործանած: Ալ չեմ յիշեր «Կիտէն կէլմէզ» կոչուած գեանախոր ձամբաններն ու ժայռերու մէջ փորուած մատուռները, դամբարանները, խանութները, բնակարանները, ևն:

Հարցարան. — 59. Ո՞վ յաջորդեց Աշոտ Բ. ի, և ի՞նչ ըրաւ: — 60. Աբասի ո՞վ յաջորդեց, և ի՞նչպիսի թագաւոր նստաւ: Փողովուրդն ի՞նչ անուն տուաւ Աշոտ Գ. ի: Կարուց թագաւորութիւնն ի՞նչպէս հաստատուեցաւ: = Կրնա՞ք նկարագրել Անին:

Ա. ԴԱՍ. — ՍՄԲԱՏ Բ. ԵՒ ԳԱԳԻԿ Ա.

61. Աշոտ Ողորմածին մեծ տղան՝ Սմբատ՝ հօրը յաջորդելով (977-990) Անիի տարածութիւնն ընդարձակեց և նոր պարիսպներով ամրացուց քաղաքը, յետոյ ձեռնարկեց հռչակաւոր Մայր եկեղեցիին շինութեան, բայց աւարտումը չտեսած՝ մեռաւ:

62. Ասոր յաջորդեց իր Գագիկ եղբայրը (990-1020), որ շատ քաղաքագէտ և հեռատես մէկն ըլլալով՝ զիտցաւ սիրաշահիլ երկրին բոլոր

մանալի փոփոխութիւնը Հոռոմներու նախանձը շարժեց, և որպէս զի իրենք (Հոռոմներն) ալ Հայոց սիրտը գրաւեն և անոնց բարեկամութիւնը շահին, կայսրն իր կողմէ արքայական թագ³ութեան կազմին նուէրներ զրկեց մեր Աշոտ Ա. թագաւորին:

Պատմած. — ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Աշոտ Ա. Բիւզանդիոն (=Կ. Պոլիս) երթալէ և Յոյներու կամ Հոռոմներու կայսրին այցելութիւն տալէ ետք երբ Հայաստան դարձաւ, զեռ իր մայրաքաղաքը⁴ Հնաւ սած ճամբան հիւանդանալով մեռաւ (889), որուն վրայ Աշոտի եղբոր՝ Աբասի և մեծ զաւկին Սմբատի միջեւ գահակալութեան իրաւունքի մասին թշնամութիւններ ու կռիւներ եղան թէեւ, բայց վերջապէս Սմբատ իր հօր յաջորդելով Հայոց թագաւոր պսակուեցաւ (892—913):

Սմբատ Ա. ի թագաւորութեան ժամանակ Ատրպատականի մէջ նստող Ափշին անուն ռաթիկանը քանի՛ քանի անգամներ Հայոց վրայ յարձակելով մեծամեծ վնասներ պատճառեց, և երբ ան սատկեցաւ՝ տեղն անցաւ իր Յուսուփի կամ Եուսուֆի կղզայրը, որ Ափշինէն աւելի արիւնարբու մէկն եղաւ և աւելի մեծ անգթութիւններ գործեց Հայաստանի մէջ:

Սակայն Հայաստանի վրայ եկած աղէտներուն ամենէն սոսկալին և ամենէն վնասակարը՝ ներքին թշնամիներու կողմէ պետութեան դէմ եղած հարուածներն էին: Այսպէս՝ Վասպուրականի Գագիկ Արժրունի իշխանը, որ Սմբատ Ա. ի քեռորդին էր, թագաւորէն ուզեց որ Նախիջևան քաղաքն իրեն տայ. բայց որովհետեւ Սմբատ անկէ առաջ Սիւնեաց իշխանին նուիրած էր զայն, Գա-

գիկի խնդրանքը մերժեց: Ասոր վրայ Գագիկ զիմեց Յուսուփին, և Սմբատի մասին չարախօսութիւններ բրաւ: Յուսուփի Հայոց ուժերը բաժնելու և անոնց մէջ թշնամութեան ու խռովութեան որո՞մ ցանկելու համար Գագիկին գլուխը թագ զնելով Վասպուրականի թագաւոր անուանեց (908—937), և այս անգամ միացած ուժերով ներս ու գիւղերը, ջարդեց կոտորեց անմեղ ժողովուրդը, թալանի տալով այդ խեղճերուն բոլոր ստացուածքը, այնպէս որ ամբողջ Հայաստան աւերակ դարձաւ:

Գագիկ՝ Հայաստանի ողբալի վիճակը տեսնելով խիղճը շարժեցաւ և Սմբատի հետ հաշտուելու գեղ. բայց Սմբատ այն տեսակ անգութ դաւաճանի մը բարեկամութիւնն իրաւամբ մերժեց: Ասոր վրայ Գագիկ իր մեղքերը քաւելու համար Ալթամարի հոյակապ եկեղեցին շինել տուաւ իր ծախքով:

Վասպուրականի Արժրունեաց թագաւորութիւնը տեւեց 113 տարի:

Հարցարան. — 55. Ո՞ր եղաւ Բագրատունեաց առաջին թագաւորը եւ ի՞նչ պայմաններով: — 56. Հոռոմներն ի՞նչ ըրին երբ իմացան այս փոփոխութիւնը: = Ի՞նչպէս հաստատուեցաւ Արժրունեաց թագաւորութիւնը: Ո՞րքան տեւեց Արժրունեաց թագաւորութիւնը:

ԻՔ. ԴԱՍ. — ԱՇՈՑ ԵՐԿԱՔ

57. Սմբատ Ա.ի Աշոտ որդին խմանալով որ իր հայրն Արաբներու կողմէ սպաննուած է, անոր վրէժը լուծելու համար Արաբներու վրայ յարձակեցաւ, և բոլորն ալ քշեց՝ դուրս հանեց երկրէն։ Ասոր վրայ հայ նախարարները միանալով՝ Աշոտ Բ.ը Հայոց թագաւոր պատկեցին (915-928), որ իր արտակարգ ուժին և կատարած քաջութիւններուն պատճառով՝ Երկաթ մակդիրն ստացաւ։

58. Աշոտ Բ.ի թագաւոր օժուելէն ետք Արաբները Հայաստանի վրայ նորէն յարձակիլ սկսան, և նորանոր աւերներ գործեցին։ Հռումներու Կոստանդին է. կայսրն, խմանալով այս բոլորը, Աշոտը Բիւզանդիոն հրաւիրեց, և օգնական յոյն զօրքեր ապրով Հայաստան զրկեց։

Պասլաւ. — ՀԱՅՈՑ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԸ

Աշոտ Բ.ի թագաւորութեան ժամանակ Արաբները նորէն յարձակեցան Հայաստան, և եօթը տարի շարունակ քանդեցին երկիրը։ Դժբախտաբար այս յարձակումներու զինադրող ուժ չէր մնացած Հայաստանի մէջ, վասն զի նախարարներն իրարու դէմ լարուած և իշխանները թագաւորին դէմ դաւաճան գիրք մը բռնած էին, բոլորն ալ իրենց անձնական շահերէն ու փառասիրութենէ մղուած։ Այս ներքին խռովութիւններու և արտաքին կռիւ-

ներու դէմ դնելու միշտ պատրաստ մշակ դասակարգն ստիպուած էր իր գուլթանը ձգել և գիշեր ցերեկ զէնքի



ԱՇՈՑ ԵՐԿԱՔ

տակ մնալ, որով արտերը մնացին երեսի վրայ, մշակութիւնը դադրեցաւ, և հետեանքն եղաւ՝ սոսկալի սով մը, այնպէս որ շատերն անօթութիւնէ մեռան, հարուստներն հացի համար իրենց ունեցածը ծախելով վերջին ծայր

աղքատացան, և երբ այլ ևս ուրիշ բան չգտան ուտելու՝ սկսան իրար մորթել և մարդկային մտով սնանիլ . . .

Յովհան կաթողիկոս այս վիճակին դարձան մը գբառնելու համար նախ Հոռոմներու Կ. Պոլսի պատրիարքին և յետոյ Կոստանդին Է. կայսրին (913-959) դիմեց: Կայսրը կաթողիկոսն ու թագաւորը Կ. Պոլիս հրաւիրեց, անձամբ խօսելով կարգադրութիւն մը ընելու համար. բայց կաթողիկոսը չկրցաւ երթալ, այլ Աշոտ Բ. առանձինն ելաւ գնաց կայսրին քով, և անկէ մեծ պատիւներով ընդունուեցաւ: Կայսրն ամէն բանի վրայ մանրամասն տեղեկութիւն առնելէ ետք՝ Աշոտին դունդ մը յունական զօրք տալով Հայաստան ղրկեց:

Յուսուվի՝ որ իր շահերուն հակառակ կը գտնէր այս մերձեցումը, Հայոց մէջ նոր երկպառակութիւն մը ձգելու համար Աշոտ Բ. ի Շապուհ հօրեղբորորդին՝ Աշոտ սպարապետը՝ արքայական թագով պսակեց եւ Հայոց թագաւոր անուանելով Հայաստան ղրկեց: Նախարարներն երկու կուսակցութեան բաժնուեցան, և կռիւն սկսաւ ու տարիներ տեւեց. հազիւ թէ կաթողիկոսին միջնորդութեամբ երկու կողմերը հաշտուեցան և խաղաղութիւնը տիրեց երկրին մէջ:

Հարցարան. — 57. Սմբատին ո՞վ յաջորդեց եւ ի՞նչպէս: — 58. Ի՞նչ ըրին Արարները: Ի՞նչ ըրին Հոռոմները: Այդ ժամանակ ի՞նչ խռովութիւններ եղան Հայաստանի մէջ:

Լ. ԴԱՍ. — Ա.ԲԱՍՄ ԵՒ ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ


59. Աշոտ Բ. ի յաջորդեց իր եղբայրը՝ Աբաս (928-951), որ խելացիութեամբ ու ճարպիկութեամբ երկիրը խաղաղեցուց և բարեկամական դաշն կապեց Արաբներու հետ. յետոյ արքայական գահը Շիրակաւանէն (=Պաշ-Շէօրէկէլ) Կարս փոխադրելով այնտեղի Մայր Եկեղեցին հիմնարկեց:

60. Աբասի մեռնելէն ետք իր Աշոտ որդին 9 տարի խաղաղ կերպով կառավարեց երկիրը, որուն վրայ նախարարները միանալով գահ բարձրացուցին զայն (961-977): Աշոտ Գ. աղքատասէր, բարեգործ ու բարեպաշտ թագաւոր մը ըլլալուն՝ Ողորմած անունը ստացաւ: Ասիկա թագաւորական աթոռը Կարսէն Անի փոխադրեց, իսկ իր Մուշեղ եղբայրը Կարսի մէջ թագաւոր ձեռնադրուելով՝ Կարուղ քաղաւորութիւնը հաստատուեցաւ, որ տեւեց 103 տարի:

Պատմած. — Ա. Ն. Ի. Բ. Ա. Ղ. Ա. Բ.

Աշխարհիս մէջ Անիի նման շատ քիչ քաղաք կայ, որ իր ներկայ աւերակներով կենդանի մարդու մը պէս խօսի այցելուին հետ, տանի զայն գէպի հեռաւոր թուականներ, պրտոմէ իր գլխէն անցածը, իր փառաւոր օրերը, իր մեծութիւնը, առածի կարգ անցած իր հազար ու մէկ եկեղեցիները, հոյակապ պալատները, կրկնակի

պարիսպները, բարձրաբերձ բուրգերն ու միւս զանազան շինութիւնները: Անին կարելի է անուանել՝ քաղաքնե-
րու թագուհին և աւերակներու մայրը:



ԱՆԻ ՔԱՂԱՔ

Աշոտ Գ.՝ մայրաքաղաքի վերածելով Անին՝ նորանոր շէնքերով ձօնացուցած ու պարիսպներով շրջապատած է զայն: Յետոյ իր զաւակներէն և յաջորդներէն Սմբատ Բ. ու Գագիկ Ա. բազմաթիւ շինութիւններով ու մանաւանդ նշանաւոր Մայր Եկեղեցիին հիմնարկութեամբ դեղեցկութեան գագաթնակէտը հասուցած են քաղաքը, որուն կառուցման գեղարուեստական հսկողութիւնը կատարած է հայազգի Տրդատ ճարտարապետ:

Մայր եկեղեցիէն զատ Անիի մէջ մինչև հիմայ կիսականգուն մնացած շէնքերն են՝ Դատարանը, որ ետքէն մշակիթի փոխուած է, կործանուած աշտարակը, Ապու-

ղամբենց Ս. Գրիգոր եկեղեցին, Ս. Փրկիչ եկեղեցին, Առաքելոց եկեղեցին, Միջնաբերդին սրահներն ու եկեղեցիները, «Բագրատունեաց պալատ» կոչուած մեծ և ամուր շէնքը, «Նախշի» անունով ծանօթ Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, Բեխենց վանքը, Բաղնիքը, Ղրղ-Ղալա և իր եկեղեցիները: Քաղաքին քովէն ողբալով կանցնի Ախուրեան գետը (= Արփա-չայ), որուն վրայ ձգուած է երկյարկանի կամուրջ մը: այժմ կործանած: Այլ չեմ յիշեր «Կիտէն կէլմէզ» կոչուած դեանափոր ճամբաներն ու ժայռերու մէջ փորուած մատուռները, դամբարանները, խանութները, բնակարանները, ևն:

Հարցարան. — 59. Ո՞վ յաջորդեց Աշոտ Բ.ի, և ի՞նչ ըրաւ: — 60. Արտսի ո՞վ յաջորդեց, և ի՞նչպէս թագաւոր. նստաւ: Ժողովուրդն ի՞նչ անուն տուաւ Աշոտ Գ.ի: Կարուց թագաւորութիւնն ի՞նչպէս հաստատուեցաւ: = Կրնա՞ք նկարագրել Անին:

ԼԱ. ԴԱՍ. — ՍՄԲԱՏ Բ. ԵՒ ԳԱԳԻԿ Ա.

61. Աշոտ Ողորմածին մեծ տղան՝ Սմբատ՝ հօրը յաջորդելով (977-990) Անիի տարածութիւնն ընդարձակեց և նոր պարիսպներով ամրացուց քաղաքը, յետոյ ձեռնարկեց հռչակաւոր Մայր Եկեղեցիին շինութեան, բայց աւարտումը չտեսած՝ մեռաւ:

62. Ասոր յաջորդեց իր Գագիկ եղբայրը (990-1020), որ շատ քաղաքագէտ և հեռատես մէկն ըլլալով՝ գիտցաւ սիրաշահիլ երկրին բոլոր



ԳԱԳԻԿ Ա.

Թշնամիները, այնպէս որ մինչեւ իսկ Արաբներու կողմէ Շահնշահ կամ Արքայից Արքայ տիրազուն ստացաւ:

Գագիկ Ա. Անիի մէջ Ս. Գրեգորի անունին նուիրուած փառաւոր եկեղեցի մը շինել տուաւ. իսկ Կատրանիդէ թագունին՝ կիսատ մնացած Մայր եկեղեցին աւարտեց:

Պատմած. — ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՄԲԱՏ ԵՒ ԻՐ ՎՍՏՈՒԹԻՒՆԸ

Գագիկ Ա. ի մտնելէն ետք դահ բարձրացաւ իր մեծ տղան՝ Յովհաննէս Սմբատ (1020—1040), որ նոյն դահի ժառանգութեան մասին ահագին կռիւներ ունեցաւ իր պզտիկ եղբոր՝ Աշոտի հետ, այնպէս որ՝ Կաթողիկոսին ու նախարարներուն միջամտութիւնը հազիւ թէ քիչ մը խաղաղեցուն այս երկու հակառակորդները, այն ալ՝ Սըմզազեցունցին այս երկու հակառակորդները, այն ալ՝ Սըմբատ Գ. ի երկիրներէն մաս մը բաժին հանելով Աշոտին: Բայց որովհետեւ Աշոտ կ'ուզէր բոլոր երկիրները ձեռք անցունել և ընդհանուր Հայոց թագաւոր պսակուիլ, մի անցունել և ընդհանուր Հայոց թագաւոր պսակուիլ, մի քանի անգամներ գաղտնի դաւեր նիւթեց իր եղբոր դէմ: Այս դաւերը թէև բաւական նեղեցին Սմբատը, բայց բոլորն ալ անյաջող անցան:

Այս ժամանակներն Ափսաղներու և Գորգի թագաւորը՝ Հայոց օգնութեամբ՝ Հոռոմներու դէմ պատերազմ իրադրուեցաւ էր: Հոռոմներու Վասիլ Բ. կայսրը (976—1025) բազմաթիւ զօրքերով յարձակեցաւ Գորգի վրայ, և յաղթեց անոր. յետոյ սկսաւ քաշել Հայաստանի վրայ, և պատժելու համար Սմբատը՝ Հոռոմներու մօտեցաւ նախ իմանալով՝ սկսաւ վախնալ, և վատաբար Պետրոս Գեաղարձ կաթողիկոսի (1019—1054) միջոցով թուղթ

մը զրկեց կայսրին, խոստանալով իր մեռնելէն ետք չուռններու յանձնել Անին ու իր բոլոր տէրութիւնը: Այս գրաւոր առաջարկն ու խոստումը, որ Սմբատի կողմէ ազգին դէմ նիւթուած մեծ դաւաճանութիւն էր, սիրով ընդունեց կայսրը, և Հայոց հետ հաշտուեցաւ (1023):

Հարցարան.—61. Ո՞վ յաջորդեց Աշոտ Գ.ի, եւ ի՞նչ շինութիւններ ըրաւ:—62. Սմբատ Բ.ի յաջորդն ո՞վ էր, եւ ի՞նչ յատկութեան տէր մէկը: Ի՞նչ հիմնարկութիւն ըրաւ Անիի մէջ: Իսկ Յագուհի՞ն: —Ո՞վ է Յովհաննէս Սմբատ եւ ի՞նչ վատութիւն գործեց:

ԼԲ. ԴԱՍ. — ԳԱԳԻԿ Բ.

63. Հայոց գահին դէմ ապստամբ Աշոտին տղան էր Գագիկ, որ իր Յովհաննէս Սմբատ հորեղբոր մեռնելէն երկու տարի ետք՝ իբրեւ ժառանգորդ՝ նախարարներու կողմէ Հայոց թագաւոր հռչակուեցաւ (1042-1045):

64. Գագիկ Բ.ի գահակալութիւնը դժուար պարագաներու մէջ տեղի ունեցաւ. վասն զի չուռնները Սմբատ Գ.ի կողմէ տրուած խոստումը չէին մոռցած, և անոր գործադրութիւնը կը պահանջէին անդադար. բայց երբ տեսան որ Հայերն անդրդուելի կը մնան և զէնքի դէմ զէնք կը բարձրացնեն, Գագիկը վարպետութիւնով Կ. Պոլիս հրաւիրեցին և մէկ մին ալ թող չտուին որ Հայաստանի երեսը տեսնէ:

Պատկեր.—ՎԵՐՁ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ

Հուռոմոց Վասիլ Բ. կայսրին յաջորդ կոստանդին Թ. կայսրը (1025—1028), որ առաջուրնէ իր Վասիլ եղբոր գահակից ըլլալով՝ Հայոց երկրին մէջ բոլոր պատահածներուն ծանօթ էր մօտէն, իր մահուան անկողնին մէջ



ԱՆԻԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ

խղճալով Հայոց՝ Յովհաննէս Սմբատի կողմէ տրուած խոստումագիրը կիրակոս անունով հայ քահանայի մը տուաւ, պատուիրելով տանիլ յանձնել Հայոց թագաւորին (1028). բայց այս անարժան քահանան ոչ միայն չը

կատարեց Կոստանդնի վերջին կամքը, այլ և այն խոստմնագիրն իր քով վեց տարի պահելէ ետք բարձր գնով վաճառեց Միքայէլ Դ. կայսրին (1034):

Այս յուշայական վաճառումին վրայէն մի քանի տարի անցած էր, և ահա Յովհաննէս Սմբատ կը մեռնի:

Հոռոմները շուտով իմացան այս լուրը, և դեսպան դրկելով պահանջեցին Անին ու Հայոց թագաւորութեան մաս կազմող շրջակայ երկիրները, Հայերը բնական է թէ պիտի հակառակէին այս առաջարկին. և երբ մերժողական եղաւ իրենց պատասխանը, Հոռոմները զայրացան, և մեծ պատրաստութիւններով Անիի վրայ քալեցին: Պարիսպներու առջեւ կռիւն սկսաւ: Վահրամ Պահլաւունի սպարապետն, իր մարդերը ժողվելով, առիւծի նման նետուեցաւ թշնամիին վրայ, և ահագին ջարդ մը տալով անոնց՝ հոռոմ բանակը բոլորովին փճացուց: Ասկէ ետք Հայաստանի պահապան հրեշտակը՝ Վահրամ Պահլաւունի՝ նախարարներն ու կաթողիկոսը հրաւիրելով, Սմբատ Գ. ի եղբորորդին թագաւոր օծել տուաւ (1042):

Նոր թագաւորը՝ Գագիկ Բ.՝ թէեւ երիտասարդ, բայց Վահրամ Պահլաւունիի հայրական հոգածութեան տակ սկսաւ խելացի կերպով կառավարել երկիրը:

Հայաստանի դաւաճան Վեստ Սարգիս իշխանը՝ Գագիկ Բ. ի գահակալութեանէն առաջ շատ աշխատեցաւ որ իրեն յանձնուի թագաւորութիւնը, բայց ոչ միայն մերժուեցաւ, այլ նաև իննամակալութիւնը ձեռքէն առնուեցաւ և Գագիկ թագաւոր պսակուեցաւ. ասոր վրայ Վեստ Սարգիս գաղտնի յարաբերութիւններ տածել սկսաւ Հոռոմներու հետ, խորհուրդ տալով գալ գրաւել Անին. և երբ Հոռոմները կրկին եկան յարձակեցան Անիի վրայ, այս անգամ Գագիկ անոնց վրայ գնաց և բոլորն ալ կա՛մ կոտորեց և կամ իր երկրին սահմաններէն դուրս քշեց հեռացուց:

Հոռոմները, տեսնելով որ բռնութեամբ չպիտի կրնան հասնիլ իրենց նպատակին, այս անգամ սատանութեան դիմեցին, և խարդախութեամբ Գագիկը Պոլիս հրաւիրելով վար դրին. յետոյ գացին խիստ դժուարութիւններով գրաւեցին Անին: Ասանկով վերջ գտաւ Բագրատունեաց հարստութիւնը:

Հարցարան.—63. Ո՞վ էր Գագիկ Բ. եւ ի՞նչպէս թագաւոր հռչակուեցաւ: — 64. Ի՞նչ պարագաներու մէջ զահ բարձրացաւ Գագիկ: Ինչո՞ւ: Բայց ի՞նչ պատահեցաւ: Հոռոմներն ի՞նչպէս տէր դարձան Անիի, եւ ի՞նչպէս կործանեցաւ Բագրատունեաց հարստութիւնը:

ԼԳ. ԴԱՍ. — ԳԱԳԻԿ Բ. Ի ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

65. Կ. Պոլսի մէջ կայսրը շատ ստիպեց Գագիկը՝ որ Անին Հոռոմներու յանձնելուն հաւանութիւն տայ. բայց Գագիկ բուռն կերպով հաւանութեանցաւ այս առաջարկին: Կայսրը՝ բարկանալով՝ Մարմարայի մէջ գտնուող իշխանաց կղզիներէն մէկն աքսորեց զայն, մինչեւ որ Գագիկ՝ Անիի դաւաճան իշխաններուն ու Կաթողիկոսին հաւանութեան թուղթը տեսնելով՝ ինք ալ ակամայ հաճութիւն տուաւ:

66. Ասոր վրայ կայսրն Անիի տեղ կապալդովկիայի Պիղու քաղաքն ու շրջականները տուաւ Գագիկի, արդիւլեւով ոտք կոխել Հայաստան: Իբայս կերկրորդ աքսորավայրին մէջ Գագիկ օր մը

Կիզիստրա բերդը դիտելու գացած էր. բայց բերդին հոռոժ իշխանները Գագիկը բռնելով խեղդեցին սպաննեցին (1079):



ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Պատմած .— ՊԱՐՍԻԿ-ՍԷԼՃՈՒՔԵԱՆ ՉՍՐԻՔԸ

Հոռոմները Հայոց թագաւորութեան վերջ տալով ու Անին գրաւելով կը յուսային բոլորովին տէր դառնալ Բրիտանոնայ Արեւելքի ամբողջ երկիրներուն: Բայց այս հաշիւը սխալ ելաւ. վասն զի Պարսից Սելճուքեան հարստութեան հիմնադիր Տուղրիլ թագաւորն (1037—1063) իր վայրենութեան ու բարբարոսութեան նմոյշներն սկսած էր ցուցնել Հայոց, և երբ Հայաստան առանց թագաւորի մնաց՝ յարձակումներն աւելցուց, իր ճամբուն վրայ

հանդիպած գիւղերն ու քաղաքներն այրելով աւերելով անխնայ. յետոյ արշաւեց Հայոց նահանգին վրայ, ինչպէս նաև Խորքեանք, Անժիտ, Գերջան, Եկեղեաց և ուրիշ գաւառներ, բոլորն ալ ամայացնելով, քանդելով, մոխիր դարձնելով: Մանազկերտի առջև միայն պարտուեցաւ արիւնկզակ գազանը. բայց իր վրէժն առաւ Արձկէի անմեղ բնակիչներէն:

Տուղրիլին յաջորդեց իր եղբորորդին՝ Ալիաալան (1064—1072), որ իր վայրագութիւններով քար հանեց Տուղրիլի:

Ալիաալան ամենէն առաջ Անին գրաւեց և ընակիչները սրէ անցրնելով կործանեց քաղաքը (1064). յետոյ պատրաստուեցաւ Կարսի վրայ երթալ. բայց Կարուց վերջին թագաւորը՝ Գագիկ՝ (1025—1064) վարպետ միջոցի մը դիմելով ազատեցաւ փորձանքէն, և իր ազգականներն ու հաւատարիմ պաշտօնեաները ժողովելով գնաց վերջնականապէս հաստատուեցաւ Հոռոմոց երկիրը, Ծամնդաւ բերդին մէջ:

Այս պարագաներու տակ հայ ժողովուրդն, իր կեանքը փրկելու համար, ստիպուեցաւ հազարներով գաղթել Հոռոմոց իշխանութեան տակ գտնուող երկիրները, անցնել նոյն իսկ աւելի շեռու տեղեր, հաստատուել Հունգարիա և ուրիշ երկիրներ:

Հարցարան. — 65. 4. Պոլսի մէջ ի՞նչ պատահեցաւ Գագիկի: — 66. Կայսրն ի՞նչպէս վարձատրեց Գագիկը: = Հայոց ի՞նչ չարքներ դատուցին Սելճուքեան Պարսիկները:

Handwritten signature or mark.

ԼԴ. ԴԱՍ. — ՌՈՒԲԵՆԵԱՆ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆ

67. Հալածանքներուն երեսէն գաղթականութեան դիմող բազմաթիւ Հայեր ինչպէս ուրիշ վայրեր՝ նոյնպէս նաեւ Կիլիկիա հաստատուեցան: Ասոնց մէջէն Ռուբէն անունով իշխան մը, որ հաւանականաբար Բագրատունեաց յերէն էր, 1080 թուականին Գող Վասիլ, Ապիրատ, Օշին և ուրիշ խումբ մը քաջերու գլուխն անցնելով Հռոմներու դէմ ապստամբեցաւ, և փոքրիկ իշխանութիւն մը հիմնեց հոն: Այս իշխանութիւնը՝ հիմնադրին անունով՝ կոչուեցաւ Ռուբենեան կարսուրթիւն:

68. Ռուբէնի հիմնած փոքրիկ իշխանութիւնը տարիներու ընթացքով ընդարձակուեցաւ, և կամաց կամաց ամբողջ Կիլիկիա Հայոց ձեռքը անցաւ:

Ռուբենեան իշխանութիւնը տեւեց ճիշտ 295 տարի:

Պասնած. — ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կիլիկիա արևելեան կողմէն սահմանակից էր Մեծ-Հայոց, որմէ բաժնուած էր Եփրատ գետով. հարաւային սահմանը կը կազմէին՝ Միջերկրական ծովն և Ասորիք. արեւմուտքէն՝ Պամփիլիա. իսկ հիւսիսէն՝ Տաւրոսի լեռնաշղթան և Փոքր Հայք:

Կիլիկիա երկու գլխաւոր և բնական բաժանում ունի. Բարայիւն Կիլիկիա և Դաշաչիւն Կիլիկիա:



ՌՈՒԲԵՆ ԻՇԽԱՆ

Կիլիկիայի ամենէն նշանաւոր լեռներն են՝ Տաւրոսեան լեռները, որոնք Պարսկաստանէ կը սկսին և Մեծ Հայքը կտրելով՝ գլխաւոր լեռնաշղթաները կը հասնին Կիլիկիա, անկէ ալ կ'երթան Միջերկրական ծով: Նշանաւոր են նաև Ամանոս կամ Սեաւ լեռինք, որոնց բարձրութիւնը Տաւրոսի լեռներունը կ'անցնի:

Գլխաւոր գետերն են՝ Պիւռամիա (Ճիհուն), Սարոս (Սիհուն), Կիւղնոս կամ Տարսոնի գետ և Կալիւկադնոս կամ Սիլեւկիայի գետ:

Կիլիկիայի բերքերն են՝ խաղող, ցորեն, գարի, կորեկ, բամբակ, պիստակ, բրինձ, կնձիթ, շաքարեղէգ, նարինջ, կիտրոն, քրքում. նոյնպէս նաև անտառային փայտեր, ինչպէս մայրի և ուրիշներ: Կենդանիներէն կարելի է գտնել բոլոր ընտանի անասուններն ու թռչունները, ինչպէս նաև յովազի, արջի, օձի, գայլի, բորենիի նման այլ և այլ գաղաններ: Հանքերէն յիշուելու արժանի են՝ կրաքարը, երկաթը, կապարը, արծաթը, ևն:

Կիլիկիայի գլխաւոր քաղաքներն են՝ Ատանա, Սարոս գետի վրայ. Տարսոն, Կիւղնոսի վրայ. Մսիս կամ Մամեստիս, Պիւռամիսի վրայ. Ատրեւկես, Կալիւկադնոսի վրայ. իսկ ծովեզերքի նշանաւոր քաղաքներն են՝ Ադեքսանդրեակ կամ Իսքէնտէրուն, Պայաս, Այաս, Պոմպէուպոլիս, Կոռիկոս: Միւս նշանաւոր վայրերն են՝ Այնթապ, Հոռմկլայ, Սիս, Անազարբա, Բարձրբերդ, Լամբրուն, ևն:

Հարցարան.—67. Հայերն ի՞նչպէս հաստատուեցան Կիլիկիա: Ո՞վ եւ ի՞նչպէս հիմնեց Ռուբենեան հարստութիւնը: — 68. Կիլիկիա ի՞նչպէս ամրոջուեալաւ Հայոց ձեռք անցաւ: Քանի՞ տարի տեւեց այս իշխանութիւնը: — Ի՞նչ գիտէք Կիլիկիայի աշխարհագրութեան մասին:

ԼԵ. ԴԱՍ. — ՌՈՒԲԷՆԷՆ ՄԻՆՁԵՒ ԹՈՐՈՍ Բ.

69. Ռուբէնի յաջորդեց՝ իբրեւ Հայոց իշխան՝ իր Կոստանդին անունով տղան (1095-1100): Ասոր ժամանակ Կիլիկիա մտան Խաչակիրները, և մեծ օգնութիւն գտան Հայերէն: Յետոյ երբ Կոստանդին մեռաւ, իր թարոս որդին իրեն յաջորդեց (1100-1123): Ասիկա Կիզիսդրա բերդին իշխանները պատժելով և անոնց բերդը գրաւելով՝ Հոռոմներէն Գագիկ Բ.ի վրէժը լուծեց:

70. Թորոսի յաջորդեց իր եղբայրը՝ Լեւոն իշխան (1123-1137), որ իր ամբողջ կեանքը պատերազմներով անցուց. սակայն վերջապէս Հոռոմներէն գերի բռնուեցաւ և իր երկու տղոց հետ Կ. Պոլիս տարուելով բանտարկուեցաւ: Ասոր վրայ Կիլիկիա նորէն Հոռոմներու ձեռք անցաւ, բայց Լեւոնի բանտարկուած որդիներէն Թորոս Բ. Կ. Պոլսէն փախչելով եկաւ հասաւ Կիլիկիա, Հոռոմները վանեց, և երկրին տէր դառնալով իր իշխանութիւնն ամրայուց (1145-1168):

Պատմած . — Խ Ա. Չ Ա. Կ Ի Ր Ն Ե Ր Ը

Կոստանդին իշխանի ժամանակ Երուսաղէմ՝ հիմակուան պէս՝ Մահմետականներու ձեռք կը գտնուէր, որոնք հոն գացող ուխտաւորները կը նեղէին:

Երոպայի Գրիստոնեաններն Երուսաղէմ կատարուած բռնութիւններու վերջ մը դնելու համար մասնաւոր բա-

նակ մը կազմեցին, և մտան Կիլիկիա (1096): Այս բանակը կոչուեցաւ՝ Խաչակիրներու բանակ, որուն վրայ ուրիշներ ալ աւելցան ետքէն:

Խաչակիրներն երբ Կիլիկիա մտան, արդէն յոգնած և իրենց պաշարն սպառած էր, այնպէս որ ուտելիքի կողմէ շատ նեղութիւն կը կրէին: Այս լուրը Հայոց ակամօք հասնելով՝ սկսան ամէն կողմէ ուտելիք հաւաքել և շրջել անոնց: Ասկէ զատ՝ Կոստանդին իր զօրքերով գնաց միացաւ Խաչակիրներու բանակին, և Անտիօքի պաշարման ժամանակ օգնեց անոնց: Ասոր վրայ Հայերն ու Փռանկները սրտանց կապուեցան իրարու, և խնամութիւններ հաստատեցին իրենց մէջ:

Խաչակիրներու արշաւանքներէն ո՛ր և է օգուտ չբաղեց հայ ժողովուրդը, այլ իրենք — Խաչակիրները — միմիայն այս Առաջին Խաչակրութեան իբր արդիւնք՝ կէս միլիոնի մօտ անձի կորուստ պատճառելէն և երկրին մէջ ի նպաստ իրենց չորս առանձին իշխանապետութիւններ հաստատելէ զատ բան չըրին: Այս չորս իշխանապետութիւններն էին՝ 1) Երուսաղէմի թագաւորութիւնը, 2) Անտիօքի իշխանապետութիւնը, 3) Եդեսիայի կոմսութիւնը և 4) Տրիպոլի կոմսութիւնը: Ետքէն ասոնց վրայ աւելցան նաև ուրիշներ, ինչպէս և Աքեայի կոմսութիւնն ու Կիպրոսի թագաւորութիւնը. — երկու ետքիները հաստատեց Անգլիայի թագաւոր Ռիչարտ Ա., որ մի և նոյն տարուան մէջ Աքեան ու Կիպրոսը գրաւելով (1191), Կիպրոս կղզին նախ Տաճարականներու՝ ետքէն ալ Երուսաղէմի գահապետի թագաւոր Գուլիտոն Լուսինեանի ձախեց:

Հարցարան. — 69. Ո՞վ յաջորդեց Ռուբէնի: Իսկ Կոստանդինի: Թորոս ի՞նչ ըրաւ: — 70. Ո՞վ յաջորդեց Թորոսի: Կիլիկիա ի՞նչպէս

Հռոմօններու ձեռք անցաւ նորէն, եւ ո՛վ ազատեց: — Որո՞նք էին Խաչակիրները, եւ ի՞նչ էր իրենց նպատակը: Այս մասին ի՞նչ դեր կատարեցին Հայերը: Բայց ի՞նչ օգուտ քաղեցին Հայերը:

ԼԶ. ԴԱՍ. — ՄԼԵՂ, ՌՈՒԲԵՆ Բ. ԵՒ ԼԵՒՈՆ Բ.

71. Թորոս Բ.ի Մլեհ եղբայրը յաջորդելով իրեն (1168-1174), շատ գէշ համբաւ մը թողուց. բայց բարեբախտաբար իր Ստեփանէ եղբոր տղան, Ռուբէն Բ., իշխանութեան գլուխն անցնելով (1174-1186) դարմանեց այս արատը:

72. Ռուբէն Բ.ի յաջորդեց իր եղբայրը՝ Լեւոն Բ. իշխան (1186), որ իր խելացի գործերով ու քաջութիւններով մեծ անուն հանեց, և արքայական թագ ընդունելով՝ Կիլիկիայի թագաւոր հռչակուեցաւ (1196-1219): Ասիկա Ռուբենեան հարցատուութեան առաջին թագաւորն եղաւ:

Պատեաճ.՝ ՌՈՒԲԵՆԵԱՆՅ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐԸ

Ռուբէն Բ. իշխանի եղբայրը՝ Լեւոն Բ. իշխան՝ կառավարութեան ղեկը ձեռք առնելով, իրաւամբ Մեծագործ կոչուելու արժանի մեծ գործեր տեսաւ և հայ աշունքը բարձրացուց օտարներու առջեւ, որուն հետեւանալով գերման կայսր Ֆրեդրիք Պարպորտայէն (1152—1190) արքայական թագի խոստում ստացաւ. իսկ բիւզանդական կայսր Ալեքս Գ. էն (1195—1203) մեծարժէք նուէրներ ու իսկական թագ ստացաւ:



ԼԵՒՈՆ Ա. ՔԱԳԱՒՈՐ

Յրեստերիք կայսրն իր խոստումը չկրցաւ կատարել, վասն զի դիպուածի մը զսճ դառնալով մեռաւ Կիլիկիայի մէջ. ուստի Լեւոն՝ Ալեքսի դրկած թագով Հայոց թագաւոր պսակուեցաւ (1196), որմէ երեք տարի ետք Տարսնի Ս. Սոփիա եկեղեցիին մէջ մեծ հանդէսով կատարուեցաւ օծումը (6 Յունվ. 1199): Հանդէսին նախագահն էր և օծման արարողութիւնը կը կատարէր նոյն ինքն Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսը (1194—1203):

Լեւոն Ա. թագաւոր իր գահակալութենէն ետք սկըսաւ երկիրը բարեկարգել և թագաւորական կարգեր հաս-

տատել: Նախ հայկական մայրաքաղաքը Տարսնէն Սիս փոխադրեց. յետոյ սկսաւ իր անունով ու պատկերով դրամներ կոխել:

Լեւոնի ամբողջ կեանքն իրարու յաջորդող անդուլ գործունէութեամբ ոսկի օղակներով կազմուած է: Իր ժողովրդին հանդատութեան և բարօրութեան համար կատարած արշաւանքներն ու ջանքերը՝ ազգէն գնահատուած են մեծապէս:

Լեւոնի նշանաւոր գործերէն յիշենք միայն Բերիայի (= Հալէպ) Ղայասէտտին Ղազի սուլթանին դէմ տարած նոր յաղթանակն ու անոր վրայ դրած տուրքը: — Ղայասէտտին սուլթանը Չատկի շարթու մը Կիլիկիայի սահմանները գալով Լեւոնին մարդ զրկեց, սպառնալով ուրախութեան օրերը արտամութեան փոխել, եթէ Լեւոն իրեն չհնազանդի և տուրք չտայ: Լեւոն՝ առանց այլայլելու՝ այնպէ՛ս մը յարձակեցաւ անոր բանակին վրայ, որ սուլթանն ու զօրքերը յանկարծակիի բերաւ, անոնց մէկ մասը փախուց, մէկ մասն ալ գերի բռնեց. իսկ սուլթանը պատժելու համար՝ իրմէ պահանջուածէն աւելի ծանր տուրք դրաւ անոր վրայ:

Հարցարան. — 71. Թորոս Բ.ի ո՞վ յաջորդեց եւ ի՞նչ համբաւ թոյլուց: Ռ՞ով մաքրեց այս արատը: — 72. Ռուբէն Բ.ի ո՞վ յաջորդեց եւ ի՞նչ մեծ գործ տեսաւ: — Ի՞նչպէս թագաւոր պսակուեցաւ Լեւոն: Ի՞նչ գործեր տեսաւ:

ԼԷ. ԴԱՍ. — ԶԱՊԷԼ ՈՒ ՖԻԼԻՊ

73. Լեւոն Ա. թագաւորը մանչ զաւակ չունէր. ուստի մեռնելէն ետք՝ թագաւորական իրաւունքն անցաւ իր Զապէլ աղջկան (1219-1252), որ Անտիոքի իշխանազուն Ֆիլիպի հետ ամուսնանալով միասին կառավարեց երկիրը (1222-1225):

74. Ֆիլիպ ամուսնութենէն առաջ խօսք տուած էր Հայոց աղգային ու կրօնական ծէսերը յարգել և պահպանել. բայց ամուսնութենէն քիչ ժամանակ ետք իր խոստումները դրժեց, և սկսաւ երկիրը կողոպտելով իր հօրենական դանձր հարստացնել: Ասոր վրայ հայ իշխանները միացած՝ Ֆիլիպը ձերբակալեցին և բանտարկեցին:

Պատկեր. — ՀԵԹՈՒՄ Ա.

Զապէլ թագուհին երկը՝ Ֆիլիպ՝ իր հակահայ ընթացքով ամէնուն զգուսնք պատճառած էր, և երբ աղգային դանձն ալ կողոպտել սկսաւ, հայ իշխաններն ու պալատականները չդիմացան այլ ևս, և Ֆիլիպը գիշերանց ձերբակալելով բանտ առաջնորդեցին, ուր անոր գործը մաքրեցին. իսկ Զապէլը կրկին ամուսնացուցին Կոստանդին Պալլի տղուն՝ Հեթում իշխանի հետ, որ Հայոց թագաւոր պսակուելով կառավարութեան ղեկը ձեռք առաւ, իբրև օգնական և գահակից Զապէլի (1226—1270):

Հեթումի թագաւորութեան ժամանակ Մոնղոլեան թաթարներն սկսան արշաւել Մեծ Հայք, և ժողովուրդն հալածելով անոնց ունեցածին տէր դառնալ: Թաթարները



ԶԱՊԷԼ ԵՒ ՀԵԹՈՒՄ

տեսնելով որ երկրին մէջ իրենց դէմ դնող ուժ մը չկայ, մինչև Կիլիկիայի սահմաններն յառաջացան. բայց Հեթում իր կարողութենէն վեր համարելով դէմ դնել աթում, բարեկամութեան դաշինք դրաւ հետերին (1244), և մի քանի տարի ետք երբ Զապէլ թագուհին մեռաւ, և մի քանի տարի ետք երբ Զապէլ թագուհին մեռաւ, անձամբ Մոնղոլներու նոր վեհապետ Մանգու խանին (1251—1259) այցելութեան գնաց և անկէ մեծ պատիւ-

ներ տեսնելով՝ իր հպատակութիւնը յայտնեց անոր (1254) :

Հայոց ու Մոնղոլներու բարեկամութեան պատճառով և Մոնղոլներու վախէն՝ ո՛չ մէկ դրացի կը համարձակէր Հայոց վրայ յարձակիլ : Բայց երբ Մոնղոլներու զօրութիւնն ինկաւ, Իկոնիոնի (= Գոնիա) ու Եգիպտոսի սուլթանները Կիլիկիայի վրայ յարձակեցան, բազմաթիւ քաղաքներ ու բերդեր գրաւեցին, և Հեթումի տղան՝ Լեւոնը գերի բռնելով Եգիպտոս տարին (1266) :

Հարցարան. — 73. Ո՞վ էր Զապէլ եւ ի՞նչ եղաւ : — 74. Ի՞նչ ընծացք բռնեց Ֆիլիպ, եւ ի՞նչ պատահեցաւ իրեն : — Հեթում ի՞նչպէս Թագաւորեց : Մոնղոլեան Թաթարներուն հետ ի՞նչ ըրաւ : Ի՞նչ արդիւնք տուաւ այս բարեկամութիւնը :



ԼԸ. ԴԱՍ. — ԼԵԻՈՆ Բ. ՈՒ ՀԵԹՈՒՄ Բ. ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

75. Հեթում Ս.ի որդին՝ Լեւոն՝ Եգիպտոսի մէջ երկու տարի բանտարկուելէն ետք ազատ արձակուելով Կիլիկիա մտաւ : Եւ որովհետեւ Հեթում Ս. թագաւորութենէ հրաժարեցաւ՝ և իբրեւ կրօնաւոր՝ Մակար անուան տակ վանք մը քաշուեցաւ, իրեն տեղ Լեւոն Բ. թագաւոր հռչակուեցաւ (1270-1289) :

76. Լեւոն Բ.ի յաջորդեց իր Հեթում (Բ.) որդին (1289-1297) : Ասոր օրով Եգիպտացիները նորէն յարձակեցան Կիլիկիայի վրայ, և մեծ վնասներ տուին Հայոց :

Հեթում Բ. թուլամորթ մէկն ըլլալուն՝ ժա-



ԼԵԻՈՆ Բ.
(Իր դրամին վրայէն մեծցուած)

մանակ մը իշխանութենէ հեռացաւ և վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ, բայց իշխաններու թախանձանքին վրայ նորէն ետ դարձաւ և թագաւորութիւնը ձեռք առաւ, թէեւ ետքը վերջնականապէս հրաժարեցաւ :

Պատահած . — ՀԵԹՈՒՄԻ ԵՂՔԱՅՐՆԵՐՆ ՈՒ ԼԵՒՈՆ Գ .

Հեթում Բ .ի բացակայութեան և հրատարման միջոցներուն իրեն յաջորդեցին իր եղբայրները՝ Թորոս (1293), Սմբատ (1296—1298) և Կոստանդին Ա . (1298—1299), որոնցմէ ետք զահ բարձրացաւ Թորոսի որդին՝ Լեւոն Գ . (1301—1307) :

Լեւոն Գ .ի ժամանակ Հայոց թագաւորութիւնն անկման շրջանին մէջ մտած էր , որուն գլխաւոր պատճառն էր կրօնական խնդիրներու երեսէն ծագած ներքին խռովութիւնը : Լեւոն թէեւ շատ երիտասարդ և հետեւաբար երկիրը կառավարելու անկարող , բայց Հեթում Բ .ի խնամակալութեան տակ մտած՝ անոր ցուցմունքներով կ'առաջնորդուէր , միանգամայն վարակուելով անոր թող բնաւորութենէն . ուստի՝ ասոնց օրով խեղճ Կիլիկիա անդունդէ անդունդ գլորեցաւ :

Հեթումի ու Լեւոնի վախճանն եղերական եղաւ : Կիլիկիա նստող թաթար իշխանը՝ Պիլարդու , որ Մոնղոլեան թաթար խանին ներկայացուցին էր , Հայոցմէ գրգռուելով՝ երկուքը մէկէն սպաննեց , և անոնց հետ ալ մի քանի հայ իշխաններ (17 Նոյեմբ . 1307) :

Յաջորդ տարին Հեթում Բ .ի Օշին եղբայրը զահ բարձրացաւ (1308—1320) : Ասիկա իր նախորդներէն աւելի բարեպտուղ ծաղիկ մը եղաւ , և ներքին խռովութիւններու աւելի՛ արծարծուելուն պատճառ դարձաւ :

Օշինի օրով Թաթարներն իրենց հովանաւորութիւնը վերցուցին Հայոց վրայէն . ուստի՝ Հայերը՝ բոլորովին լքուած ամենքէն , մասնուեցան մասնատական աշխարհի մշտնջենական հալածանքներուն ու սուբին :

Հարցարան . — 75 . Ո՞վ էր Լեւոն Բ . եւ ի՞նչ պարագաներու մէջ Թագաւոր հռչակուեցաւ : — 76 . Ո՞վ յաջորդեց Լեւոն Բ .ի : Ասոր օրով ի՞նչ պատահեցաւ : Ի՞նչպէս մարդ էր Հեթում Բ . եւ ի՞նչ ըրաւ : = Որո՞նք յաջորդեցին Հեթում Բ .ի : Լեւոն Գ .ի ժամանակ ի՞նչ վիճակի մէջ էր Կիլիկիա : Հեթում ու Լեւոն ի՞նչպէս մեռան : Ո՞վ էր Օշին , եւ ասոր օրով ի՞նչ պատահեցաւ :

ԼԹ . ԴԱՍ . — ԼԵՒՈՆ Գ .

77 . Լեւոն Գ . Օշին թագաւորի տղան և յաջորդն էր (1320-1342) , որ իր հօր նման թոյլ և օտարամոլ մէկն ըլլալով՝ հայ ժողովրդին աչքէն ինկաւ : Լեւոն փոխանակ երկրին շահերը պաշտպանելու և թշնամիին գէմ դնելու միջոցներ խորհելու՝ կրօնական խնդիրներով ժամանակ կ'անցընէր :

78 . Այս միջոցին Եգիպտոսի Սուլթանը , Թաթարներն ու Թիւրքմէնները՝ միացած ուժերով Կիլիկիա յարձակեցան , աւերեցին ամէն տեղ , կոտորեցին խեղճ ժողովուրդը , և բազմաթիւ գերիներով ու մեծ աւարով ետ դարձան . բայց հայ երիտասարդները , տեսնելով որ իրենց թագաւորն անգործ կը նստի , իրենց մէջէն թուուցիկ խումբեր կազմելով Եգիպտացիներու վրայ քայլեցին , և անոնց լաւ դաս մը տալով դուրս քշեցին երկրէն :



ԼԵՒՈՆ Գ. ԻՐԻԵՒ ԴԱՏԱՌՈՐ

Պատմած .— ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐԸ

Լուսինեան տոհմը Խաչակիրներու հետ Եւրոպայէ Արեւելք մտնող ազնուական գերդաստան մըն էր, որ

Երուսաղէմի ու Կիպրոսի գահերուն թագաւորներ ընձայեց :

Արեւելքի մէջ հաստատուած Լուսինեաններէ ամենէն նշանաւորն էր Երուսաղէմի Գուխտոն թագաւորը, որ իր թագաւորութեան յաջորդ տարին (1187) Սալահէտին սուլթանի ձեռք գերի ինկաւ, և Երուսաղէմի քրիստոնէայ թագաւորութիւնը ջնջուեցաւ : Գուխտոն Մահմետականներու դէմ այլ եւս զէնք չվերցնելու խոստումով ազատ արձակուեցաւ, և Կիպրոս երթալով՝ այնտեղի Լուսինեան թագաւորութիւնը հաստատեց (1192) :

Լուսինեաններու տոհմէն Գուխտոն անունով իշխան մը, — որ Կիպրոսի Հանրի Բ. թագաւորին եղբորորդին էր, — ձօր կողմէ Հայ և մանաւանդ մեր Լեւոն Բ. թագաւորին ալ թողը բլլալուն, Լեւոն Գ. ի մտնելէն ետք «Կոստանդին Բ.» անունով Հայոց թագաւոր պսակուեցաւ (1342-1344) : Այսպէսով Լուսինեաններու ձեռք անցաւ հայկական գահը, որ սակայն անվերջ կռուի պատճառ դարձաւ Լուսինեան կաթողիկոսներու և հակալուսինեան ազգայնականներու միջև, որուն հետեւանքը շատ դառն եղաւ մեզ համար :

Գուխտոն-Կոստանդնէ զատ՝ Լուսինեան ցեղէ հայկական գահին վրայ նստող երկրորդ և վերջին թագաւորն եղաւ Լեւոն Ե., Հայոց վերջին թագաւորը :

Այս երկու թագաւորներն ալ՝ իբրև մոլեռանդ կաթողիկոսներ՝ Հայոց ազգային ու կրօնական զգացումներուն հակառակ ընթացքի մը հետեւելուն պատճառով ատելի եղան ազգին : Անոնց դէմ ատելութեան ու ռիսակալուեթեան աստիճանն ա՛յնքան սուր կերպարանք ստացաւ, որ հայ իշխանները Գուխտոնն սպաննեցին, իսկ Լեւոնը՝ թշնամիին յանձնեցին վատարար :

Հարցարան.—77. Ո՞վ եւ ի՞նչպէս մէկն էր Հեւոն Դ:—78. Ի՞նչ ըրին թշնամիները: Ի՞նչ ըրաւ երիտասարդութիւնը:—Ո՞ր սկիզբէկան Հուսիսեանները: Ո՞վ էր ամէնէն նշանաւոր Հուսիսեանը: Ի՞նչպէս բարձրացան հայկական զանօր, եւ ի՞նչ ընթացք բռնեցին: Ի՞նչ եղաւ անոնց վախճանը.

Խ. ԴԱՍ. — ԿՈՍՏԱՆԳԻՆ Գ. ՈՒ Գ.


79. Ազգայնականներու որոշմամբ Նղրեանց Պաղատին իշխանին որդին՝ Կոստանդին Գ.՝ Հայոց թագաւոր պսակուեցաւ (1344-1363), և Հայերը պահ մը հանդարտեցան ներքին խռովութիւններէ:

80. Իսկ երբ Կոստանդին Գ. մեռաւ, գահակալութեան համար երկու տարի տեւող կռիւններէ ետք արքայական աթոռը բարձրացաւ դարձեալ Նղրեանց ցեղէն մէկը, Հեթում իշխանի որդին, որ կոչուեցաւ Կոստանդին Գ. (1365-1373): Կոստանդին Գ. ներքին յեղափոխութեան մը ժամանակ իրեններէն սպաննուեցաւ, և իրեն յաջորդեց — իրբեւ թագապահ — Մարիամ թագուհին, նախորդ Կոստանդին Գ.ի սյրին (1373-1374):

Պատմած.—ԿԻԼԻԿԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Կոստանդին Գ. Հայոց երկիրը թէ՛ նորանոր խլրտուումներէ ազատ պահելու և թէ՛ իր թագաւորութիւնն երկարատեւ ընելու համար՝ իր առաջին գործն ըրաւ Գուի-

տոն-Կոստանդնի մօտաւոր ազգականները բանտարկել կամ աքսորել:



Ս Ի Ս

Բայց Կոստանդին Գ. իր թագաւորութեան վերջին տարիներուն — հակառակ որ երկար ժամանակներէ ի վեր խաղաղութեամբ կը կառավարէր երկիրը — թշուառ վիճակի մը մասնուեցաւ, անսնկով որ խլրտումները նորէն սկսան և Կիլիկիայի խաղաղութիւնը վրդովուելով՝ ներքին ու արտաքին թշնամիներու երեսէն մեծամեծ դժբախտութիւններու հանդիսավայր դարձաւ Կիլիկիա: Երկիրն ներսերը թիւրքմէններէ գրաւուած էին. իսկ հարաւային մասն ու ծովեզերքի հայկական ամրութիւններն ամբողջովին անցած էին Եզրիպտացիներու ձեռք, բացառութիւն կազմելով Կոսիլոս, որ սակայն առանձ-

նացած՝ ստիպուած էր յուսահատական դիմադրութիւններ ընել: Կոստանդին իր բոլոր ուժը տուած էր մայրաքաղաքին պաշտպանութեան, — թէև սնյաջող, — և Կապանի ու Բարձրբերդի տէրերուն հրամայած էր արթուն կենալ և արգիլել թշնամիի մօտենալը, քանի որ չէր կրնար՝ ճամբաներու բռնուած ըլլալուն պատճառով՝ օգնութեան հասնիլ Կոստանդինի պաշարուածներուն: Ծովեզերքի հետ բոլորովին կտրուած էին յարաբերութիւնները: Յուսահատութիւն մըն էր որ կը տիրէր ամէն կողմ: Ռուբենեան հարստութիւնը գրեթէ մահամերձ վիճակի մէջ կը գտնուէր, և պէտք եղած դարմանը տալու համար՝ ճարտար բժշկի մը կը կարօտէր, որ սակայն կը պակսէր դժբախտաբար...

Ահա այս վիճակին հասած էր Հայոց վերջին սպաստանը:

Հարցարան.—79. Ո՞վ էր Կոստանդին Գ. եւ ի՞նչ կերպով Հայոց Թագաւոր պսակուեցաւ: — 80. Ո՞վ յաջորդեց Կոստանդին Գ. ի եւ ի՞նչ պատահեցաւ: = Կիլիկիայի հայկական Թագաւորութեան վերջին օրերը կրնա՞ք նկարագրել:

ԽԱ. ԴԱՍ. — ԼԵՒՈՆ Ե. ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐ


81. Այս բոլոր տակնուվրայութիւններէն ու կիպրոսի Պետրոս Թագաւորին սարքած մեքենայութիւններէն ետք՝ Հայոց Թագաւոր հռչակուեցաւ Լեւոն Ե. (1374-1375), որ Գուխտոն-Կոստանդինի եղբորորդին էր, և եղաւ Հայոց վերջին տարաբաղդ Թագաւորը:

82. Լեւոնի և իրեն հետ միասին Հայոց Թագաւորութեան իյնալուն պատճառը՝ ինքը Լեւոնն է, որ ծագումով լատինական ցեղէ ըլլալուն՝ չը կրցաւ կամ աւելի ճիշդը չուզեց շոյել Հայոց ազգային ու կրօնական զգացումները, հետեւաբար ներքին խռովութիւններու արծարծուելուն պատճառ դարձաւ, և իրեն հետ միասին անգունդը գլորեց Հայոց Թագաւորութիւնը (1375):

Պատեւած. — ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հայերն՝ ինչպէս միշտ՝ այս անգամ ալ անօրտ և շահամոլ Եւրոպայի խարդախութիւններուն զոհն եղան: Եւ եթէ Հայերը փոխանակ Եւրոպայէ օգնութիւն սպասելու և եւրոպական սին խոստումներով ու թղթերով օրօրուելու՝ իրենց գլխուն ճարն իրե՛նք նայէին, և երկրին մէջ բոյն դրած օտար այլադաւան տարրերու ձեռքէն ամէն պաշտօն առնելով իրե՛նք կառավարէին իշխանութիւնը, թերեւս վերջ տրուէր դաւանաբանական խնդիրներէ ու մոլեռանդութենէ յառաջ եկած ներքին խռովութիւններու, որոնք մեր աո՛ւնը քանդեցին:

Այս դրութեան մէջ արտաքին թշնամիներն եկած պաշարած էին Սիսը, Հայոց մայրաքաղաքը, որուն բնակիչներն ուտելիքէ զրկուելով՝ ստիպուած էին գիշերային յարձակումներով և գողութեամբ պաշար կրել դրսէն, մինչև որ զօրաւոր միջամտութիւններու և ծանր տուրմինչև որ զօրաւոր միջամտութիւններու և ծանր տուրմներու շնորհիւ կարող եղան իրենց յարաբերութիւնը կրկին հաստատել դուրսի հետ: Բայց շատ քիչ տեւեց այս վիճակը. վասն զի ներքին կռիւներէ ճանձրացած թուլամորթ իշխաններու հրաւերով Եգիպտոսի սուլթանին զօրքերն



ԼԵՒՈՆ Ե.Ի ԴԱՄԲԱՐԱՆԸ

Կեանք գրաւեցին Միսը, և գերի բռնեցին Լեւոնը (16 Ապրիլ 1375), որով վերջացաւ Հայոց Թագաւորութիւնը:



ԼԵՒՈՆ Ե.

Լեւոն Եգիպտոսի մէջ ժամանակ մը աքսորականի կեանք վարելէ ետք անցաւ Եւրոպա, և մեռաւ Փարիզի մէջ (29 Նոյեմբ. 1393): Իր գերեզմանաքարը կը գտնուի Ֆիմա Փարիզի մօտ, Սէն-Տընի քաղաքին արքայարանին մէջ:

Հարցարան.—81. Ո՞վ էր Լեւոն Ե. եւ ի՞նչպէս Թագաւոր հռչակուեցաւ: — 82. Ո՞վ եղաւ պատճառ Հայոց Թագաւորութեան իյնալուն: = Հայերն ի՞նչ տեսան Եւրոպայէ եւ ի՞նչ դիրք պէտք էր բռնէին: Ի՞նչ ըրին արտաքին Թշնամիներն ու հայ իշխանները: Լեւոն մըր անցուց իր օրերը, եւ ո՛րը մեռաւ:

ԽԲ. ԴԱՍ. — ՀԱՅԵՐՆ ԱՆՏԷՐ


83. Հայաստանի կողմը մէկ կողմէ տարիներէ ի վեր մորթուող մարդկային դիակներով ծածկուել սկսած էր, իսկ միւս կողմէ հայ գիւղերն ու քաղաքներն աւարի կը տրուէին, և բնակարաններն ու եկեղեցիները բոցերու ճարակ կը դառնային: Այս վիճակն այսպէս շարունակուեցաւ Հայոց թագաւորութեան վերնալէն ետք ալ:

84. Այս բարբարոսութիւններու գլխաւոր հեղինակներն էին Չարմաղանի, Լէնկթիմուրի և ասոնց նման արիւնկզակ թաթարներ, որոնց անուշը պէտք ենք անէծքով յիշել ամէն ժամանակ:

Պատկեր.— ՀԱՅԵՐԸ ԿԸ ԳՍՂԹԵՆ

Ո՛վ չի յիշեր Կարմիր բռնակալութեան հալածանքներուն երեսէն Կովկաս, Եգիպտոս, Պուլկարիա, Ամերիկա և ուրիշ տեղեր խուժրելով գաղթող Հայերը, որոնք իրենց կեանքը իրկելու համար ստիպուած էին երեսի վրայ թողուլ իրենց առնն ու տեղը, խանութն ու գործը, մասնուելով հազարամէկ թշուառութիւններու, ինչպէս աղքատութեան, անօթութեան, հիւանդութեան, ևն: Արդ՝ ճիշտ այս տեսարանները կը ներկայացնէր Հայաստան Տուրքիներու, Ալփախաններու, Ճինկիլխաններու, Ճէլալխաններու, Չարմաղաններու, Բազուններու, Լէնկթիմուրներու ու նմաններու ժամանակ: Հայերն ստիպուած էին գաղթել:

գաղթել և ազատել իրենց կեանքը, իրենց հողին, իրենց սուրբ հաւատքը: Եւ գաղին հաստատուեցան հեռաւոր տեղեր, անձանօթ երկիրներ, սպազայով ու կեանքով անձանօթ:



ՀԱՅՈՅ ԳԱՂԹԸ

Այս գաղթականութիւններէն ամենէն նշանաւորը՝ Անիի գաղթականութիւնն եղաւ, որ մինչև Լեհաստան երթալով իրեն համար նոր հայրենիք մը ստեղծեց, և մեծամեծ առանձնաչնորհումներ ձեռք բերաւ. մինչև իսկ հայկական առանձին դատարաններ հաստատուեցան հոն, և Հայերն իրենց յատուկ ազգային օրէնքներով կը կառավարուէին: Ուրիշ գաղթականութիւն մըն ալ Հունաւորիա գնաց հաստատուեցաւ, և հոն հայկական նոր քաղաք մը շինեց, որ կոչուեցաւ՝ Հայաքաղաք կամ Կեռլա (=Սամոչոյվար): Ասոնցմէ զատ՝ Եգիպտոս ու

Եւրոպայի զանազան քաղաքներն ալ խուճք խուճք գացին բնակեցան Հայերը, ինչպէս՝ Վենետիկ, Լիւրնոն, Ամսթերտամ, Մարսէյլ, Աստրախան, Ղրիմ, և ուրիշ տեղեր: Իսկ երբ Օսմանցիներու կողմէ Կ. Պոլիս առնուեցաւ, Սուլթան Մէհմէտ Բ. (1440—1481) մեծամեծ խոստումներով Պոլիս հրաւիրեց Հայերը, և Պրուսայի Յովակիմ եպիսկոպոսը Հայոց Պատրիարք անուանելով, Կ. Պոլսի մէջ Պատրիարքական աթոռ մը հաստատեց (1461):

Պէտք ենք յիշել նաև Հնդկաստանի ու Ճափայի հայ գաղթականութիւնները, որոնք 1605ին շահ Աբասի կողմէ բռնի կերպով Պարսկաստան տարուած Հայոցմէ կազմուեցան:

Հարցարան.—83. Հայաստանն ի՞նչ վիճակի մէջ էր: — 84. Այս արեւնկզակներն ի՞նչ ազգէ էին: = Ի՞նչ պարագաներու տակ գաղթել սկսան Հայերը, եւ ո՞ր երկիրներն հաստատուեցան: Ի՞նչպէս հաստատուեցաւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութիւնը:

ԽԳ. ԴԱՍ. — ՀԱՅԱՍՏԱՆ ԾՄՄԱՆՅԻՆԵՐՈՒ Կ'ԱՆՅՆԻ

85. Պարսկաստանի մէջ Լէնկթիմուրի յաջորդեցին՝ Թիւրքմէն ցեղէ՝ նախ Գարա-գոյունլու հարստութեան և յետոյ Ագ-գոյունլու հարստութեան պատկանող Սուլթաններ, որոնք միանգամայն Հայաստանի տէրն էին: Արդ, Ագ-գոյունլուներէն Ուզուն-Հասան (1469-1478), իր երկիրն աւելի ընդարձակելու համար, Օսմանցիներու վրայ յարձակեցաւ, բայց սուլթան Մէհմէտ Բ.էն յաղթուելով Հայաստանի մէկ մասն Օսմանցիներու ձեռք անցաւ (1473):

86. Շատ տարիներ ետք Սեֆեանց առաջին թագաւորը՝ շահ Իսմայիլ Ա. (1501-1523) Օսմանցիներու վրայ յարձակեցաւ. բայց սուլթան Սէլիմ Ա. (1512-1520) անոր երկիրները նուաճելով՝ Հայաստանի մէկ ուրիշ մասն ալ Օսմանցիներու անցաւ (1514). իսկ Իսմայիլի յաջորդներու օրով ամբողջ Հայաստանի տէր դարձան Օսմանցիք (1585):

Պատմած. — ՇԱՀ ԱՒԱՍԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

Պարսից շահ Աբաս Ա. թագաւորը (1585—1628) կորսուած գաւառները նորէն ձեռք բերելու համար — մանաւանդ Հայերու ինդրանքով — Օսմանցիներու դէմ պատերազմ հրատարակելով Հայաստան արշաւեց (1603), և Այրարատեան նահանգը գրաւեց: Օսմանցիները, Սինան

փաշայի առաջնորդութեամբ, Պարսից վրայ քաշեցին: Շահ Աբաս, տեսնելով որ չպիտի կրնայ յաղթանակը տանիլ, որոշեց իր նոր գրաւած գաւառներու բնակիչները Պարսկաստան փոխադրել, և իր երկիրը շէնցնել: Այս նպատակով՝ ամբողջ ժողովուրդն Այրարատեան դաշտը հաւաքեց, և մէկ հրամանով բոլորն ալ քշեց տարաւ Պարսկաստան (1605)․ իսկ Հայոց վանքերը, եկեղեցիներն ու տները կրակի տուաւ, որպէս զի երբ Օսմանցիները կրկին այն կողմերու տիրանան՝ աւերակներու ու մոխրակոյտերու վրայ միայն տիրեն...

Այս բռնի դաղթականութեան ժամանակ Հայ ժողովուրդի քաշած տառապանքն անկարելի է նկարագրել: Անոնք որ իրենց հայրենի օճախէն չէին ուզեր հեռանալ, Պարսիկները տեղն ու տեղը կ'սպաննէին զանոնք․ իսկ ճամբուն երկարութենէն յոգնածներն ու հիւանդացածները՝ կը ծեծէին կամ կ'սպաննէին, որպէս զի միւսները վախնան և շուտով յառաջ քաշեն: Երբ ժողովուրդն Արաքս գետի քով հասաւ, փոխադրիչ նաւակներու նուազութենէն՝ Պարսիկ պաշտօնեաները կ'ստիպէին Հայերը լողալով անցնիլ: Ոմանք՝ իրենց քաշած տառապանքներուն սաստկութենէն՝ ինքնակամ ջուրը կը նետուէին կը խղրուէին, ոմանք ալ՝ գետն անցած ժամանակ՝ հոսանքէն տարուելով կ'անհետանային. իսկ անոնք որ Արաքսի միւս կողմն անցան, Սպահան քաղաքն առաջնորդուեցան և հաստատուեցան, որմէ ետք մօտակայ Նոր Զուղայ քաղաքն հիմնեցին:

Հարցարան — 85. Լէնկիմուր ըէն ետք որո՞նք եղան տէր Հայաստանի: Ի՞նչպէս Օսմանցիներու ձեռք անցաւ Հայաստանի մէկ մասը: — 86. Միւս մասերն ի՞նչպէս անցան: = Շահ Աբաս ի՞նչ անգթութիւններ գործեց Հայաստանի մէջ, եւ ի՞նչպէս գաղթեցուց Հայերը:

ԽԴ. ԴԱՍ. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

87. Հայաստան ամբողջութեամբ Օսմանցիներու ձեռք անցնելէ ետք երբ Պարսից և Օսմանեանց միջեւ բացուած պատերազմը դադրեցաւ և հաշտութեան պայմանները կնքուեցան, Հայաստանի արեւելեան մասը Պարսից տրուեցաւ նորէն (1639):

88. Յետոյ՝ Ռուս կառավարութեան բացած երկրակալական պատերազմներով՝ թէ՛ Պարսից Հայաստանէն և թէ՛ Օսմանեան Հայաստանէն շատ գաւառներ Ռուսաց ձեռք անցան: Ռուսերը վերջին անգամ 1878ին էր որ Հայաստանի մէկ ուրիշ մասին տիրացան:

Պատեալ. — ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻ

Էջմիածին ու չրջակայ գաւառները Պարսից ձեռք կը գտնուէին դեռ, երբ Յակոբ Զուղայեցի կաթողիկոսը 1678ին Էջմիածնի վանքին մէջ վեց աշխարհական ու վեց կրօնական անձերէ բաղկացած գաղտնի ժողով մը գումարեց, Հռոմի պապին իշխանութեան տակ մտնելու և անոր ու եւրոպական պետութեանց միջոցով Էջմիածինն ու Ղարաբաղի կիսանկախ մէլիքութիւններն ազատելու համար Պարսից լուծէն: Եւ ժողովին որոշման համաձայն, Յակոբ կաթողիկոսն ու Ղարաբաղի Պառչեան ընտանիքէն Իսրայէլ Օրի անուանով կտրիճ մը ճամբայ ելան դէպի Եւրոպա. բայց երբ Պոլիս հասան, կաթողիկոսն հիւան-

դանալով վախճանեցաւ (1680) և Բանկալթիի գերեզմանատան մէջ թաղուեցաւ. ուստի Օրի միայնակ անցաւ Վենետիկ, անկէ ալ Ֆրանսա, ուր զինուորական ծառայութեան մէջ մտաւ. բայց յետոյ գերի բռնուելով՝ Անգլիացիներու ձեռք անցաւ, և երբ ազատ արձակուեցաւ՝ դնաց Գերմանիա, հոն բարձր շրջանակներու հետ շփման մէջ գտնուելով՝ վերջապէս Փֆալցի Յովհաննէս Վիրհելմ կոմսն համոզեց որ Հայոց ազատութեան համար իրեն օգնէ: Կոմսը նախ Հայաստանի կացութեան և Հայոց տրամադրելի ուժերուն վրայ ստոյգ տեղեկութիւններ ունենալու համար Օրին մասնաւոր նամակներով Հայաստան դրկեց (1698):

Օրի հասնելով Հայաստան՝ մտաւ Սիւնեաց նահանգի Ծղուկք գաւառը, և Անգեղակոթ գիւղին մէջ իջեւանեցաւ 1678ի գաղտնի ժողովին մասնակցող մէլիք Սաֆրազ իշխանին տունը: Սաֆրազ երբ Օրիի յայտնութիւններն իմացաւ, շրջակայ մէլիքներն հրաւիրեց և Հայաստանի ազատութեան համար նոր ժողովներ կազմելով խորհրդակցեցան միասին: Այս ժողովներու մէջ ալ վիճարանութեան գլխաւոր նիւթը կը կազմէր՝ այն ժամանակ Եւրոպայի մեծ մասին վրայ ազդեցութիւն ունեցող Հռոմի պապին հոգեւոր իշխանութեան տակ մտնելու խնդիրը: Եւ որովհետեւ Էջմիածնի նոր կաթողիկոսը՝ Նահապետ Եղեռացի (1691—1705)՝ ասոր հակառակեցաւ, մէլիքները դիմեցին Գանձասարի կաթողիկոսին, որ նոյնպէս մերժեց մէլիքներու առաջարկը. ուստի մէլիքները Գանձասարի մօտակայ Ս. Յակոբ վանքին վանահայր Մինաս վարդապետն համոզելով Օրիի ընկեր տուին զայն:

Օրի՝ Մինաս վարդապետին հետ անցաւ Գերմանիա, Աւստրիա և Ռուսաստան, ուր Մինաս վարդապետն առանձին ձգելով մտաւ Պարսկաստան, բայց անկէ վերա-

դարձին Աստրախանի մէջ մեռաւ մեծ ցաւ պատճառելով ամենուն (1711):


Չարգարաց.—87. Պարսիկներն ինչպէս նորէն տէր եղան Հայաստանի մէկ րփսին: — 88. Ռուսերն ինչպէս տիրացան: Ե՞րբ եղաւ վերջինը: = Հայերն ի՞նչ նպատակով զաղտնի ժողովներ կազմեցին: Ի՞նչ գործեր տեսաւ Օրի:

ԽԵ. ԴԱՍ. — ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

89. Հայաստանի Արցախ, Ուտի ու Սիւնիք նահանգները, որոնք հիմակուան Ղարաբաղը կը կազմեն և Աղուանից պետութեան մէկ մասը, շահ Արաս Ա.ի կարգադրութեամբ, հինգ կիսանկախ հայ իշխաններու յանձնուեցան: Այս իշխանները կոչուեցան Մէլիքներ: Ատոնցմէ դուրս կային նաև ուրիշ գաւառներու վրայ տիրող հայ մէլիքներ:

90. Ղարաբաղի մէլիքներէն մէկը կը նստէր Գիւլիստան կամ Թալիշ գաւառը, որ կը տարածուէր Գանձակի սահմաններէն մինչեւ Թարթար գետ. երկրորդը՝ Ջրաբերդ կամ Չարաբերդ գաւառը, որ կը տարածուէր Թարթար գետէն մինչեւ Խաչէն գետ. երրորդը՝ Խաչէն գաւառը, որ կը տարածուէր Խաչէն գետէն մինչեւ Բալլու-չայ. կը տարածուէր վարանդա գաւառը, որ կը տարածուէր չորրորդը՝ Վարանդա գաւառը, որ կը տարածուէր Բալլու-չայէն մինչեւ Դիզափայտի լեռները. իսկ հինգերորդը՝ Տիզակ կամ Դուզախ գաւառը, որ

կը տարածուէր Դիզափայտի լեռներէն մինչեւ Արարս գետ:



ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ

Պատմած . — Մէլի-Բենեֆոնի ԱՊՍՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Օրիի մահով չյուսահատեցան մէլիքները . իսկ Մինաս վարդապետ կանոնաւոր կերպով շարունակեց իրեն յանձնուած ծանր պաշտօնը :

Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը , որ թէ՛ Օրիի և թէ՛ Մինաս վարդապետի խոստացած էր օգնել Հայերու , Շամախիի ռուս վաճառականները պաշտպանելու պատրուակով՝ ահագին բազմութեամբ կովկաս արշաւեց և Դարբանդ (= Տէրպէնտ) քաղաքը գրաւեց (1722) . բայց փոխանակ աւելի յառաջ երթալու՝ յանկարծ ետ դարձաւ ,

և , զարմանալի է , յաջորդ տարին իսկ Պարսիկներու հետ հաշտուեցաւ : Այս միջոցին Օսմանցիները Ռուսաց հաճութեամբ Վրաստանի տիրեցին , և Ղարաբաղի մէկ մասին ալ տէր դարձան :

Մէլիքները տեսնելով որ Մեծն Պետրոս իրենց նկատմամբ չէզոք դիրք բռնել սկսած է , յոյսերնին կտրեցին անկէ , և Ղարաբաղի անմատչելի լեռներուն վրայ՝ իրենց անուանի պետ Սիւնեցի Դաւիթ-Բէկի առաջնորդութեամբ՝ ապստամբութեան ու միանգամայն ազատութեան դրօշը պարզեցին (1725) :

Դաւիթ-Բէկի օգնականներն էին՝ Մխիթար սպարապետ , մէլիք Փարսադան , Աւետիք քահանայ , Թորոս իշխան , Ստեփաննոս Շահումեան , և ուրիշ քաջեր :

Ապստամբութիւնը շատ յաջող անցաւ , և Օսմանցիներն ու Պարսիկները Ղարաբաղէ դուրս ելան . իսկ տեղացի Մահմետականները հպատակութիւն յայտնեցին Դաւիթին : Բայց Դաւիթ , որ 1722էն ի վեր Ղարաբաղի հոգին եղած էր և մէլիքներու գլուխն անցած՝ իբրև մեծ ռազմիկ ու միանգամայն քաղաքագէտ՝ յաջողութեամբ կը վարէր երկիրը , 1728ին մեռաւ :

Դաւիթ-Բէկի յաջորդեց Մխիթար սպարապետ , որ սակայն յաջորդութեան պատճառով իրեն հակառակորդ ունեցաւ իր ընկերներէն Աւետիք քահանան , որուն մատնութեան երեսէն Օսմանցիները վերջնականապէս տիրեցին Ղարաբաղի (1729) :

Հարցարան . — 89. Հայաստանի ո՞ր նահանգները կը կազմեն Ղարաբաղը , եւ որո՞նք կը կառավարէին : Ի՞նչ կը կոչուէին այս իշխանները : — 90. Ղարաբաղի մէլիքներն ո՞ր գաւառներու մէջ կը նստէին : — Ղարաբաղի մէլիքներն ի՞նչպէս ապստամբեցան : Ո՞վ էր ատոնց պետը , եւ որո՞նք էին օգնականները : Ապստամբութիւնն ի՞նչ վսիման ունեցաւ :

ԽԶ. ԴԱՍ. — Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

91. Օսմանեան տիրապետութեան տակ Հայերը՝ իրրեւ առանձին ազգութիւն՝ իրենց ներքին կառավարութիւնն ունեցան, կառավարուելով նախ Կ. Պոլիս նստող պատրիարքներու և ամիրաներու միջոցով, իսկ յետոյ՝ Ազգային Սահմանադրութեան հաստատումով (1860)՝ Պատրիարքարանի ժողովներուն միջոցով:

92. Կ. Պոլսի Հայոց պատրիարքներէն յիշուելու արժանի են հետեւեալները.

Ուռալին պատրիարք Յովակիմէն (1461) մինչև 1700՝ Զաքարիա Վանեցի, Դաւիթ Արեւելցի, Մըխիթար Քիւրտիստանցի, Եփրեմ Ղափանցի և Մելքիսեդեկ Սուպի.— ԺԸ դարուն մէջ՝ Աւետիք Եւզոկիացի, Յովհաննէս Կոլոտ, Յակոբ Նալեան և Զաքարիա Կաղզուանցի.— ԺԹ. դարուն մէջ՝ Յովհաննէս Բաբերդցի, Պօղոս Աղբիանուպոլսեցի, Ստեփաննոս Աղանի, Մատթէոս ու Գէորգ Կ. Պոլսեցի, Խրիմեան Հայրիկ, Ներսէս Վարժապետեան և Մատթէոս Իզմիրլեան որ մեր ընդհանրական կաթողիկոսն է հիմա: Իսկ մեր հիմակուան սիրելի պատրիարքն է՝ յայտնի բանասէր Դուրեան Եղիշէ սրբազան:

Պատմած. — ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՆԵՐՔԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսի մէջ հայ պատրիարքութեան հաստատուելէն, ի վեր Հայերն իրենց ազգային ու կրօնական խնդիրներու կարգադրութեան համար, կապուեցան իրենց Պատրիարքարանին: Այս խնդիրներու կարգադրութիւնը պատրիարքին և իրեն խորհրդական ամիրաներու բացարձակ կամքէն կախում ունէր առաջները. բայց ժողովուրդը, տեսնելով որ ամիրաները բռնութիւններ կը գործեն, — մանաւանդ Իւսկիւտարի (Կ. Պոլիս) «Ճեմարան» կոչուած դպրոցն ալ անոնց երեսէն գոցուեցաւ (1841), — ամիրաներու դէմ ահազին ցոյցեր կատարուեցան, մինչև որ ժողովուրդն ազգին գործերը ղեկավարելու իրաւունքը ձեռք բերաւ:

Անգամ մը որ ժողովուրդն իր իրաւունքներուն տէր դարձաւ, 24 Մայիս 1860ին գումարուած Ազգային Լճահանուր ժողովին մէջ՝ նախապէս պատրաստուած Ազգային Սահմանադրութեան կանոնները քննուեցան և հաստատուեցան, որով ազգային գործերը վարելու ամիրայական կամայականութիւնները վերջնականապէս վերցան, և ժողովրդին իրաւունք արուեցաւ իր քուէով մասնակցել ազգին գործերուն:

Ազգային Սահմանադրութեան համաձայն՝ ազգին ընդհանրական գործերը կը վարէ Երեսփոխանական ժողովը. իսկ սովորական գործերը կը վարեն՝ քաղաքական գործերու համար Քաղաքական ժողովը և կրօնական գործերու համար կրօնական ժողովը. Սառն խրնդիրներու համար այս երկու ժողովները կը միանան և կը կազմեն Սառն ժողովը: Ասոնցմէ դուրս կան նաեւ այլ և այլ ժողովներ ալ, ինչպէս Ուսումնական, Տնտեսական,

ելեւմտական, Դատաստանական, Վանօրէից, և իւրաքանչիւր թաղի մէջ ալ՝ Թաղական Խորհուրդներ :

Հարցարան.—91. Օսմանեան տիրապետութեան տակ Հայերն ի՞նչ միջոցներով կառավարուիլ սկսան:—92. Կ. Պոլսի Հայոց պատրիարքներէն որո՞նք արժանի են յիշատակութեան:— Ի՞նչպէս հաստատուեցաւ Ազգային Սահմանադրութիւնը: Ո՞ր ժողովները կը վարեն ազգին գործերը:

Ի. ԴԱՍ. — ՌՌՍԱՀԱՅՔ ԵՒ ՊԱՐՍԱՀԱՅՔ

93. Ռուս կառավարութեան տակ Հայերն իրենց մասնաւոր արտօնութիւններն ունեցան նախապէս, մանաւանդ Մեծն Պետրոսի (1682—1725) և Կատարինէ Բ.ի (1762—1796) ժամանակ, բայց ետքէն այս արտօնութիւնները խզուեցան և անոնց փոխարէն Պօղոժեւնիէ կամ Բաշաժեւնիա կոչուած կանոնադրութիւնը տրուեցաւ (11 Մարտ 1836):

94. Իսկ Պարսկաստանի Հայերն՝ ոչ մէկ արտօնութիւն չվայելելէ զատ՝ մոլեւանդ Պարսիկներու կողմէ հալածուեցան անդադար, և տանջանքներով ու մահուան սպառնալիքներով մահմետականութեան մղուեցան: Սակայն պէտք ենք խոստովանիլ թէ Պարսկաստանի Հայերն իրենց առջի վիճակէն անհամեմատ աւելի երջանիկ են հիմա:



ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Պատմած .— ՌՌՍԱՀԱՅՈՅ ՆԵՐՔԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ռուսաստանի մէջ Հայերու վայելած արտօնութիւններու բուն թուականը կ'սկսի այն օրէն՝ երբ Մեծն Պետրոս կարեւոր արտօնութիւններ տուաւ անոնց (1708): 1746ին Ռուսաստանի Մերակոյտն Աստրախանի մէջ քնակութիւն հաստատած Հայերն արտօնեց իրենց ազգային օրէնքներով կառավարուիլ: 1765ին Կատարինէ Բ.

կայսրուհին միևնոյն արտօնութիւնը չնորհեց Նոր-Նախի-
ջիւանի Հայերուն: Բայց այս բոլոր արտօնութիւնները
կամաց կամաց սահմանափակուեցան և վերջապէս գոր-
ծածութենէ դադրեցան, որոնց փոխարէն հաստատուե-
ցաւ Պօթմէնիէ կամ Բաշաթէնիս կոչուած ազգափնաս
կանոնադրութիւնը:

1826ին Երևանեան նահանգը Պարսից ձեռք էր դեռ:
Նոյն տարին՝ Պարսիկները ռուսական սահմանակից գա-
ւառներու վրայ յարձակելով գրաւեցին. բայց ռուս բա-
նակը, հայազգի զօրավար Մաղաթեանի առաջնորդու-
թեամբ պարսկական զօրքերը ջարդելէ ետք՝ գրաւուած
գաւառներն ալ ետ առաւ: Ասոր վրայ Թիֆլիսի առաջ-
նորդ Ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպոսը (յետոյ՝ կա-
թողիկոս) հայկական զօրագունդ մը կազմելով՝ մէկ ձեռքը
խաչ բռնած և միւս ձեռքը սուր՝ 17 Մայիս 1827ին Թիֆ-
լիսէն ձամբայ ելաւ դէտի պատերազմի դաշտը: Պատե-
րողմին արդիւնքը շատ նպաստաւոր եղաւ Ռուսերու,
որոնք նորանոր գաւառներու տիրացան: Այս գաւառները
վերածուեցան մասնաւոր նահանգի, որ 21 Մարտ 1828ի
հրովարտակով՝ Հայոց աշխարհ կոչուեցաւ և Ռուսաց ինք-
նակալն իր բազմաթիւ տիտղոսներուն վրայ «Հայոց թա-
գաւոր» տիտղոսն ալ աւելցուց:

Հայոց աշխարհի կառավարութեան համար, Ներսէսի
մասնակցութեամբ, ժամանակաւոր վարչութիւն մը կազ-
մուեցաւ, բայց Ներսէս երբ յիշեցուց որ պատերազմէն
առաջ կատարուած համաձայնութեան համեմատ «Հայոց
աշխարհ»ը պիտի տրուէր Հայերու և Ռուսական զերիշ-
խանութեան տակ հայկական ինքնօրինութիւն պիտի
հաստատուէր, Փասքելիչ զօրավարը Ներսէսը Բեսարա-
բիայի առաջնորդ նշանակել տալով՝ Կովկասէն հեռա-
ցուց:

Հարցարան.— 93. Ռուս կառավարութեան տակ ի՞նչ ունե-
ցան Հայք:— 94. Պարսկաստանի Հայերը: Անոնց վիճակն ի՞նչ է
հիմա:— Ռուսահայք ի՞նչ արտօնութիւններ ձեռք բերին: Ի՞նչ է
Երևանեան նահանգի հայկական իշխանութեան պատմութիւնը:


ԽԸ. ԴԱՍ — ԱԶԳԻՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ

95. Հայոց ազգն երեք գլխաւոր բաժանումներ
ունի, որոնց իւրաքանչիւրը զատ եկեղեցիի կամ
դաւանութեան կը պատկանի: Առաջինը կը ներ-
կայացնէ Ազգային կամ Հայաստանեայց Եկե-
ղեցին, որուն սխալմամբ «Լուսաւորչական» անու-
նը կուտան ոմանք. երկրորդը՝ Հռոմէական կամ
Կաթողիկ եկեղեցին, և երրորդը՝ Բողոքական Ե-
կեղեցին:

96. Ասոնցմէ դուրս Յունական եկեղեցիի յա-
րած մաս մը Հայեր ալ կան, որոնք թէեւ հայե-
րէն կը խօսին բայց դաւանանքով Յոյն են և կը
կոչուին՝ Հայ-Հռոմ: Պէտք ենք յիշել նաեւ ազ-
գին այն մասը, որ բռնակալութեան ատենները
իւր կրօնքը փոխելով Մահմետական դարձած է,
բայց ազգային սովորութիւնները պահած է մա-
սամբ:

Պատմած. — ՀՌՈՄԷԱԿԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Մեր Ռուբենեան հարստութեան ժամանակ մաս մը
Հայեր զանազան նկատումներով մայրենի եկեղեցիէն



ՄԻՒԹԱՐ ԱԲԲԱՅ

բաժնուեցան և Հռոմէական եկեղեցիի ծոցը մտան : Այս բաժանումն աւելի սուր կերպարանք ստացաւ և բաժնուողներու թիւն աւելի շատցաւ՝ երբ Ունիթորք կամ Միաբանողք կոչուած լատին կրօնաւորներ Հայաստան արշաւեցին և Հայաստանեայց եկեղեցին Հռոմէական եկեղեցիին հետ միացնել ուղեցին : Ասոր վրայ անընդհատ վէճեր ու ցաւալի ընդհարումներ տեղի ունեցան, որոնք

տեւեցին մինչև անցած դարուն առաջին քառորդը (1820), բայց «Հրաւէր Սիրոյ» անուն տեսարակին հրատարակութեամբ երկու հասարակութեանց մէջ միութիւն կնքուելով՝ կռիւներու վերջ տրուել որոշուեցաւ . և սակայն քիչ ժամանակէն նոր խռովութիւններ պայթեցան, տեւելով մինչև նոյն դարուն կէսերը (1846), որ ժամանակ Հռոմէական Հայերու լուսաւորեալ երիտասարդներէն կազմուեցաւ Հանագգեաց Ընկերութիւնը, նպատակ ունենալով իրարու մօտեցնել դաւանանքով տարբեր բայց ազգով մէկ բոլոր Հայերն և Տաճկաստանի Հայոց մէջ ուսում ու երկրագործութիւն տարածել :

Հռոմէական Հայերու կողմէ մեր ազգային պատմութեան ու գրականութեան տրուած մղումն և անհամար օգուանները պէտք ենք երախտագիտութեամբ յիշել ամէն ժամ, առանց մոռնալու Վենետիկի ու Վիեննայի Մխիթարեան Միաբանութեանց անուններն ու մանաւանդ իրենց հիմնադիր Սեբաստայի Մխիթար արքան :

Գալով Բողոքական Հայերու, ասոնց երեւումը դեռ նոր է և կ'սկսի անցած դարու առաջին քառորդէն :

Բողոքականութիւն մեր մէջ մտնելուն պատճառ դարձան Ամերիկայէն Զմիւռնիա և Կ . Պոլիս զրկուած Միսիօնարները կամ Քարողիչները, որոնք դպրոցներ բացին, այն ատենուան աղաւաղ աշխարհաբար լեզուն մաքրեցին ու կոկեցին, և Ս . Գիրքն աշխարհաբարի վերածելով՝ ձրիապէս տարածեցին ամէն կողմ : Ասոնցմէ դուրս սկսան դպրոցական զանազան ընտիր գրքեր հրատարակելով՝ կրթութեան գործին ալ սատարել :

Հարցարան.— 95. Քանի՞ գլխաւոր բաժանում ունի հայագրը, եւ որո՞նք են : — Ասոնցմէ դուրս որոնք կան դեռ : ≡ Խնչպէս ծնունդ առին Հռոմէական Հայերը, եւ ի՞նչ գիտէք իրենց մասին : Թնչպէս ծնունդ առին Բողոքական Հայերը, եւ ինչ գիտէք իրենց մասին :

ԽՅ. ԴԱՍ — ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԸ

97. Տաճկաստանի մէջ դտնուող Գրիստոնեաները բռնակալութեան շրջանին մշտական հալածանքներու ենթարկուած ըլլալով՝ ստիպուեցան Եւրոպա դիմել և կառավարութեանց միջամտութիւնը խնդրել: Այս միջոցին Հայերն ալ Կ. Պոլսի ազգասէր Պատրիարք Ներսէս Վարժապետեանի միջոցով միևնոյն դիմումները կատարեցին և Պէրլինի Դաշնագրութեան ՅՂԳ յօդուածը ձեռք բերին:

98. Այս յօդուածը կ'ըսէ. «Բարձրագոյն Իուռը յանձն կառնէ — առանց այլ ևս յապաղման — Հայոց բնակած դաւառներուն մէջ տեղական պէտքերուն պահանջած բարւոքումներն ու բարեկարգութիւնները գործադրել, և իրենց ապահովութիւնն երաշխաւորել Բիւրտերու ու Չէրքէսներու դէմ: Չեւք առնուած միջոցներու մասին Բ. Իուռը տեղեկութիւններ պիտի տայ պետութեանց, որոնք անոնց գործադրութեան պիտի հսկեն:»

Պատեալ. — ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մինչդեռ Կ. Պոլիս նստող հայ մեծատուններն ու բախութեան ու կերուխումի տուած էին անձերնին, անդին՝ հայաբնակ դաւառներու մէջ՝ բռնակալութեան սար-



ՆԵՐՍԷՍ ՎԱՐՉԱՊԵՏԵԱՆ

քած բարբարոսային հալածանքները, բռնի կրօնափոխութիւնները, բայցարձակ կերպով անպատիժ մնացած աւազակութիւնները բռնակալութեան զրգուժով և իր աչքին առջև կոտորուած մասնակի ջարդերն ու դեռ ուրիշ անհամար խժոժութիւններ կը շարունակուէին անդադար: Այս անտանելի վիճակին դարման մը գտնելու համար Հայերն ստիպուեցան իրենց ազազակները բարձրացնել և հասցնել Եւրոպա: Եւ ահա ծագեցաւ Հայկական Խնդիր կոչուած դիւանագիտական հարցը:

1878ին էր երբ Տաճկաստանի և Ռուսաստանի միջև տարի մը առաջ բացուած ահազին պատերազմը վերջ կը գտնէր և Այ-Սիլէֆանոսի մէջ, ուր բանակած էին Ռուսք, եւրոպական դեսպաններու ներկայութեամբ հաշտութեան դաշինք կը կնքուէր (3 Մարտ 1878), Կ. Պոլսի անվեհեր և ազգասէր Պատրիարքը՝ Ներսէս վարժապետեան՝ Հայոց կրած տառապանքները նոյն Դեսպանաժողովին ներկայացնելով դարման խնդրեց: Ժողովը Հայոց խնդիրը նկատի առնելով՝ կնքուած Դաշնագրութեան մէջ 16րդ յօդուածն աւելցուց, որ կըսէ. «Որովհետև ոռուս զօրքերու կողմէ Հայաստանի մէջ գրաւուած բայց Տաճկաստանի վերադարձուելիք երկիրներն երբ ոռուս զօրքերը պարպուին՝ հոն կրնան չփոխութիւններ ու բարդութիւններ յառաջ գալ և երկու պետութեանց բարեկամական յարաբերութիւնները վտանգել, Բարձրագոյն Դուռը յանձն կ'առնէ — առանց այլ ևս յապաղման — Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պետքերուն պահանջած բարեօքումներն ու բարեկարգութիւնները գործադրել, և իրենց սպանովութիւնն երաշխաւորել Գիւրտերու ու Չէրքէսներու դէմ:»

Այ-Սիլէֆանոսի մէջ կնքուած Դաշնագրութիւնը՝ Անգլիայի կողմէ Ռուսաստանի շատ նպաստաւոր համար-

ուելով, առաջարկուեցաւ ուրիշ Դեսպանաժողովի մը մէջ նորէն քննել խնդիրը. և գործը հանուեցաւ Պէրլինի մէջ գումարուած նոր Դեսպանաժողովին (13 Յունիս — 13 Յուլիս 1878):

Ներսէս Պատրիարք իմանալով որ Պէրլինի մէջ նոր Դեսպանաժողով պիտի կազմուի, անմիջապէս Խրիմեան Հայրիկ ու Խորէն Նար-պէյ սրբազանները՝ Ստեփան Փափազեանի ու Մինաս Չերազի ընկերակցութեամբ Եւրոպա շրկեց, Հայոց ցաւերը ներկայացնելու համար. և Պէրլինի Դաշնագրութեան կրճատուած Յարդ յօդուածը ձեռք բերուեցաւ: Այս նոր յօդուածը կըսէ. «Բարձրագոյն Դուռը յանձն կ'առնէ — առանց այլ ևս յապաղման — Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պետքերուն պահանջած բարեօքումներն ու բարեկարգութիւնները գործադրել, և իրենց սպանովութիւնն երաշխաւորել Գիւրտերու ու Չէրքէսներու դէմ: Այս մասին ձեռք առնուած միջոցներու վրայօք Բ. Դուռը պարբերաբար տեղեկութիւններ պիտի տայ պետութեանց, որոնք անոնց գործադրութեան վրայ պիտի հսկեն:»

Այս յօդուածն ալ սակայն չկրցաւ արգիլել բռնակալութեան հալածանքներն ու անօրէնութիւնները:

1908ին Տաճկաստանի մէջ մեծ փոփոխութիւն մը եղաւ. այն է՝ 1876ին Գրիգոր Օտեանի աջակցութեամբ Միաձայն փառայի կազմած Սահմանադրութիւնը վերափոխուած փառայի կազմած Սահմանադրութիւնը վերահաստատուեցաւ, բանտերու դռները բացուեցան, աքսորականներն ու փախստականները ևս դարձան, հաւասարութիւն հռչակուեցաւ և բռնակալութեան տապալմամբ երկիրն սկսաւ շունչ առնել:

Այսօր Տաճկաստան Սահմանադրական երկիր մըն է, ունի Երեսփ. Ժողով և Ծերակոյտ որոնք կը անօրինակ երկիրն գործերը, և հպատակ ազգերը, ընդ որս նաև

Հայերը, նախորդ հալածանքներէն ազատած ըլլալով, համեմատաբար հանգիստ ու ապահով կ'ապրին:

Հարցարան.—97. Քրիստոնեաներուն վիճակն ի՞նչ էր բռնակալութեան շրջանին: Հայերն ի՞նչ ըրին ևւ ի՞նչ արդիւնք ձեռք բերին: — 98. Ի՞նչ վիճակի մէջ էին Հայերը զաւառներու մէջ: == Ի՞նչպէս ձեռք բերուեցան նախ 16րդ եւ յետոյ 61րդ յօդուածները եւ ի՞նչ կը տրամադրեն: Ի՞նչ եղաւ 1908ին Տաճկաստանի մէջ, եւ ի՞նչ արդիւնք ունեցաւ Հայոց համար:



ԿԻԼԿԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա Ն Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Է Կ Ա Ր Դ Ա Լ

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆԻ

Լ Ե Ի Ո Ն Ե. Լ ՈՒ Ս Ի Ն Ե Ա Ն

Վ Ե Ր Չ Ի Ն Թ Ա Գ Ա Ի ՈՐ Հ Ա Յ Ո Յ

Ա Շ Ի Ա Տ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Մեր Ռուբենեան հարստութեան կործանման պարագաներն ու Հայոց վերջին թագաւորին կեանքը մանրամասն կերպով պատկերացնող այս աշխատութիւնը, որուն համար երկար տարիներ զոհած է հեղինակը, լոյս տեսած է:

Գրքին մեծութիւնն է Հ. Ղ. Ալիշանի «Շիրակ» և այլ տեղագրութեանց դիրքով, և կը բաղկանայ Լ + 168 երեսներէ, բաղմամբիւ պատկերներով զարդարուած: Այս պատկերներէն երեքը բնագրէն դուրս են և գունաւոր, մանաւանդ Լեւոնի դամբարանի պատկերը, որ տպուած է թէ՛ բաղմագոյն և թէ՛ ոսկիով ու արծաթով, ինչպէս եղած է իսկականը: Աւելորդ է ըսել թէ այս դամբարանն այժմ գոյութիւն չունի, որուն պատճառները բացատրուած են գրքին մէջ: (Իբրև գրասենեակի և դահլիճի զարդ՝ կարելի է առանձին ալ ձեռք բերել այս պատկերէն, որուն գինն է՝ 2 ֆրանք): Ուշադրութեան արժանի է նաև Լեւոնի մինչև հիմա անտիպ ֆրանսերէն երկու անդորրագրերու նմանահանուած պատկերը, վա-

ւերացուած իր իսկական կնիքով: Այս տեսակ անտիպ և հազուադիւս վաւերագրերու թարգմանութիւններ պակաս չեն գրքին մէջ, և ընթերցողը զանոնք կարդալով կրնայ գաղափար մը կազմել գրքին պատրաստութեան համար տարուած խղճամիտ աշխատութեան մասին:

Լեւոնի կենսագրութենէն ու ժամանակակից դէպքերէն դուրս՝ ընթերցողը կը գտնէ նաև Ռուբենեան հարստութեան սկզբնաւորութենէն մինչև Լեւոն Ե. անցած չրջանի ամիոփ մէկ տեսութիւնը, ինչպէս և Լեւոնի մեռնելէն ետք Հայոց թագաւորութեան անուանական շարունակութեան մասին շատ հետաքրքրական վաւերագրեր ու տեղեկութիւններ:

Տպագրութիւնը կատարուած է շատ ընտիր թղթի վրայ և խիստ ճաշակով:

ԳԻՆՆ Է՝ 10 ՖՐԱՆԿ

Դիւնը ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏՈՒՆ

Գրքին բովանդակութեան մասին գաղափար մը տալու համար, այստեղ կը դնենք գլուխներու և պատկերներու ցանկերը:

ՅԱՆԿ ՔԼԵՈՅ

Յառաջարան: — Ա. Կեղեստինեանց եկեղեցին: — Բ. Ս. Պօղոսի եկեղեցին և պալատը: — Գ. Տուրնէլի պալատը: — Դ. Սէն'տ-Ուէնի պալատը: — Ե. Կիլիկիայի հայ թագաւորութիւնը և մեր խնամութիւնը Լուսինեաններու հետ: — Զ. Լուսինեանները: — Է. Հինգ թէ երկու լատին թագաւոր: — Ը. Գուրտոնէն մինչև Լեւոն

Ե.: — Թ. Լեւոնի ծագումը, ամուսնութիւնն ու թագաւոր պսակուիլը: — Ժ. Լեւոնի թագաւորութիւնը: — ԺԱ. Լեւոնի գերութիւնը: — ԺԲ. Լեւոնի ազատութենէն մինչև Սպանիա հասնիլը: — ԺԳ. Լեւոն ի Սպանիա. Տանուտէր Մադրիդի, Վիլլարէալի և Անդուխարի: — ԺԴ. Լեւոն ի Պարիս: — ԺԵ. Լեւոն ի Լոնդոն: — ԺԶ. Լեւոնի վերադարձն ի Պարիս: — ԺԷ. Լեւոնի մահն ու թաղումը: — ԺԸ. Լեւոնի կտակը: — ԺԹ. Լեւոնի շիրիմն և անոր աւրուիլը: — Ի. Լեւոնի հիմակուան գերեզմանը: — ԻԱ. Ո՛րք են ոսկորները: — ԻԲ. Հայոց թագուհիին գերեզմանը: — ԻԳ. Լեւոնի հարազատ և անհարազատ զաւակները: — ԻԴ. Լեւոնի սուրն ու թագը: — ԻԵ. Լեւոնի զբամները: — ԻԶ. Զինանշանք, կրնիք և ձեռնագիր Լեւոնի: — ԻԷ. Լեւոնի պատկերն ու կիսարձանը: — ԻԸ. Կորոլոս Դ. Գերման կայսեր թղթին առթիւ: — Ա.ԶԳԱՅՈՒՅԱԿ Հայկական Կիլիկիայի թագաւորներու: — ՅԱԻԵԼՈՒՄԾ. Լեւոնի մեռնելէն ետք Հայոց թագաւորութեան շարունակումը:

ՅԱՆԿ ՊԱՏԿԵՐԱՅ

Լեւոնի կիսարձանն ու ստորագրութիւնը: — 1. Կեղեստինեանց զօրանոցը: — 2. Կեղեստինեանց եկեղեցին: — 3. Տուրնէլի պալատը: — 4. Ս. Պօղոսի եկեղեցին: — 5. Լեւոն Ե. թագաւոր Հայոց, Տանուտէր Մադրիդի, եւայլն (սպանիական աղբիւրէ): — 6. Յովհաննէս Ա. թագաւոր Կաստիլյայի: — 7. Սիս, վերջին մայրաքաղաք Հայոց: — 8. Լեւոն Ե-ի զբամները: — 9. Պետրոս Դ. թագաւոր Արագոնի: — 10. Լեւոն Ե-ի զինանշանները: — 11. Լուվրի պալատը: — 12. Լեւոն Ե. (ըստ «Մաս-

եաց Աղաւնի»ի): — 13. Կարօլոս 2. թագաւոր Ֆրանսիայի: — 14. Լեւոն Ե.ի կիսարձանը (Վերսայի թանգարանէն): — 15. Հռիփարդ Բ. թագաւոր Սնգլիայի: — 16. Սէն-Դընիի արքայարանը: — 17. Գեանադամբանք, ուր կը պահուին Լեւոնի ոսկրները: — 18. Լեւոն Ե-ի սուրբ: — 19. Ստորագրութիւն Լեւոն Ե-ի: — 20. Կնիք Լեւոն Ե-ի:

ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ

- 1 — Գաբրիէլ Էզնայեան
- 2 — Դամբարան Լեւոնի Ե. Լուսինեան
- 3 — Երկու նմանաձանուած անդորրագիր Լեւոնի

ԿՈՂՔԻՆ ՎՐԱՅ

Լեւոնի ստորագրութիւնն ու կնիքը
Լուսինեան Դղեակն, այժմ աւերակ, ի Պուատու
(Ֆրանսա):



Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ	Տող	Մխալ	Ուղիղ
33	6	Արտամէսը	Արտանէսը
85	21	«Լ»ը վերցնել	
91	2	Հայոց	Տայոց
91	3	Խորքեանք	Խորձեանք
91	3	Անժխտ	Անձխտ
114	2	Կողմը	հողը
114	24	Բազու	Բաչու
122		«Հայոց զաղթը»	Դաւիթ-Բէկ
126	13	խղուեցան	խլուեցան
131	20	Բողոքականութիւն Բողոքականութեան	
134	21	զօրքերը	զօրքերէ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒ

Ե Ի

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆԻ

Ա Ն Ի Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Ա Լ Բ Օ Մ Ը

որ կը բովանդակէ

ԱՆԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԷՆ 24 ԿԱՐԵՒՈՐ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

խիստ մաքուր տպուած

ԵՒ ՔԱՂԱՔԻՆ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

հայերէն ու ֆրանսերէն լեզուներով գրուած

պատմական-տեղագրական ծանօթութիւններով

ԳԻՆՆ Է՛ 10 ՂՐՇ.

Կը գտնուի ՊԱՆՆՅ ԳՐԱՏՈՒՆԸ

« Ազգային գրադարան



NL0412154

ՀՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆՆԵՐ

3. Գազանեան, Նոր Յերևանութիւն Սրբի Հայերէն Հեղձիկ Տարր. Գաւրնթացք
Իւրջն »
Տարձր. և լրացուցիչ»

4. Յ. Բաւակոյեան, Նոր Գոսաղթիք Հայոց Պատմութեան, Բ. տարրի
Հնդարձակ Բաժնոյ տակ է

LE FRANÇAIS, Cours complet pour l'enseignement direct de la langue française
I partie
II »
III »

Եւ իւր 3 տարրնեցուն բանալին մասնոյ տակ է

Մ. Ն. Գարեան, Բառալու տուած և Յրօժեա-Հայ Գոյիտն Լուսինեան, Բարասրան Յրօժեալն յ. կրկ. թգ՛ակագրմ
Նոյնին կրօնագրմ»

Ը. Basmadjian, Essai sur l'histoire de la littérature Ottomane, մասնոյ տակ

Գ. Zoubou, Correspondance et terminologie commerciale Français-Turc